

Է. ՀՈՎՀԱՆՆԵՍ



ԱՅՐԻ

Օ. ՏԱՎԻՐ

Մարիկ-Բայիս

ԾՐԻԱԾԻԿ

Պահօնական պատճեր  
Հազրագետական աթուղթ  
Ա. Ե. ԳՈՒՐԳԱՆՅԱՔ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

1. Ամենայն Հայոց Կարողիկոս Գևորգ Զի անդրանիկ կոնդակը .	3
2. Ամենայն Հայոց Կարողիկոս Գևորգ Զի անդրանիկ աշխարհաբար կոնդակը . . . . .	6
3. Հաճուն հայ մշակույթի զարգացման . . . . .	11
4. Կիլիկիո Կարողիկոս Գարեգին Ա. հայ ժողովրդի և հայ մշակույթի մասին . . . . .	15
5. ՄԱՅՐ ԱԹՈՌ . . . . .	17
6. Հ. ՔՅՈՒՐՏՅԱՆ.— Գողցուած ձեռագիրներ . . . . .	19
7. Նացիները Արտաշես Արեղյանի աջակցությամբ ինչպես կողոպատեցին Նուպարյան մատենադարանը . . . . .	24
8. Պրոֆ. Ա. ԱԲՐՍՅԱՆՅԱՆ.— Հայ կուլտուրայի զանձարանը . . . . .	25
9. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ.— Հնագույն կուլտուրայի օջախը . . . . .	33
10. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՄԱՍՅԱՆԻՑ . . . . .	35
11. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ . . . . .	42
12. Ե. ՇԱՀԱԶԻՅ. — Գամառ-Քարիպայի անտիպ ճամակներից . . . . .	50
13. ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ . . . . .	54
14. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ . . . . .	61
15. ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿՅԱՆՔ . . . . .	73

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. Գ Ե Ո Ր Գ Ա Յ Զ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲՁՆԱԴՈՅՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԼՈՐԴ ԶԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

ԳԼՈՐԴ ՇԱՌՈՅ ՅԻՍՈՒՏԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐ ՄՈՒԹԵԱՄԲԻ ԱՍՏՈՒՇՈՅ ԵՒ ԿԱՄՈՔ ԱԶ-  
ԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՎԳԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԱՅՐԱԴՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք  
ՀԱՄՄԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՇԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՄՐԲՈՅ ԷՃՄԻԱՅՆԻ

Շնորհազարդ Կարողիկոսի Տաճն Կի-  
լիկոյ Տ. Գարեգին՝ Մրգան եղրօն Մե-  
րում հարազատի. Ամենապատի Պատրիար-  
քին Երուսաղէմի՝ Տ. Կիւրի Արքեպիսկո-  
պոսի և Տեղապահի Պատրիարքուրեան Կ.  
Պոլսոյ՝ Տ. Գևորգյ Արքեպիսկոպոսի, Գե-  
րազատի. Առաջնորդաց, Արքեպիսկոպոսաց,  
Ֆախիսկապոսաց, Վարդապետաց, Քահանա-  
ցից, Մարկոսաց և ամենայն պաշ-  
տօնէից Եկեղեցւոյ և հաւատացեալ համայն-  
ժողովրդեան Մերում հարազատից Մայր  
Արքոյ Ս. Էջմիածին ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱՎԿԱՆ  
ԵՒ ՕԲՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՓԵՏԱԿԱՆ:

Այսու ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԱՆ ՄԵՐՈՎ  
յայտ առնեմմ ամենայն ժողովրդեան Հա-  
յաստաննայց Նկեղեցւոյ ի Խորեղային  
Հայաստանի և ի Խորեղային Միուրեան,  
որպէս և հաւատացելոց, որ սփռեալ են ի  
Պարսկաստան, ի Հնիկոս, յիշաք, ի Սիւրիա  
և Լիբանան, ի Պաղեստին և յեղիպտոս, ի  
Յունաստան, ի Բուլղարիա և ի Ռումանիա, ի  
Յանաչիա, ի Միացեալ Նախանգա և ի Կա-  
նադա, ի Հարաւային Ամերիկա, յԱրգենտին  
և ի Բրազիլիա և յայլ տեղիս, երէ ի 22-ն  
յունիսի՝ ընդ նախազահուրեամբ Շնորհա-  
զարդ Կարողիկոսին Տաճն Կիլիկիոյ՝ ԿԱՏԱ-  
ԲԵՑԱՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ յԱրոն Ս. Լուսա-  
ւորչի՝ ՄԻԱԲԱՆ ՀԱԽԱՆՈՒԹԵԱՄԲ համօրէն  
111 պատգամաւորաց, որք ժողովեալ էին  
ի Ս. Էջմիածին, ի մերսէ աշխարհէս և յայ-  
լոց Պետուրեանց յընտրութիւն նորոյ Կա-  
րողիկոսի: Իւկ յետ երկուց աւուրց՝ ի 24-ն  
նոյն ամսոյ ընկալաք զօնումն Հայրապե-  
տական ի ծնն Կարողիկոսին Կիլիկիոյ և  
հնգից եախսկուպոսաց ըստ ծիսի և աւան-  
դուրեան Հայաստաննայց Եկեղեցւոյ:

Զայս Եկեղեցական-Ազգային ժողով հա-  
մարիմ արտաւոյ իմն կարգի ի պատմու-

թեան մերում, զի զայս առաջինն յընտրու-  
թիւն և յօնումն Կարողիկոսի Ամենայն Հա-  
յոց Եկեղեցւոյ իմն Շնորհազարդ Կարողիկոսն  
Տաճն Կիլիկիոյ հանդերձ Եկեղեցական և  
աշխարհիկ պատգամաւորօք իւրովք, որպէս  
և Ամենապատի. Պատրիարքն Հայոց Երու-  
սաղէմի և Տեղապահն Պատրիարքուրեան  
Հայոց Կ. Պոլսոյ, որով առաւել ևս հաստա-  
տեցաւ միասնականութիւն Եկեղեցւոյն Հա-  
յոց:

Արտաքոյ կարգի են ապամէն և ներկա-  
յուրիւն նախազահին Խորեղայի համայն  
Դաւանուրեանց Խորեղային Միուրեան, որ  
յատկապէս Եկեղեցւոյ ի Մոսկվա մայրաքա-  
լանէ, սոյնապէս և ներկայութիւն նախազա-  
հին Խորեղայ Հայաստաննայց Եկեղեցւոյ:  
Ընդ որ գոհանամբ յոյժ և պատիւ մեծ հա-  
մարիմ Հայրապետական Արքոյն Հայոց:

Ի ժողովի աստ բննեցան բազումմ խրն-  
դիրք, որք հային ի Վերակազմութիւն Մեծի  
Տաճն, ըստ տնտեսականին և ըստ վարչա-  
կանին. հաստատեցաւ և նոր ՍԱՀՄԱՆԱ-  
ԴՐՈՒԹԻՒՆ ի տեղի Պոլոմէնիայի ըստ  
ոգոյ պատմական աւանդուրեանց Եկեղեցւոյ  
մերոյ և ըստ արդի հանգամանաց:  
Զպատճէնս արձանագրուրեանց ժողովոյ և  
զՍահմանագրուրեան ունիմմ առաւել առ  
ամենայն Առաջնորդս և առ Եկեղեցական  
Վարչութիւն Հայաստաննայց Եկեղեցւոյ՝  
ի գտուրիւն և յառաջամանակեայ կիրառու-  
թիւն:

Քանզի ի փոխադրուրենէ Ս. Արքոյն ի  
Սոյ յէջմիածին անցեալ էին աւելի ժան  
զ500 ամ, ուստի ժողովն բարւօք համարե-  
ցաւ զայս մեծ և պատմական իւրութիւն  
յաւերժացուցանել յորելինական հանդիսի.  
զայսամանէ տալով զիտել հաւատացելոց

մերոց՝ ունիմք արձակել գառանձինն Կոնդակ և երահանգստ այս ոռոշման:

Յերկրորդում նստի ընթերքաց Մեք զՏեղեկագիր ընդարձակ յաղագս նիւրական և բարոյական հանգամանաց Մ. Արոնոյս, տալով զանդեկուրիւն վասն նորոգ կարգադրութեանց Խորհրդային Կելրոնական Կառավարութեան ընդ ստորագրութեամբ բարեացագամ Խախագանի Բ. Վ. ՍՏԱԼԻՆԻ համաձայն գրաւոր խնդրանաց Մերոց, զնին ընդ տեսչութեամբ Արոնոյս բոլոր շինութիւնք, որ ի մէջ պարապաց և արտաքոյ նոցին. այն իսկ են շինութիւն նոր Վեհարանի, Ճնմարանի, Տպարանի և Միարանութեան և այլք: Ընկալեալ է Մեր իրաւուն բանալոյ տպարան՝ առ ի երատարակել զպաշտօնական ամսաթերթն «ՀՀՄԻԱԾԻՆ», զոր և տեսանել իսկ. և զայլ եկեղեցական մատեանս պաշտաման Հայաստանայցս Եկեղեցւոյ բանալ ՃԵՄԱԾԱՆ հոգեոր՝ առ ի պատրաստել պաշտօնեայս Եկեղեցւոյ: Արդէն իսկ ունիմք ժանի մի վարդապետու ի նախկին սահուց ճնմարանի և ներսիսեան դպրանցի. յորոց զոմանս ծեռադրեցաց յեպիսկոպոսութիւն վասն առաջնորդութեան բեմորէից և. Հայաստանի:

Հայտնեմք գուրախութիւն Մեր և զգոհունակութիւն հոգեոր ներօր Մերում Տ. Գարեգին՝ Շնորհազարդ Կարողիկոսի Տաճն Կիլիկիոյ, որ ընդ Եկեղեցական և աշխարհական պատգամաւորօց իւրով նպատաւոր եղել յոյժ միասնականութեան ՀաՅԱՍՏԱՆԱՅԱՅՑՄ Եկեղեցթոթ և բարձր տրամադրութեան ժողովականաց, և առնասարակ յաշող վերջաւորութեան ժողովայու ըստ ամենայն մասանց: Զեյն հայտնեմք և Ամենապատիւ Պատրիարքին Երուսաղէմի՝ Տ. Կիւրի և Տէղապահին Պատրիարքութեան և. Պոլսայ՝ Տ. Էկեղազ Արքեպիսկոպոսի Արքալանեան:

Օրենելով զեամայն ժողովաւրդ Մեր, զամենայն նախկոպասունս, զբանաց և զպաշտօնեայս Եկեղեցւոյ, պատուէր Հայրապետական տամբ և յորդոր հայրական, զօրացուցանել զեղուայրական սէր առ միմեանս, առ Եկեղեցին և առ Մայր Արքունորա, առ պատմական Հայրենիս և Խորհրդային Կառավարութիւն նորա, զի սէր է աղքիւր ամենայն նիւրական, բարոյական և մտաւոր յառաջադիմութեանց և բարգաւաճմանց: Միեւցեք զմայրենի իշգուն մեր, զգականութիւն և զպատմութիւն նախնեաց, որ շաղկապէ են միութեան և լրութեան ազգին. մանաւանդ ցրուեալ հօտին Մերոց ի Սփիւու: Յատուկ պատուէր տամբ վերջ-

նոցս, զօրացուցանել և կարգաւորել զդպրոցը, տալով զիայացի դաստիարակութիւն մանկաւուն, զարբուցանելով ի նոսա սէր առ մայրենի եկեղեցին. որով կարեմք պահել զամբողջութիւն և զմիասնութիւն Ազգին: Մի խզեցին մտաւու և նովելոր շաղկապէ առ պատմական Հայրենին, որ ծաղկեալ ժաղկի յամենայն մարզ ըստ ամենայն մտսանց ընդ նովանեալ և. Եշխանութեան:

Օրենեմք զազգայինն մեր Մամուլ և յորդարեմք հայրաբար գուն գործել զարբուցանել զփառակցութիւն և զաւր յայս միտս նդրայրական յարաբերութեան և կենաց:

Պատուէր տամբ հակ պանդխտեալ հայոց. որ ի Սփիւու՝ ինեն հաւատարիմ Պետութեանց յորոց գտեալ է նոցա սապճզականութիւն եղբայրական:

Աստանօր յիշել կամիմք և զպառակտեալ վիճակ եկեղեցւոյ մերոյ ի Միացեալ նահանգս, որ ցաւ է Մեզ և համայն ողջամիտ հայոց: Պատուէր տամբ, որոց անկ է, ԼՈՒՄԱՆԵԼ զամենայն ԱՆՁԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆ, որք չեն հաստատեալ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ իշխանութեամբ. պարտ է նոցա ըստ հոգեորին և ըստ վաշականին ենթակայ լինել Առաջնորդին՝ Տեառն Տիրան նորապասակ նպիսկոպոսին. իսկ ժամանակայից՝ խոստանալ ննազանդութիւն կատարեալ, որպէս վիճակաւոր Առաջնորդին իւրեանց, վերաբատատելով զմյութիւն պառակտեալ հօտին:

Զկարգաւորութիւն գործոյս յանձնեմք ի կատար ածել Տ. Տիրան նախկոպասի՝ հոգեոր զաւակի Մերում, ըստ մտաց Կոնդակիս:

Յուշ առեմք ժողովրդականաց Մերոց. րէ ուպիսի շարեաց աղբերէ են այդամիսի երկառակութիւնք ընդ յարկաւ եկեղեցւոյ. յորոց պարտ է զգուշանալ առ ի շինութիւն և ի պահպանութիւն Մայր Եկեղեցւոյ:

Բայց ունիմք յայտնել և գուրախութիւն մեծ, երէ յաղբական վախճան ահաւոր համաշխառային պատերազմիս ըստ առանձիւ շափու և կարողութեան մասնակիյ եղել և ազգ մեր համայն առաքելով զորդիս իւր ընդդէմ նախայարձակ թշնամոյն: Բազում հայազգի զօրավարք և գունդի կազմեալք ի հայոց, որպէս և առանձիւն զինուրական ի զանազան մասուն զօրաց, ժառանգեցին զանուն բաշուրեան և զիերութեան, բարձրացուցանելով զանուն Ազգին ի հերոսական Կարմիր Բանակին և ի նամայն և. Միութեան: Իսկ մնացեալ բաղադրացիք և. Հայաստանի բերին զշան և զաշ-

խատան օգնական լինելով յաղրուրեանն  
հիթական և բարոյական օժանդակու-  
րեամբ:

Յաւելում աստանօր, թէ առ այս զործ  
նուիրական ի պաշտպանուրիւն Հայրենեաց  
ոչ միայն բաղաբացիք և. Միուրեան ցուցին  
զրոյուրանուէր սէր և զիամակուրիւն, այլ և  
հասուածք և զարուրք յարտասահմանեան  
Պետուրիւն՝ ըստ յուղորանաց Մերոց՝ ցու-  
ցին զնոյն սէր և զիամակուրիւն, առանելով  
դրամական նուէրս ի կազմուրիւն Տանկաց  
Սասունցի Դաւրի և այլ օճանդակուրիւնն  
կուրմիր Թանակին:

Յայտնելով զգոհունակուրիւն Մեր զայս  
զործոյ հայրենասիրուրեան՝ ցանկամբ և  
հաւատամբ, զի և յայսմետէ զնոյն փոյր  
և եռանդն ցուցցեն ի շինարարուրեան մե-  
րոց Հայրենեաց բանիւ և զործով:

Պատգամաւորք Եկեալի ի հեռաւոր վայ-  
րաց՝ տեսին աչօք իւրեանց զսեանչիլ բար-  
գաւանումն նորաբողբոց Հանրապետուրեանս  
Հայաստանի, տեսին զնիւրական շինարա-  
րուրիւն մայրաքաղաքին. զբնդարձակ ծա-  
ռազարդ պղոտայս և զեարարապետական  
գեղեցիկ և հոյակապ շինուրիւնս վասն պե-  
տական հաստատուրեանց և բնակուրեանց  
բաղաբացեաց, տեսին զրէատրոնն փա-  
ռաւոր, զնունն Խորենի. զիամակարանա-  
կան բաղամասն, զբազմատեսակ նիւան-  
դանցու, զկարգաւորեալ և զնոյն Թանգա-

րանս՝ պատմական, գեղարուեստական,  
զշանրային գրադարան, զմին ի մեծազու-  
նից ի և. Խշանուրեան, զՁեռագրատունն  
կարգաւորեալ և նոյն, զպարձանս Ազգին,  
զշիմնարեկուրիւն զիտուրեանց և արուես-  
տից, զԱկաղեմիայն զիտուրեանց, զբազ-  
մանիւզ Համալսարանն. զկոմիտէն պահ-  
պանուրեան հնուրեանց. զերաջշտանցն և  
զդպրոց նկաշուրեան և այլն. զբարգաւա-  
նումն երկրազործուրեան և այզեզործու-  
րեան, զզործաւանական և արդիւնաբերա-  
կան հաստատուրեանց. տեսին զնորանաս-  
տառ ծալիեալ գաղուրաւանս Նոր-Արար-  
կիրի, Մալարիալի, նուրաբաշէնի և այլն.  
զայս ամենայն պարտական ևմ հովանաւո-  
րուրեան և. ՄինիթեԱն, յանդամոց որու-  
մին է և և. ՀԱՅԱՍՏԱՆ:

Մաղրեմբ զի առաւել զօրացի Խորենիցա-  
յին Խշանուրիւնն ոչ միայն յօգուտ ազգաց  
Միուրյան. այլ և վասն խաղաղուրեան,  
ազատուրեան և բարօրուրեան հանուր  
մարդկուրեան:


Ի վերջ բանիս վերստին օրինելով զհա-  
մայն ժողովուրդն Հայոց աղօրս մատուցա-  
նեմբ առ Բարձրեալն վասն խաղաղուրյան  
ամենայն աշխարհի և հաստատուրեան նըրոյ  
եկեղեցւոյ, զի ի խաղաղուրեան ծնանի բա-  
րօրուրիւն ազգաց, ի խաղաղուրեան զօրա-  
նան կրօն և եկեղեցի:

ՇՆՈՐՀՔ ՏԵԱՌԻ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻ ԸՆԴ ԶԵԶ ԵՎ ԸՆԴ ԱՄԵՆԵ-  
ՍԵԱՆ. ԱՄԷՆ:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ

84-002 28

Կրեցաւ անդրանիկ Կոնդակս օրհնութեան  
ի 1-ն Ապրիլի 1946 ամի Փրկչական և  
բայս Տոմարիս ՌՅԴ  
ի Ա. ԷԶՄԻԱՍԻՆ



## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ԶԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԿՈՆԴԱԿԸ

ԳԵՎՈՐԳ ՇԱՌԱՅ ՅԻՍՈՒՏԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԻ ԱՍՏՈՒՇՈՅ ԵՒ ԿԱՄՈՔ ԱԶ-  
ԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՓԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք  
ՀԱՄԱԳՈՎԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԽԱՐ ԱԲՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՋԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՆ  
ՄՐԲՈՅ ԷՇՄԻԱԾՆԻ

համայն հոգեոր դասուն և ամենայն ժողովրդյան նուիրե ողջույն հայրական և Օրինուրյուն Հայրապետական:

Մեր այս անդրածիկ Օրինուրյան Կոնդակով հայտնում ենք Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Միաւրյան, ինչպես և Սփյուռքի համայն Հայ ժողովրդյին՝ թէ 1945 թվի հունիսի 22-ին, Ս. էջմիածնի Լուսավորշակիմն Մայր տաճարում, Տաճն Կիլիկիո Շնորհազարդ Տ. Գարեգին Ա. կարողիկոսի նախագահուրյամբ գրամարված Ազգային-նկեղեցական ժողովը ԸՆՏՐԵՑ ՄԵԶ Ս. Լուսավորշի Հայրապետական Արորի ԳԱՀԱԿԱԼ՝ ժողովին ներկա եղող 111 պատգամավորների ՄԻԱԶԱՅՆ հավանուրյամբ: Նույն ամսի 24-ին ընդունեցինք Հայրապետական Օծումն՝ Հայաստանյաց նկեղեցվո ծեսի և ավանդուրյան համաձայն: Իինք եպիսկոպոսների և հաճդիսադիր Տաճն Կիլիկիո Շնորհազարդ Տ. Գարեգին կարողիկոսի ծեսով:

Հայ նկեղեցու հնավանդ սովորուրյան և կանոնների թելադրուրյամբ, նախիման Օծումն, ծունը դրի նշման սեղանի առաջ և ուխտեցի ցմահ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄՆԱԼ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ, անիսախտ պահպանել նորականները, դավանանքն ու ավանդուրյունները և անձնուիրուրյամբ ծառայել ՀԱՅ ժողովրդին և ՀԱՅՄԵՆԻՔՆՄ:

Ամենայն Հայոց Հայրապետի կոչումա, Ազգային-նկեղեցական ժողովի կատարյալ վատահուրյունը և հավատացյալ հոռիս ուկեվառ ակնկալուրյունները խորապես հուզում են սիրոս և ննջում հոգիս՝ զգացնելով ինձ պարտականուրյան առ պատասխանատվուրյան ծանրուրյունը:

Սարսուն եմ զգում հիշելով ծանր պարտականուրյունները և բազմապիսի հոգսե-

րը որ Ամենայն Հայոց Հայրապետի ուսերին է բարձած, և խորհում եմ՝ պիտի կարողական արդյոյք, ծերուրյանս հասակում, խղի մտոք կատարել պարտես. պիտի հաջողվի՝ արդյոյք ինձ՝ ներքեապես ու արտաքնապես հիմնալին ՎԵՐԱՆՈՐՈՂԵԼ հայ հնադարյան բանագարծել կորող՝ Ս. էջմիածնի ՄԱՅՐ ՏԱՅԱՐԸ:

Պիտի կարողանա՞մ արդյոյք նորարաց հոգեոր ենմարանը իր բարձրուրյան հասցընել՝ մատակարարելով Հայ նկեղեցուն արժանավոր հոգիվներ:

Պիտի կարողանա՞մ արդյոյք, որպես անկ է կազմակերպել Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Միուրյան և մանավանդ Սփյուռքի Հայոց Թեմերը, որ հայ ժողովուրդը հոգեպես միիրարված լինի, տնտեսական ծանր պայմանների դիմանա և օտարաշաբաններում, կուլտուրապես բարձր ժողովուրդների մեջ ապրելով՝ լուծվի և շանէնան:

Պիտի կարողանա՞մ արդյոյք եկեղեցական միասնականուրյան հետ զրացնել ու պահպանել հայ համազգային միուրյունը, որոնք զրեղ գրավականներ են մեր ազգի համերաշխ ապրելուն, զրահալուն և զարգանալուն:

Պիտի տեսնե՞մ արդյոյք օտարուրյան մեջ ցամ ու ցրիվ ընկած Հայուրյունը համախմբված իր հայրենին եկեղում՝ Խորհրդային Հայաստանի հշխանուրյան ներքո, որ աշխ խաղաղ գոցեմ, հոգուս ու մարմնիս հանգստ տամ և հայ ժողովրդի ողորմիսը լինմ:

Այս խոհերի մեջ՝ հիշում եմ Գերսեմանի պարտեզում, ներին հոգեկան մաքառումների և ծանր ապրումների ենրակա, աղորդ Փրկչի խոսերը՝ «Հոգիս հոժար է, բայց մարմինս տկար», սակայն նա Աստուծո օգ-

նուրյան ապավինած, նորա հոգով կազմութիւնած, հաղորդաբառում է իր մարմելի բուլուրյան և սիրով տանում իր խաչը: Այս այդ հոգին է հավատու հոգին, դեպի ազգն ու եկեղեցին տաճած սիրու հոգին և կոշման ու պարտիս գիտակցուրյան հոգին, որ պիտի կազդուր նաև իմ բուլու ուժերս, զորացն ինձ ու պարզերես ան Տիրոջ, Եկեղեցու և Հայրենիքու հանդեպ:

Իր մարմելի բուլուրյան հաղորդակող Փրկիչն է, որ այժմ կանգնած է աշխիս առաջ և հոգու մեջ նկարված և ձայնում է— Փրկիչ լուծը քաղցր է և նորա բեռը բերե: Նա է, որ բելադրում է պավակինել Տիեզերի Արարշի օգնուրյան, որ տնօրինում է մարդկանց բախտը, որ աջակցում է բարու և ծշմարտի հաղորդակին: Նա է, որ բելադրում է նաև պավակինել հայ միասնական Եկեղեցուն և ժողովրդին, հուսալ նորա խանդական ոգեսրության և համերաշխ գործունեուրյան, վստաբել նորա ոգեսրիշ խոսքերին և խոստուներին. որոնց կամքով ստանձնել եմ այս պատախանառու պաշտոնը: Եվ վերշապես հուսադրում է ինձ այն գիտակցուրյունը՝ թե՝ մենակ չեմ, այլ ունիմ յծակից վստահելի Արոռակիցներ և վստահելիք աշակիցներ՝ ի գեսմ Մրգազան Առաջնորդների և բարեշնորի Քահանայուրյան, որոնք կոչված են նույն զաղափարին ծառայելու և նույն պատախանառության ենքանակ և կատարյալ վստահուրյուն են ներշնչում իրենց համերաշխ գործունեուրյանք, որ հավատ և հույս է տալիս Մեզ, Մեր ապագա խոշոր ձեռնարկների հաջողությանը:

Եղբայրական սիրու ողջույնս Քեզ՝ Տաճն Կիլիկիո կարողիկասիլ, Տիրավանդ ողջույնս միաբանական Ուխտիդ և Հայրապետական Օրենուրյունս սիրեցյալ հոտիդ: Հոգին հերկում է տեսնելով Հայ Եկեղեցական Արոռների համերաշխ դիրքը և սիրո շաղկապը Մայր Արոռի հետ, որ Մեր օրով անշարժ առավել և պիտի զորանա, որով ազգի կողմից ուսերիս բարձած քաղցր, բայց ծանր լուծը պիտի բերեանա և դյուրանա կոշմանս հետ կապված պարտիս կատար-

անուրյան ապավինած, Արոռը զրկված է իր պատմական տեղերց, որ այնան հարուստ է հայ ժողովրդի կուլտուրական և պատմական հուշարձաններով, որոնց հետ անբակտելիութեան կապված է Կիլիկիո հայ ժողովրդը: Սակայն միաբանական է, որ այդ տարագիր և աստանդական Արոռը այսօր զառնում է

կայուն և հաստատուն: Առավել ևս ուրախ եմ, որ այդ Արոռը բազմել է Մեր հոգեկից հարազատ Եղբայրը՝ Տաճն Կիլիկիո Շնորհազարդ Գարեգին Ա կարողիկասը. Մեզ հետ միասին սնված ու դաստիարակված Ա. Եղմանին հոգին ենթառու համարանում: Երշանկաբիշատակ Դարգ Դ-ի և Հայոց Հայրիկի ազգասիրական, հայրենասիրական և կրոնասիրական զգացնութեան ներշնչված, նոյն զգացնուկ և բնակույթ հեզու արտահայտուրյունները տեսած ու վայելած, Մեզ հետ անշուշտ պիտի պայշտան Եկեղեցական և ազգային միասնականուրյան և համերաշխ գործունեուրյան զաղափարները կյանքի մեջ իրացնելու և նոցա իրավական բնույթ տալու համար, որոնց սկզբու գրվեցավ Ազգային-Եկեղեցական ժողովում:

Հոգով ուրախ նն նաև, որ Սյուրիի զաղափարական արյունաբամ ու տանշված հայ ժողովրդի բեկորները հուսադրելը, միաբարելը, դաստիարակելն ու նոցա հոգեպես զորացնելը Քեզ՝ ի վիճակված: Մայրում եմ Տիրոջը, որ արևշատուրյուն պարզել Քեզ և մարմենով ու հոգով զորացնեն, որ իրեւ Եկերգու Մովսես, Սյուրիի հայ ժողովուրդը Ավետյաց Եկեղիր առաջնորդես, որպեսզի իրեւ ազգ ամբողջանան, հոգեւոր, ազգային և պետական կեդրոն ստեղծենք ի միաբարուրյուն համայն Ազգի և Հոգեւոր դասի:

Տիրավանդ ողջույնս նաև Զեզ՝ Ամենապատիվ Տ. Կյուրեղ Պատրիարք Հայոց Երուսաղեմի և Հայրական Օրենուրյունս միաբանական Ուխտիդի: Ս. Երուսաղեմի Պատրիարքական Արոռը իր սրբազն վայրեւով, ուր ծնվել է աշխարհի Փրկիչը, որ եղի և նորա մկրտուրյան սրբազն պավագնը, ուր հեշել է Փրկիչի ավետարանը, ուր լսվել է Նորա կենդանի ու կենարա քարոզը՝ Հայ Ազգի պարծանեն է, Հայ Եկեղեցու և նորա հոտի Մրուրյուն Մրոցը: Դեպի այլ նվիրական վայրեւը դարձած է նաև համայն Տիստունյա աշխարհի աշքը:

Հայ Եկեղեցու և Երիստոնյա աշխարհի այդ նվիրական Մրուրյունների պահպանուրյան ու պայծառուրյան համար է, որ Գում՝ Ս. Հակոբյանց միաբանական Ուխտիդ հետ՝ օր ու գիշեր տեսնում են: Աստվածային խնամքն ու հոգանին եմ հայցում Զեր և Ուխտիդ վերա, որպեսզի սրուրյամբ զորանա, Երիստոննեական շերմեռանդուրյամբ անիմ և կենդանի օրինակ հանդիսանան բոլոր այցելու, ուխտավորներին, որպեսզի նոյն պատկանանով նիշեն Ս. Տեղերն ու Միաբանուրյունն և Երիստոննեական հավատով զօրացած ու վերածնված դառնան ի-

րենց վայրերը: Մաղրում և Բարձրյալին, որ Ս. Հակոբյանց վանքն իր ժառանգավորաց դպրոցով բրհսողնեական կրոնի բարզության սերմարան և լուսատու չափ հանդիսանա չայ ժողովրդի համար և սերտ կապահպանն Ս. Էջմիածնի և Մայր Հայրենի մի հետ, ինչպես ցարդ:

Տիրավանդ ողջույնս նաև Ձեզ՝ Ամենապատիվ Տ. Գեղրդ Արքեպիսկոպոս, Տեղապահ Կ. Պոլիկ Պատրիարքական Արոնի, Հոգևոր Դասիդ և Եկեղեցական Վարչության և Հայրապետական Օրինուրյունս հոտիդ: Յազ է Մեզ Եկեղեցուդ փառագոր անցյալի և հոտիդ բարգավան ու բարեկեցիկ վիճակի փոխարեն՝ տեսնել այսօր փոքրացած հոտիդ հոգեպես և ճյուրապես անմիտքար վիճակի մեջ: Առավել ևս ցալ է, որ փոքրարիկ հոտիդ մեջ զոյտուրյուն ունին իրեւամերժ տրամադրուրյուններ, որի հետևանքով պառակտված է Մեր սիրելի հոտը: Միրո. Ենրդամտուրյան և համբերատարուրյան ոգին է Ձեր բոնելիք ուղին հանդիպ ժողովրդյան: Խոկ հոտիդ՝ Մեր Հայրական հորդորն է՝ ղեկավագել ուկեցիր Եղիշեի կյանքի իմաստուրյան բովից առած հոսուերով՝ «Զուգուրիւն է մայր բարեաց, անզուզուրիւն ծեռշշաբաց»: Որպես Ամենայն Հայոց Հայրապետուրյան ներկայացուցիչ՝ Ձեզ վերածանրում է պարտականուրյուն Հայ Եկեղեցու կանոններն ու կարգերը անխարար պահպաննել և ի պահանջել հարկին՝ խոնմուրյամբ, իմաստուրյամբ, բայց և հետվելով մեր սուրբ հայրենին՝ բրհսողնեական սրբուրյամբ ընթանալ:

Մաղրում եմ Ամենակարողին պարզել Ձեզ հոգի իմաստուրյան և խոնմուրյան, հոգի հանճար և արիուրյան, որ անդատապար մնաք Աստուծո: Ձեր խոնի և Ազգի ու Եկեղեցի առաջ:

Ողջունում եմ նաև Ձեզ՝ Հայ Եկեղեցու սրբազն Առաջնորդներիդ, որ գլուխ եք Եկեղեցու և տեսուշ ժողովրդյան և Տիրավանդ պատվերի համաձայն՝ պարտագոր եք «Եասի առել և ապա ուսուցանել», արդարուրյան և ճշմարտուրյան ուղինով ընթարակ, օրինակ հանդիսանալով վիճակներիդ սրբազնագործ պաշտոնուրյան և բարեպաշտ ժողովրդյան:

Արրուն հսկողուրյուն ունեցեք Եկեղեցիների վերա, որ Աստուծո տունը վայելուշ և բարեկարգ վիճակի մեջ լինի և այնուղղ հրնչեցրել հավատացյալների ականջին՝ Փրկչի կենաստու և կենարա խոսքը ի միտքարուրյուն և ի դաստիարակուրյուն: Ափյունի սրբազն առաջնորդներ, ժաղցրաբարու

և հեղափամբույց բնափառուրյամբ և կիր վարեցողուրյամբ կապեցի Մեր տարագիր ժաղովրդի սիրաց Ձեզ հնտ. սիրով վառեցի ու շաղկապեցի Ս. Էջմիածնի և մեր Հայրենիքի՝ հորեղային Հայաստանի հայրենի հուշարձակների հնտ և միտքարուրյուն և ի շինուարյուն նոց: Հորդորեցի Ձեր հոտը կուսակցական պայքարներից հեռու կենալ, սույնապես նաև քշնամական ելույթներից ու արաւիներից՝ մեր Մայր Հայրենիքի՝ և. Հայաստանի և նորա հարազատ ու հավատարիմ կառավարուրյան հանդիպ: Այլ ու կարելուրազույնն է՝ բայ Ավետարանի՝ անձնագիր հովիկ Եղիշ Ձեր հոտի, որ Ձեր ձայնին լսեն և Ձեզ հետևեն, որպեսզի հափշտակիշ զալիեր անհարող լինեն փախցրն նոց Ձեր փարախից:

Ողջունում նաև Ձեզ՝ Հայ ժողովրդի ներկայացուցիչների՝ Թեմական Պատգամավորական ժողովի և Թեմական հորեղի անդամներիդ և այլ ազգային-Եկեղեցական Վարչուրյուններիդ, Դուք կոչված եք ազգային-Եկեղեցական գործերը ղեկավարելու, հետամուտ լինելու, որ հայ մարդը՝ Հայրենիքի ապագա ժաղաքացին և հայ կինը՝ հայ մատաղ սերնդի անմիջական դաստիարակիչը գիտենան և սիրեն իրենց մայրենի լեզուն, հայրենի պատմուրյունն ու գրականուրյունը. հանաշն իրենց փառապանձ նախնիքներին, տեսնեն նոց հերոսական և անձնվեր պայքար ազգային անկախուրյան, ազգի գոյուրյան համար և հանուն բրհսողնեական վեհ գաղափարների: Սույնապես նաև նոց կուտառական և կրական նվաճումները գիտուրյան և մանափան զեղարկեստի ասպարեզներում, որպեսզի օտար Եկեղեցի տակ, զորել կուտառայի աղյեցուրյան ենթակա՝ պահպանն իրենց ազգային ինքնափակցուրյունը և անձույլ մեան:

Հայրական ողջունում և Հայրապետական օրինուրյունս նաև Ձեզ՝ Քահանայք, Աստուծո տանարի պաշտոնյայք. Դուք եք Տիրոջ հոտի անմիջական հովիկը. Ձեզ էն դիմում Եկեղեցական սրբազն հորեղուրենի և ծեսերի կատարման համար. Ձեզ էն հավատում իրենց սրբի գաղտնիքները. Ձեր առաջ էն բայ առում իրենց բարոյական և նյուրական կարիքները. Դուք եք, որ անարգել ելումուտ օւնեք Ձեր ծիների աները: Ուստի հորդորում ուն Ձեզ՝ սիրով և անքերի կատարել Ձեր պարտականուրյունները, որ սահմաննել ևն Եկեղեցու Ս. Հայրենը. առանց ծովուրյան կատարեցի ավարական ժամասացուրյունը, հրապար-

կային բարողուրյամբ կենդանի պահեցեմ հոտիդ հավատը և սրամաղբեցեմ բարեպաշտական և աստուածահանո գործերի:

Հիսուսավանդ ողջույնս և Հայրապետական օրենուրյունս նաև Զեզ՝ Ազգային Բարերաբերիդ և բարեգործական ու աստուածիան հաստառուրյանց Դեկավարներիդ: Հիշեցեմ և փառ տվեմ աշխարհի բարիների առատաձեռն Պարզեատվին և Զեր դրամը. որ Աստուծու աշակցուրյամբ և Զեր Մրտնաչան աշխատանքի շնորհիվ եմ փատակել, զոր դրեմ ո՛չ միայն անհատական վայելիի. այլ առավելապես ազգի պատվի և փառի բարձրացման և նորա մշակույրի դարգայման, ինչպես նաև նորա տեսեսական կյանքի: բարելավմտն համար:

Ազգի մեծուրյունը նորա ստեղծագործող ոգու և այդ ոգու ստեղծած արզասիների արժանավորուրյան մեջ է կյայանում; Հայ ազգը անցյալում ստեղծագործել է և յուր ստեղծագործուրյան հուշարձանները կազմում են այսօր հայուրյան փառքն ու պատիվը և նորա բարոյական արժեն օտար կուլտուրական ազգերի առաջ: Նույնը պահեցվում է նաև ենրկայից, որի ստեղծագործողը հայ հանճարը պիտի լինի, իսկ զորդի մարմնացնողը՝ հայ մեկնասը:

Բարեգործուրյունը մարդկային կյանքում մեծ դեր է խաղացել, մանավանդ փոյր ազգերի և հատկապես մեր կյանքում, որ աշխարհի ամեն կողմը ցամ ու ցրիվ ընկած հայուրյան թիւնուր ունին՝ նյուրական և նողուր բազմատեսակ կարիքների ենրակա և աշակցուրյան կարու: Ազգային մեծ բարերաբեր, Զեր կատարելիս զիտակցական և նպատակահարմար բարեկործուրյունը ոչ միայն պիտի նպաստե՝ Հայ ժողովրդի արևտեսական կարիքները հոգալով՝ ազգային փառի ու պատվի բարձրացման ուղին հարելու, աստուածահանո և կրնական ասպարեզի բարեգործուրյամբ՝ ազգապահպահման և ազգային միուրյան գործն ապամուկու, այլև Զեր նոր ձեռնարկներ անհուն միսիրարուրյան աղբյուր պիտի հանդիսանան նաև Զեզ համար, կանքնելով երկրի վերա անշնչելի նուշարձաններ՝ Զեր համարյուն եղբայրների սիրու շահող երկնելու: Տիրոջ գուրը շարժող:

Մեր զարուրահայուրյունը, որ պատրաստվում է ներգաղիքի՝ դեպի օրեցօր վերելի համբով ընթացող Հայրենիքը՝ Խ. Հայաստանը, մեծ աջակցուրյան է կարուում և անհրաժեշտ կարիքի առաջ է կանգնած. վերակենդանացող հնապարյան պատմական հաստառուրյունը. Հայ ժողովրդի Մրու-

րյուն Մրուցը՝ Ս եզմիածինը ոյուրական հիմնական բազայի է կարուում, որ իր այսօրվա և ասլազայի կուլտուրական հաստառուրյունները՝ Հեմարանը, Տպարանը, Մատենադարանը. Թանգարանը և այն պահպանելու ու զարգացնել կարենա, որոնք եղին են և են Ազգի պահանով գոյուրյան հիմները և նորա փառն ու պատիվը:

Հայրական ողջույնս և Հայրապետական օրենուրյունս Զեզ՝ Մամուլի ներկայացուզիներիդ, հայ ժողովրդի երապարակային դաստիարակներիդ: Զեր պարտն է միշտ վառ պահին հայ ժողովրդի հոգու մեջ այն զաղափարները, որոնք հիմնեն են կազմում ազգային ինենազիտակցուրյան և զարգացման. ըստ այսմ՝ Տարուչի հայ եկեղեցու միասնականուրյան, ազգային միուրյան, համերաշխ գործուներին զարափարները, որոնք՝ հայ լեզվի և նորա անցյալ պատմուրյան հետ՝ միայն միջոցնեւն են հայ ժողովրդի անձույլ մեալուն: Պարտականուրյուն ունին նաև մեր ներկա Հայրենիքի՝ Խ. Հայաստանի գիտուրյան, զեղարգիստի, գրականուրյան և տեխնիկայի վերելիք պատկերելու, որի կենդանի և ականատես վկաները հանդիսացան Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորները: Առյանպես նաև այսօրվա այնտեղ ապրող հայ ժողովրդի ներսական ողին նշելու և բազալելու, որ այնտան փայլուն արահայտվեցալ Հայրենական: Մեծ պատերազմում և որի շնորհիվ հայ ժողովրդի անցյալ փառի շինուրյան վերա նոր աղյուս դրվեցավ: Փառ և պատիվ ապրող ներսուներին և աստուածային օրինուրյուն պատվով զբկածներին, որոնք մարմնով մեռած, բայց հոգով կենդանի են, որոնց հերոսուրյան հիշատակը հավիտյան կմեն մեր սրտերում:

Հայրական ողջույնս նաև Զեզ՝ հայ Տիկիներ և Օրիորդներ. կյանքի ղեկավարը միտքը չէ միայն, այլ սիրու, և առավել էս սիրու: Բազմարիվ դարեր սահել անցել են, մարդու միտքը զարգացել է և մարդու ստեղծագործող մտքի և աշխատունակ ձեռնի շնորհիվ արտաֆին աշխարհը կատարելագործվել է. որի հետևանուով բազմատեսակ նյուրական բարիներ են ստեղծվել. բայց մարդն ինը ապերչանիկ է մնացել: Ինչո՞ւ, որովհետեւ Գրկի ողին, սիրու և մարդասիրուրյան ողին չի իշխում մարդկանց սրտում:

Հայ Տիկիներ և Օրիորդներ, Դուք, որ աստուածային զերազույն շնորհին են արձանացել և սիրու ու մարդասիրուրյան հաղ-

ցըր ու հնդույշ զգացմունքներով օժտվել հանդիս էկեք Զե հոգու այդ քանզարժեք գանձով. ուղաբազի մատով հարուստ մարդո դառնա նաև սրտով հարուստ և մարդկային կյանքը իրավես եղանիկ դառնա:

Թոլոր դասակարգերից հետո թեզ եմ դառնում, իմ սիրելի Հայ ժողովուրդ, Հայրական ողջույնս և Հայրապետական օրենուրյունս շնորհելով Քեզ: Անցան պատմական տառապահց օներոյ, գալիս են ուրախուրյան և միսիրարուրյան օրեր: Մի՛ր միսիրարական չէ, որ դարերի հույսերդ այսօր իրականացած ես տեսնում, ունիս սեսփական ՀԱՅՐԵՆԻՔ և հարազատ ազգային ՊԵՏՈՒԹՅՈՒՆ: Մի՛ր միսիրարական չէ, որ դարերի ընթացքում մշտապես ավերվող շեն բաղաբեներիդ և հարուստ զյուղերիդ փոխարեն և անընդհատ քշնամուց սրախողանող եղող եղբայրներիդ փոխարեն ավերակներից ու մոխրից հարուրյուն առնող շեն բաղաբեներ ու զյուղեր ես տեսնում, օրեցօր կուլտուրապես հառաջադիմող և ազգաբնակուրյամբ անող և կուլտուրապես հավասար մակարդակի վերա կանգնած նուս մեծ ազգի բաղաբեների և զյուղերի: Մի՛ր միսիրարական չէ, որ օրեցօր հայրենի երկրիցդ վերանում և տղիտուրյունը և անկուլտուրականուրյունը, անէանում է նետամենացուրյունը և նորա փոխարեն քազվորում է գիտուրյունն ու գեղարվեստը իր բոլոր հյուղերով: Մի՛ր միսիրարական չէ, որ այսօր ունինք անուանի գիտնականներ՝ անդամներ և. Միուրյան գիտուրյան նեմարանի, որոնց անունները նուս մեծ գիտնականների անունների հավասար ծանոր են եվրոպական գիտական աշխարհին. կամ առաջնակարգ գլուխվեստագետներ, հավասար նուս գեղարվեստագետներին:

Մի՛ր միսիրարական չէ, երբ տեսնում ես ազգի վարած հերոսական պայքարը՝ Միուրենական ժողովուրյուների շարքում:

բնականուր և իր սեփական Հայրենիքի ազատուրյան համար և բոնարյան ու սպրկացման դեմ, որ աշխարհի հիացմունքն է, բերում: Մի՛ր միսիրարական դեմ, որ աշխարհի ամեն ուր հերոսացող նորանոր անունները, որոնք հարստացնում են և փեմացնում մեր ազգի հնադարյան հերոսական պատմուրյունը և բարձր պահում Հայ ժողովրդի պատիվը: Մի՛ր միսիրարական չէ տեսնել, որ նուս ժողովրդի նման մի հերոս ժողովուրդ և և. Մի՛ր թշԱՆ նման մի հզոր և արդարադատ Պետուրյուն անձնվագիր կանգնած է բոլոր ԱՐԴԱՐ ԴԱՏԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ:

Այս. միսիրարական է. և Մենք՝ թե՛ որպես Պետ Հայ նկեղեցու և թե՛ որպես և. Համբավետուրյունների Միուրյան սոսկ բաղաբացի, խորապես միսիրարված ենք և վստահութեն հայտարարում ենք թե՛ միսիրարված է նաև թե՛ Սայր երկրի և թե՛ Սփյուռքի Հայուրյուներ:

Մաղրենք ՓԲԿՉԻՆ, որ իր բազմաշարշադիքայի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի հրաշակերտած Մայր Արքու Ս. էջմիածինը՝ Հայ մարտիրոս ժողովրդի Մըրուրյուն Մըրոնց, անսասան պահեն: Խնչապես նաև Տաճա Կիլիկիո Ս. երուսաղեմի և և. Պոյսի Արքունները, իրու հավատող հաստատուրյան կորոններ. որպես հոգիոր դաստիարակուրյան կեղրուններ և իրեւ ազգապահպաննան սյուներ:

Աղորենք Տիրոնց, որ այցելու և հովանակոր լինի իր փոքրիկ, բայց հավատարիմ հոտին, նայ ժողովրդին՝ և նորա ազգային գիտակցուրյամբ նոր զարքած հոգուն կենսունակուրյուն և ստեղծագործող զորուրյուն պարզէ:

Աղորենք ԲԱՐՁՐՅԱՎԱԼԻՆ, որ իր ամենազոր Աշք հօվանի պահե մեր նորածին ՀԱՅՐԵՆԻՔԻ վերա և նորա կյանքը հարատէ ան:

Շնորհի և խաղաղուրյուն եղիցի՝ բնդ ձեզ և ընդ ամենեսյան. ամեն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ

86 - 19 ՀՅ

Սույն օրէնության անդրանիկ Կոնդակը

գրվեցավ ապրիլ 1-ին, 1946 թ.

Հայկական տոմարով ՌՃՂԵ.

Ս. ԷՇՄԻԱՆԻՆ:

## ՀԱՆՈՒՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ



անը, մղձավանջային օրեր ստեղծվեցին առաջին համաշխարհային պատերազմի օրերին հայ ժողովրդի համար։ Ոչ միայն թյուրքահայաստանն ամայացավ, այլև և Ծովահայաստանը ենթարկվեց թյուրք վանդալների ասպատակության, որոնք ավերի ու ոչնչացման մատնեցին բազմաթիվ շեն գյուղեր ու քաղաքներ։

Հայ դարավոր ժողովրդի արյունով ներկվեցին հայրենի եռներն ու հովիտները, գետերն ու լճերը։ Միջագետքի անապատները ծածկվեցին նրա տարագրված զավակների ոսկրներով։ Մի ամբողջ ժողովուրդ ենթարկվեց սիստեմատիկորեն կազմակերպված տարագրման, ջարդի ու ֆիզիկական ոչնչացման։ Թյուրքերն ամենավայրագ մեթոդներով ձեռնամուխ եղան հայ ժողովրդի գլխովին բնաշնչմանը։

Ոչնչացվում էր հայ ժողովուրդը ոչ միայն ֆիզիկապես, այլ ոչնչացվում էին նաև նրա դարերի բովից անցած բարձրացմեք մշակույրի մեացորդները և հայկական ինքնատիպ նարտարապետուրյան հոյակապ կորողները։ Պող Հայաստանը հրտեհով էր բռնված։ Հրկիվամ, հողին էին հավասար բեցվում բարգավաճ գյուղերն ու քաղաքները, վանքերն ու մենաստանները, նյութական կուտարածության հուշարձանները։ Հայկական բարձրավանդակի երկնակամարը ծածկվել էր ծխի ու մրի թանձր, կապարե ամպերով։ Միջերկրականից մինչ Սև ծովի ափերը, Բոսֆորից մինչև Իրանի սարահարթը ընկած տարածության վրա հրի ու սրի էր մատնվում մի անգեն, բազմադարյան կուտարայի տեր, քրտնաշան, աշխատասեր ու տաղանդավոր ժողովուրդ, որը քաղաքակիրթ աշխարհին տվել էր ականավոր ներկայացուցիչներ, իր լուման մտցրել համամարդկային կուտարայի գանձարանը և առևմտյան առաջավոր քաղաքակրթության ջահր միշտ վառ ու բարձր պահած իր ձեռքում՝ անհողողող առաջ ընթացել ասիական խալարում։

Թյուրքերը նպատակ էին դրել հայերին ֆիզիկապես ոչնչացնելու հետ միասին ուշնչացնել նաև նրա կուտարական արժեքները։

Սակայն թե մեկը և թե մյուաը նրանց լրիվ չհաջողվեց։

Բազմաթիվ արհավիրքների բովից է անցել հայ ժողովուրդը։ բազմաթիվ աշխարհակալ ցեղեր եկել ու տիրել են Հայաստանին ու այսօր իսպառ անհնատացել պատմության հորիզոնից, սակայն հայ ժողովուրդը, չնայած թվով նվազել է, բայց միշտ փոթորկիներին ու փորձություններին դիմագրավելով, լեռնալանջի հաստարուն, շանթահար եղած, կաղնի ծառի նման նոր ոստեր է արձակել, փյունիկի նման մոխիրների տակից հառել։ և այդ շնորհիվ իր բարձր ու վսեմ կուտուրային ինչպես Կիլիկիայի կաթողիկոս Գառնիկին Ա է ասում, «Ամեն ժողովուրդ մեծ է ոչ երկրի տարածությամբ, զորքերի բովով, բնակչուրյունով, այլ հոգեկան, ստեղծագործ կյանքի բովանդակ ծավալով։ Մենք փոքր ժողովուրդ ենք, բայց մեծ ենք մեր հոգիով, մեր ստեղծագործությունով, մեր անցյալով։» Եկ իրոք հայ ժողովրդին միշտ էլ հատուկ է եղել ստեղծագործ ոպին։

Հայ ժողովրդի այդ մեծ աղետի օրերին անգամ նրա լավագույն զավակները, գիտության իսկական ջահակիրները վար շգըրէն գիտության դրոշն իրենց ձեռքից ու առանց հուսալքման և վարանման, մի նոր ապագայի ակնկալությամբ, ձեռնամուխն եղան հայ հնադարյան կուտուրայի մնացորդների փրկման գործին։ Նրանք հակառակ ոչնչացումից զերծ մնացած ձեռքբերը, նյութական կուտուրայի նմաւշները ու ենդամափոխում երկրի խորքերը, շափագրում, լուսանկարում էին գեռևս անվրնաս մնացած հնադարյան հուշարձանների մնացորդները։ Մեծ էր նաև այն գաղթականների թիվը, որոնք փախուստի օրերին արհամարելով քաղցը՝ սննդի պաշարի փոխարեն իրենց ծանրաբեռնում էին նախնիքներից ժառանգություն մնացած ու խնամքով

պահված ձեռագրերով. այսպիսով տարագիր, գաղթական հայ ժողովուրդը իր ամենադժևակ օրերին իսկ ազգային բարձր ինքնագիտակցություն ու ինքնազմուղություն ցուցաբերելով կարողացել է փրկի կորստից հայ մշակույթի հետ առնչություն ունեցող բազմաթիվ թանկարժեք գանձեր, որոնք այսօր մեծ արժեք են ներկայացնում մեր անցյալի մատենագրության, գրականության, պատմության և ընդհանրապես կուտուրայի ուսումնասիրության ու արժեքավորման տեսակետից։ Դրանց մի մասը փոված է բոլոր հայկական գաղութներում, իսկ մեծ մասը գտնվում է Սովետական Հայաստանում։

Իսկ ի՞նչ էր ներկայացնում ներկայիս Սովետական Հայաստանն իրենից նախախորհը ըրդային ալդ օրերին. նա գտնվում էր թրքական հրանոթների փողերի սպառնալիքի տակ ու իրենից ներկայացնում էր մի կատարյալ գաղթաշխարհ ու որրաշխարհ։ Նրա բոլոր ճանապարհները բռնված էին գաղթականների քարավաններով, գաղթականներ, որոնք սովահար, անօթևան, Ալբակամած ու ահաբեկ, մահվան սարսափը դալով կեմքերին թափառում էին գլուխ դնելու տեղ որոնելով։ Լեռնալանջերը, ձորերը, կիրճերը, քաղաքների ու գյուղերի փողոցները, միջքաղաքային ու գյուղամիջյան ճանապարհները ծածկված էին նրանց դիերով։ Հայ ժողովրդի համար օրհասական վիճակ էր ստեղծվել։

Եվ ահա այդ ժանր փորձության, արհավրալից օրերին նրան փրկության ձեռք մեկնեց միան ոռու մեծա՛ռով ժողովուրդը։ Ստեղծվեց Սովետական Հայաստանը։ Զքացավ թրքական սպառնալիքը։ սովետական կարգերը նրան խաղաղություն ու ապահովություն բերին։ Հայ ժողովրդի համար ըսկը լեցեց շինարար ու ստեղծագործ աշխատանքի շրջանը։ Ինչպես խոլ փոթորկից հետո իր շունչը պահած բնությունը մի արտասովոր զարթոնք է ապրում, այդպես էլ Հայ ժողովրդը մեծ արհավիրքներից հետո մի առանձին թափով լծվեց երկրի վերաշինման դործին։ Զքացան գաղթականների քարավանները, մարդիկ տեղավորվեցին ու շինարար աշխատանքի անցան։ Գաղթաշխարհ ու որրաշխարհ Հայաստանը կարճ ժամանակամիջոցում կերպարանափոխվեց։ Նախկին հետամնաց ցարական այս գաղութը դարձավ տնտեսապես ու կուտուրապես զարգացած երկիր։ Մեքենայացման շնորհիվ աճեց նրա գյուղատնտեսությունը։ Հիմք դրվեց արդյունաբերության, կառուցվեցին բազմաթիվ դործարաններ, ավերված գյու-

ղերի ու բաղաբների ծխի ամպերի փոխալիքն հարյուրավոր գործարանների երկնականություն ծխնելուցներից դեպի երկինք ձգվեցին ծխի սյուսերը, հայկական լեռնաշխարհի ինքնատիպ պեյզաժին նոր երանգավորում ու նոր վեհություն հաղորդելով։

Տնտեսական բարեկեցիկ կյանքը նախադրյալներ ստեղծեց զիտուրյան, արվեստի անեալիքներաց զարգացման համար։ Ներկայիս Հայաստանի գյուղերն ու քաղաքները ծածկված են տարրական, միջնակարգ ու բարձրագույն դպրոցների ցանցով։ Երկրի ազգարնակշության համարյա մեկ երրորդը կազմում են սովորողները, Խոկական ուկեդար է սկսվել հայ ժողովրդի մշակույթի ծաղկման ու զարգացման համար։ Փթթում են գիտության ու արվեստի բոլոր ճյուղերը. ազգային մշակույթի զարգացման համար ստեղծվել են բոլոր հնարավորությունները։ Հայաստանը վերածվել է բովանդակ գիտական օջախի, որի շուրջն են համախմբվել հայ մտքի կարկառուն ներկայացուցիչներն ու երիտասարդ կադրերը։ սովետական կարգերում նոր գիտական կադրեր են աճել. նախկին որբերից բազմաթիվ տաղանդավոր մարդիկ են դուրս եկել։

Հայկական համալսարանը, որ օրերս բոլորից իր գյուղության փառապանն 25-ամյակը, հանդիսացել է հին կադրերի համախմբման ու նորերի կովման իսկական դարբնոց։ Նրա ծոցից եկել են համաշխարհային հոչակ վայելող գիտնականներ։ Գյուղիուն ունեցող մյուս տասնյակ բարձրագույն դպրոցները պատրաստել են բազմաթիվ կադրեր, որոնք ապահովել են մեր տնտեսության, գիտության ու արվեստի առաջրնեցրու Մի շարք հայ արվեստագետների անունները հայտնի են ամբողջ աշխարհին։

Եվ եթե անցյալում օտարները հայերի մասին գաղափար էին կազմում միայն հայ ժամանականների հետ ոփում ունենալու շրջորհիմ, ասա այսօր նրանք հայերին ճանառում են. նոր բազմադարյան կուտուրան արժեքների, նոր գիտության ու արմեստի ականավոր ներկայացուցիչների, նրա մարտական ոռու և տաղանդավոր զորավառների շրջորհիմ։

Գիտությունների Հայկական Ակադեմիան իր տասնյակ գիտահետազոտական ինստիտուտներով իր շուրջն է համախմբել հայ ականավոր գիտնականներին, որոնցից շատերի անունները հայտնի են նաև Սովետական Միության սահմաններից գորս։

Ստեղծվել են բազմաթիվ գրադարաններ, որոնցից մի քանիսը

Հանդիսանում են Միության մեջ ամենախոշորագույններից: Հիմնվել է աշխարհի ամենախոչըր թանգարաններից մեկը և իր տեսակի մեջ եզակի քանգարան-մատենադարանը իր տասեյակ հազար ձեռագրերով, որոնք վերաբերում են ոչ միայն Հայաստանին, այլև Միջին ու Մերձավոր Արևելքի երկրներին: Մատենադարանի շարքը համախմբված երիտասարդ կադրերը հին սերնդի լավագույն ներկայացուցիչների հետ ձեռք ձեռքի տված խոշոր գիտա-հետազոտական աշխատանք են ծավալել: Բազմաթիվ ձեռագրեր ուսումնասիրվել ու հրատարակվել են. շատերը գտնվում են ուսումնասիրման կամ հրատարակման պրոցեսում: Եթե նախախորհրդային ժամանակաշրջանում այդ ձեռագրերից ուշադրության են արժանացել գլխավորապես նրանք, որոնք կապված են եղել Հայ մատենագրության, դրականության ու պատմության հետ, ապա ներկայումս դրանց զուգընթաց ուսումնասիրվում են նաև այն ձեռագրերը, որոնք կապված են արվեստի ու բնական գիտությունների հետ: Մի շարք ուսումնասիրություններից պարզվել է, որ քաղաքակիրթելությանը կողմից որդեգրված շատ աշխարհայացքներ խորթ չեն եղել մեր նախնիքներին ու ելքուացիներից առաջ մշակվել են նրանց կողմից:

Անխոնջ կերպով ուսումնասիրվում են նաև հին ճարտարապետական կոթողները:

Հայ գիտնականներն ու արվեստագիտները աշխատում են ոչ միայն Հայ մշակույթը բարձրացնել մինչ այժմ՝ շտեմնված բարձրության, այլև գիտականորեն ուսումնասիրում, յուրացնում ու վեր են հանում անցյալի Հայ կողմուրայի արժեքները:

Հայ մշակույթի անցյալի ժառանգության նկատմամբ զոյուրյուն ունի մինչ արդ շընկանված հոգատարություն: Խնամբով պահպանվում են բոլոր հուշարձանները, իսկ որուել անհրաժեշտ է վերանորոգման են ենթարկվում հուշարձանների վնասվածմասերը: Միրով հավաքվում ու գորգուրանքով պահպան են ընդհանրապես հայ մշակույթի հետ առնչություն ունեցող բոլոր արժեքները:

Խնամբ հայոնի է, հայ պետականության կորստից հետո հայ մշակույթի կենտրոնները երկրից գուրս փոխադրվեցին, որովհետեւ տիրող պետությունները քաղաքական նորկատառություններով արգելք էին հանդիսանում կուլտուրական օջախների ստեղծմանը բռն երկրում: Մայրենի հողից կտրված այդ կենտրոնները զարգացման ու իրենց գործունեությանը լայն թափ հաղորդելու հնա-

րավորություններից զուրկ էին:

Այլ է պատկերն այժմ: Հայ պետականության գոյությամբ հապալավորություն է ստեղծվել մայր Հայրենիքում ունենալու հայ մշակույթի կենտրոններ, անհատների և զանազան կազմակերպությունների ձեռքից այդ դործը կենտրոնացել է պետության ձեռքում, որը բոլոր միջոցները տրամադրում է Հայ մշակույթի ծաղկման ու զարգացման համար:

Հայկական կուլտուրայի նախկին կենտրոններ են հանդիսացել բազմաթիվ օտարերկրա մայրաքաղաքներն ու քաղաքները. այդ պատճառով էլ այդ վայրերում գըտնը վում են Հայ մշակույթի հետ կապված շատ արժեքներ. տարագրությունից հետո այս ու այն հայկական գաղութներն են տեղափոխվել բազմաթիվ նոր արժեքներ, որոնց նկատմամբ հոգատար խնամբը մեծ մասամբ բացակայում է: Դրանք մեծ մասամբ ոչնչանում կամ շարաշահության առարկա են դառնում: Մեր շատ գաղործների եկեղեցիների խորաններում ու մասնավոր անձանց տներում հայ մշակույթի համար արժեքավոր ձեռագրերը ենրակա են խոնավուրյունից, ցեցից ոչնչանալու կամ հինավանառների ձեռքն անցնելու վտանգին: Անպատասխանատու, անգիտակից անձինք իրենց ձեռքի տակ գտնված այդ անհնահատելի մեծարժեք զանձերի նկատմամբ անհոգի վերաբերմունք են ցույց տալիս, էլ չեն խոսում այն մասին, որ դրանք չեն ուսումնասիրվում, չեն օգտագործվում ու լայն հասարակության սեփականուրյուն դարձվում: Զէ՞ որ այդ ձեռագրերից շատերը կարող են նոր լույս սփռել Հայ անցյալի պատճության ցարդ մութ մնացած էշերի վրա:

Տպագրելով Հ. Քյուրտյանի հոդվածը ձեռագրերի գողացման ու վաճառահանման մասին, գտնում ենք, որ անհնանդուրելի է ներկա պահուն հայ ազգի անվիճելի սեփականուրյունը կազմող մշակույթային այդ գանձերի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Թվելով մի շարք ձեռագրերի կորուստը ու շուկա հանվելը, Քյուրտյանը չէր կարող, իհարկե, իմանալ այն բոլորը, ինչ որ կատարվել ու կատարվում է: Մերան պարզ է, որ կորստից փրկված հայ մշակույթի գանձերը ենթակա են կրկնակի կորստի: Մի թե կարելի է հանդուրել, երբ հայ մշակույթի գանձերը Թալրիզից կամ Երուսաղեմից ընկնում են հնավանառների ձեռք և վանառի հանվում Մերձավոր Արևելքի ու Ամերիկայի շուկաներում, կամ

ընկնում օտար բանգարանները: Խղուր է կարծիքն այն մասին, որ ձեռագրերի նըկատմամբ կատարված շարաշահության մերկացումը կարող է վնասել այս կամ այն անձնավորության հեղինակությանը. Երբ խնդիրը վերաբերում է ազգային սեփականուրյան պահպանմանը՝ լոելը և անձնավորույունների միջև խտրույուն դնելը հաճացանք է:

Միաժամանակ համամիտ շենք Քյուրությանի հետ մի շարք խնդիրներում: Քյուրությանին հետաքրքրում է միայն ձեռագրերի ցուցակներու մեջ արձանագրելու, ժամանակը անգամ մը անոնց գոյություն ունենալը այդ ցուցակներով վերստուգելու, զանոնք խոնավ տեղ շդնելու, ցեցե, մգլուտելե փրկելու, փոշիները սրբելուա խնդիրը. բայց այդքանը մեզ չի բավարարում. դրանք հընություններ շեն, որ խնամքով ապակիների տակ դրվեն ու ցուցադրվեն. Նրանք պետք է ուսումնասիրվեն ու հրապարակվեն: Սխալ է Քյուրությանի կարծիքը, որ շշումինք պատրաստված ուժեր բոլոր ատոնցմեն օգտվելու»: այդպիսի ուժեր կան Սովետական Հայաստանում, որոնք ի վիճակի են այդ ժառանգությունը օգտագործելու և գիտականուրեն ուսումնասիրելու:

Հայ ժողովուրդը շատ կուտուրական արժեքներ է կորցրել և հանցագործություն կը լինի թույլ տալ, որպեսզի փշանան, վաճառքի հանվեն կամ կողոպուտի ենթարկվեն այդ արժեքները, ինչպես որ տեղի է ունեցել նաև Փարիզի նուպարյան մատենադարանի հետ: Ֆաշիստական Գերմանիան, որի պատասխանատու է առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայկական սպանդի ստեղծման համար, այս պատերազմին էլ չհրաժարվեց իր արյունոտ թաթը զնելու հայ մշակույթի մնացորդների վրա՝ հայ Փաշիստների աջակցությամբ կողոպտելով նուպարյան մատենադարանը:

Արդ, այսպիսի պարագաներում, երբ բուն երկրում ստեղծվել է հայ մշակույթի օջախ, բույլատրելի՝ է արյուն, որպեսզի հայ ազգի սեփականուրյունը կազմող անցյալի այդ ժառանգությունը շարաշահության առարկա դառնալով օտարեների ձեռքն ընկնի, մասմաս վախառի հանվի աշխարհի շուկաներում կա ցեցից, խոնավությունից, անհոգի վերաբերմունքից ոչնչանա, փոշիների տակ բաղված և գիտությանը անհայտ մեա:

Այժմ, երբ սկսվել է զանգվածային ներ-

գաղրը, և զաղուրահայ մողովուրդը փխադրվում է մայր Հայրենիք, ապա, բնական է, որ նեա կազմության այդ զանձերը շվետը է մեան սայր Հայրենիքից դուրս. օսմանակն է մտածել նաև նրանց մայր Հայրենի տեղափոխելու մասին. ժամանակն է, որպեսզի հայ մշակույթի այդ զանձերը, որոնք փոված են աշխարհով մեկ, հավաքվեն ու կենտրոնացվեն Սովետական Հայաստանում, որտեղ դրանք կզանվեն ապահով ձեռներում, զերծ կլինեն փշացումից ու կորստից, կուտումնասիրվեն ու կպահպանվեն պաշշան կերպով:

Ծատ անելիքներ ունեն այդ ուղղությամբ մեր թեմական առաջնորդները, թեմական խորհուրդները, ազգային բոլոր մարմինները, մամուլը. Նրանք պետք է աշխատեն հայ մշակույթի հետ առնչություն ունեցող բոլոր արժեքները հսկողության տակ առնել, հավաքել ու կենտրոնացնել մայր Հայրենիքում, այսպիսով, փրկելով նրանց կորստից: Խսկ այս կամ այն գաղություն որոշ բաներ պահելու անհրաժեշտության դեպքում, պետք է աշխատել, որ դրանք պահպան խնամքով, ուսումնասիրվեն ու հրապարակվեն, որպեսզի գառնան ոչ թե այս կամ այն վանքի, հեկեղցու սեփականություն, այլ բովանդակ հայ ազգի սեփականություն:

Մեր վանքերը, եկեղեցիները, մենաստանները իր ժամանակին հանդիսացել են հայ ժողովրդի թի' դպրոցները և թի' մշակույթի խոշորագույն կենտրոնները. մեր վանքերում են ստեղծվել մեր անցյալի կուտուրայի բազմաթիվ հոյակապ գործերը. բայց դրանք այս կամ այն վանքում ոչ թե ցուցադրման առարկա են հանդիսացել, այլ ուսուցման, ուսումնասիրման: Ներկայումս, երբ վանքերը դադարել են հայ մշակույթի կենտրոններ լինելոց, և նրանց փոխարեն հայ ժողովրդի համար ստեղծվել են բոլորովին նոր տիպի կենտրոններ, անմտություն կլիներ դրանց վանքերի նկուղներում, եկեղեցիների խորաններում փոշու տակ թաղված վիճակում պահելու: Հայ եկեղեցին երբեք չի հակադրվել հայ ժողովրդին, նա իր ժողովրդից անբաժան է եղել ու իր գանձերը անհրաժեշտության դեպքում սպաս է դրել իրարորություն նրա:

Կյաօր էլ անհրաժեշտ է, որպեսզի հայ եկեղեցին իր ձեռքի տակ ունեցած այդ գանձերը դնի հայ անվանի գիտականների տրամադրության տակ:

ԿԻԼԵԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՀԱՅ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ



Եր ժողովուրդը դարերի ընթացքում հանդիպել է շատ հրի և զրի: Վշտերի և տառապանքների բովից է անցել և նա այսօր հասել է մի հանդրվան, որ իր թանկագին հայրենիքի մի ժամանակը տերն է, որ պատմական իր հայրենիքի մեջ նա ապրել կարող է խաղաղությամբ, ապրել կարող է ստեղծագործելով, ապրել կարող է ապահով մեծ հույսերով:

Մեր հայ ժողովուրդը մի գեղեցիկ խոսք ունի— պատկերալից և իմաստալից մի խոսք. «Տունի հիմամբ է տուն, ծառը արմատով է ծառ»: Մեր հայ ժողովուրդի տան հիմքը, մեր ժողովուրդի կենդանի ծառի արմատը, մեր ծայրը Հայրենիքն է:

Մեզ համար թանկ է մեր հայրենի երկիրը՝ ավանդությունների հետ կապված: Մեր սրտերն ու հոգին բարձրացնում է նա կեզի վսիմք, ինչպես մեր հայրենի երկրի կենտրոնում բարձրացած Արարատը:

Մեր բանաստեղծը շի թափառում Հոենոսի կամ Գանգեսի ափերին, նա անցնում է մեր Մայր Արաքսի ափերով: Այս բանը ցույց է տալիս, թե ժողովուրդի կյանքը, նրա ստեղծագործությունը խոր արմատներ ունի հայրենի երկրի մեջ բազմադարյան: Ինձ ծայրը աստիճան ուրախացնում է, որ Մայր Հայրենիքում ստեղծվել է մի վիճակ, որ մեր տաղանդը, մեր ազգային հանճարը կարող է ստեղծագործել մեր երկրի մեջ, կապվելով գաղութների ողջ հայության հետ:

Ես բաղաքագետ չեմ: Բայց հոգեւորական և հոգեկան կյանքով ապրող մարդ եմ:

Ամեն ժողովուրդ մեծ է ոչ երկրի տարածությամբ, զորքերի թվով, բնակչությունով, այլ հոգեկան, ստեղծագործ կյանքի բովանդակ ծավալով: Մենք փոքր ժողովուրդ ենք, բայց մեծ ենք մեր հոգին, մեր ստեղծագործությունով, մեր անցյալով:

Մեր ժողովուրդը թվով փոքր է, բայց մեծ

է իր հոգին, Ավատրիացի մի ճարտարապետ մեր ճարտարապետությունը, հայ արվեստը զնում է հունական, հոռմեական, գոթական արվեստների կողքին:

Բրյուսովը, որ սրանից քսան տարի առաջ մեռավ, ուսումնասիրել է հայկական բանաստեղծությունը սկզբից մինչև մեր օրերը և հայ բանաստեղծության տալիս է կարևորագույն տեղ, մեծ տեղ Եվրոպայի ու Ասիայի բանաստեղծությունների շարքում:

Մեծ Ռուսաստանը հարյուրավոր միլիոն ժողովուրդ ունի և հայ ժողովուրդը Սովետ Միության մեջ երկու միլիոն է: Բայց մեր փոքրիկ ածուն (եթե ասենք Խորենացու լեզվով) ինչպիսի՞ դեր է կատարում Սովետ Միության շինարարության, մեծության, զինվորական հայթանակների մեջ: Լոռվագույցից եւած Միկոյանը ի՞նչ կարևոր դեր է կատարում:

Այս փոքրիկ ժողովուրդը, որ համարվում էր խեղճ, տեսանք թե ինչպես Բաղրամյանի նման հերոս տվավ:

Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորները հրենու աշքերով տեսան, Թիինչպես անցաւում թշվառ, աղքատ-նիշարած ժողովուրդը գլուխը բարձրացրած՝ ապրում է ու ստեղծագործում:

Ամերիկան մեծ աշխարհ է, բայց 120--130 հազար հայության միջից Սարոյանը և իր նմանները մեծ հոշակ են հանել: Փուշման մեծ նկարիլը մեծ հարգանքով է հիշվում: Գյուրջյան արձանագործը, որի անունը վերջերս շի լսվում, համաշխարհային լուսավորության կենտրոն Փարիզում համարվում էր առաջավոր և մեծ արվեստագետ:


Զհուահատենք, որ փոքր ենք: Փոքր ենք անհասկացողների համար: Գիտակցությամբ ալրող հայր, ստեղծագործ հայր, անցյալի վշտերի ու տառապանքների ծանոթ հայր ապրում է իր հայրենավանդ տան մեջ, այն տան, ուր աշխատել ու ստեղծագործել

են մեր նախնիքները։ Կրնանք մենք էլ նըրանց արժանավոր հաջորդները լինել։

Արմատով է ծառը կենդանի։ տոննը հիմամբ է տոն։ Հիմա մեր հիմք հաստատուն է։ Աստուծով ոնինք Սովետական Հայաստանը։ Պետք է մեր սրտի, մեր էության բոլոր սիրով սիրենք այդ փոքրիկ Հայաստանը։

Մեր հորդորն է լինել քաջ, հոգով, ձըգտումներով, իդեալներով, ու գաղափարներով և աշքը ուղղած մեր Հայրենիքին։

Դուք գիտեք, որ արևածաղիկը իր երեսը միշտ դարձնում է զեպի արևը։ մենք էլ մեր աշքերը ուղղել ենք զեպի մեր կենդանության արևը, որ մեր Հայաստանն է թանկապին։



Գեղարդի վանքի վիմափոր տաճարներից  
մեկը (ԺԳ դար)



## ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

### ՄԱՅՐ ԱԹՈՒ

Ս. թ. ապրիլի 20-ին, Զատկական տոնի առթիվ, Ս. էջմիածնի Մայր Տաճարուա, Հավատացլաների խուսափական ներկայությամբ, հանդիսավոր պատարագ մատուցվեց: Պատարագին էր Գեր. Տ. Ռուգեն հպիսկոպոսը, որը ավոր պատշաճի քարոզ կարդաց:

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\*\*\*

Զատկական տոնի առթիվ Վեհափառ Հայրապետը բազմաթիվ շնորհավորական հեռագրեր է ստացել Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսից, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքներից, ՍՍՌ Միության ու արտասահմանի թեմերի առաջնորդներից, Բարեգործական ընկերություններից և այլ անձներից:

\*\*\*

Զատկական տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի կողմից շնորհավորական հեռագրը բեր են Հղվել Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիին և Վրաց կաթողիկոս Կալիստրատին, որոնցից նույնպես ստացվել են Վեհափառ Հայրապետի անունով փոխադարձ շնորհավորական հեռագրեր:

\*\*\*

Աղեքսանդրիայի (Եգիպտոս) Հայոց եկեղեցու հովիվ Տ. Մեսրոպ քահանա Թէօշկերյանին Վեհափառ Հայրապետը պարգևատրել է ծաղկյա փիլունով և լանչախաչով,

միաժամանակ ավագության կոչում շնորհելով նրան:

\*\*\*

Աղեքսանդրիայի (Եգիպտոս) Հայոց եկեղեցու հովիվ Տ. Հայկապոն քահանա Ուկերյանը Վեհափառ Հայրապետի կողմից պարգևատրվել է ծաղկյա փիլունով և լանչախաչով:

\*\*\*

Ապրիլի 10-ին Մայր Աթոռ ժամանեց Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Գեռ. Տ. Վահան եպիսկոպոս Կոստանյանը, որը Վեհափառ Հայրապետին զեկուցեց իր թեմի գործերի գրության մասին:

Մայիսի 15-ին Գեր. Վահան եպիսկոպոս Կոստանյանը մեկնեց իր թեմը:

\*\*\*

Ապրիլի 28-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակությունը, բաղկացած Ա. Առաքելյանից և Ն. Մանուկյանից, մեկնեց Բեյրութ, բարերար Մ. Մուրզանի կողմից Մայր Աթոռին նվիրված տարանի փոխադրության գործը կարգավորելու համար:

\*\*\*

Մայիսի 1-ին Եգիպէ վարդապետ Ազնավուրյանը Ս. Գեղարդի վանքի վանահայր նշանակվելով մեկնեց իր պաշտոնատեղին: Ս. Գեղարդում ներկայումս վերանորոգվում են վանքի սենյակները: Ս. Գեղարդի վանադում հիմք է գրվելու մեղվարուժական տընտեսության:

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԶՐՈՒՅՑԸ ՏԱՍՍԻ ԹՂԹԱԿՑԻ ՀԵՏ

Մայիսի 17-ին ՏԱՍՍ-ի լուսակիցը էջմիածնում այցելեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեղարդ Զ-ին:

Թղթակցի հետ ունեցած դրույցում Վեհափառ Հայրապետը հայտնեց:

«Հայաստանի կառավարությունը, ժողովուրդը և Հայ եկեղեցը կենտրոն էջմիածնի ներկայումս պատրաստվում են գիմավորելու Հայրենիք՝ Սովորական Հայաստան գարձող Հայերին:»



«Հայ Եկեղեցին, իր պատմության ողջ ընթացքում հավատարիմ մնալով հնավանդ տրափիցիաներին, պայքարել է Հայ ժողովրդի ինքնուրությության, Հայ պետականության պահպանման ու զորացման և Հայ ժողովրդի հատկաների համախմբման համար:

«Հայրենական պատերազմի տարիներին Հայ Եկեղեցին ֆաշիզմի զախչախմանը նըպաստելու համար կազմակերպել է միջոցների հանգանակություն հօգուտ Կարմիր Բանակի օգնության ֆոնդի:

«Ներկայումս ընդուածքելով արտասահմանյան հայերի Մայր-Հայրենիք վերադառնալու ցանկությանը, Հայ Եկեղեցին իր առաջնահերթ պարտականությունն է համարում ամեն կերպ օժանդակել ներգաղթի գործի կազմակերպմանը: Մենք հրահանգել ենք արտասահմանի բոլոր թեմական առաջնորդներին ամեն տեսակի աջակցություն ցույց տալ Հայկական գաղութերում կազմակերպվող ներգաղթի կոմիտեներին: Մենք հավատացաց ենք, որ թեմական առաջնորդները և թեմական խորհուրդները պատվով կիկատարեն այդ հանձնարարությունը: Մեր գլխավոր նպատակն է միջոցների հանգանակությամբ նյութապես օժանդակել Հայերենիք դարձող կարիքավոր հայերին. դրանով Մենք կատարած կլինենք մեր սուրբ պարտականությունը ժողովրդի հանդեպ և օգնած Սովետական Հայաստանի կառավարությանը, որն ընդունելով ու տեղավորելով Հարյուր Հազարավոր Հայերի, կատարում է մեծ ու աստվածահաճո գործ: Մենք մեր կողմից անում ենք ամեն հնարավորը, որպեսզի սփյուռքով մեկ յրված Հայ ժողովուրդը վերադառնա իր հայրենիքը և լուսաշող Սովետական Հայաստանում սկսի կերտել իր պայծառ ու երջանիկ ապագան:

«Երտասահմանյան հայերը ձգտում են Սովետական Հայաստան վերադառնալ ոչ միայն նրա համար, որ իրենց Հայրենիքն է հանդիսանում, այլ և նրա համար, որ այստեղ կան վաղվա օրվան նկատմամբ վստահ, խաղաղ, երջանիկ ու ապահով կյանք ստեղծելու բոլոր հնարավորությունները:

«Բազմաթիվ երկրներում Ամերիկայում, Ֆրանսիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Իռանեւմ, Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Պաղկստանինում, Թուրքիայում և այլուր ցրված հայություն կա. Դրայց հայրենական պատերազմը ցույց տվեց, որ որտեղ էլ ժամանակավորապես ապաստան կտած լինեն հայերը, այնուամենալի լինը բանք բոլորն էլ ապրում են մի միասնական զգացումով Սովետական Հայաստանի նրկատմամբ խորը հրախտափիտական զգացումով: Նրանց բոլորի իդն է՝ տեսնել Սովետական Հայաստանին միացված Թյուրքիայի կողմից բռնագրավված հայկական նահանգները:

«Ամենայն Հայոց կաթողիկոսը չէր կարող անտեսել ու չպաշտպանել արտասահմանյան հայերի արդարացի ու տեղին պահանջները: Դեռ պատերազմի ընթացքում մեծ պետությունների կողմից մի շարք դեկլարացիաներ արվեցին բոլոր անարդարացի հարցերի նկատմամբ վերջնական ու արդարացի վճիռ կայացվելու մասին: Հայկական նահանգների բռնագրավումը և այդ նահանգներում Հայ աղքարնակության ոչնչացումը Թյուրքիայի կողմից, ավելի քան անարդարացի է: Որպեսզի ընդ միշտ և վերջնականապես արձատախիլ արվի այդ անարդարությունը, պետք է հայկական նահանգները միացվեն Սովետական Հայաստանին:

«Մենք, որպես Հայ Եկեղեցու Փետք միշտ էլ պաշտպանելով մեր ժողովրդի արդարացի պահանջները, գեռ 1945 թվի նոյեմբերի 27-ին դիմեցինք երեք Մեծ Պետությունների ղեկավարներին, խնդրելով Սովետական Հայաստանին միացնել Թյուրքիայի կողմից զավթված հայկական հողերը:

«Հայ Եկեղեցին հավատացած է, որ, Աստուծո օգնությամբ և Միավորված Ազգերի Անվտանգության խորհրդի արդարացի որոշումով, անցյալում բազմաշարացար Հայ ժողովրդի իդը՝ տեսնել Սովետական Հայաստանին միացված նրանից բռնի կերպով անշատված պատմական հայկական հողերը, կիրականական:

ԳՈՂՑՈՒԱՇ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ

ոլսեն Փիրակեկ աղբյուրե մը քաղուած տեղեկություններ-ու շարքին կկարդամ նաև օնչու որ ամենեն անդարձաննելին է, սակայն, կորսված թանկարժեք ձեռագիրներն ու գրքերն են, որոնք վաճառքի հանված են... Եղիպատոսի և Ամերիկայի մեջ՝ Կիլիկի կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի և բանասիր Հ. Քյուրտյանի համաձայն, Հյուս. Ամերիկայի մեջ տեսնված են Ղալաթիր մատենադարանին պատկանող ամենաթանկին հատորները» («Հայրենիք» օրաթերթ, դեկտ. 28 1945 թ.)։

Քանի որ այս մասին ամենեն առաջ «Պայքար»-ի հյուրընկալ էջերուն մեջ հարանցի գործի, այժմ հարմար կրատեմ ավելի ծանրանալու։

Հետաքրքրական է, որ «Պայքար»-ի մեջ երկու մասե քաղկացյալ այդ գործյունս արձականք գտներ է զատ կողմեր Փարիզին նամակով մը կշեցավեր «մեծտեղ» հանելու և Պոլսո գողովթյան նման հայ ձեռագրաց դեմ կատարված ուրիշ ոճիներ ալ մերկացնելու անհրաժեշտությունը։

Սակայն խնդիրն ունի իր բարդ կողմերը։ Նախ որքան որ մեր հաստատությունները կիտեմ, իզուր պիտի ըլլան անպաշտու և առօրյա հանգամանքով այս հետապնդումներն ու մերկացումները։

Վերոհիշյալ աղյուրեն կտեղեկաններ, թե «Արևանյան Արք» (Պոլսո Պատրիարքական տեղակալը) դեպի էջմիածին իր վերջին ուղևորության, հոգելույս նարոյանի վերագրած է բոլոր այս մութ գործերը։

Էջմիածնեն ունէ ձայն շելավ տասնյակ հազար տոլարներ արժող այս ձեռագրաց դողցիկելուն և վաճառվելուն մասին\*): Ասիկա կակնկալուր գոնե, քանի որ Գարեգին Սրբազն Հովսեփյան, Կիլիկի Տան նորըն-

\* ) Զեռագրերի գողացման և վաճառման մասին էջմիածինը մինչև այժմ ու ոքից, ոչ դրավոր և ոչ էլ բանավոր, տեղեկություններ չի ստացել։ Մասնաւոր ԽՄԲ։

տիր կաթողիկոսը, որ էջմիածնա ընտրության առթիվ հոն կպտնվեր, լավ ծանոթ էր այդ ձեռագրաց նախապես Ղալաթիր մատեսադարանը պատկանելուն և աղքային սեփականություն ըլլալուն։ Մինչ ինքը անակնկալորեն անոնց կհանդիպեր Հյուս, Ամերիկայի մեջ օտար հաստատությանց մոտ և հայ հնավաճառների ծախուած կամ դեռ անոնց սեփականություն։

Պոլսո աղքային մատենադարաննեն գոլցը ձեռագիրներուն առաջինը այդ մատենադարանի նախկին թիվ 68 ավետարանն է, Կիլիկիա գրված 1253-ին։ Գարեգին Սրբազն Հովսեփյան կվկայի, որ ինք Ղալաթիր մատենադարանը տեսած է այդ ձեռագիրը վերջին անգամ 1914-ին։ Երկրորդ ձեռագիր մը, 1200-ին Ավագ վանք Կարդան գրիշե (Երզնկա) գրված, նույնպես կպատկաներ Ղալաթիր աղքային մատենադարանին, նույնպես Սրբազննեն հոն տեսնուած 1914-ին։

Այդ ձեռագիրները 1929-ին ես տեսա Աղեքսանդրիր (Եղիպատոս) մեջ, Պոլսեն հոն եկած հույն հնավաճառի մը մոտ, որ գլխավորար հախճապակիի (Կուտինայի և այլ) առևտուր կըներ։ Դինը, որ ինձմեն ուզեց այդ ձեռագիրներուն արժեքին համար, բարձր չէր, սակայն այն ատեն իմ գրպանին համար պատկառելի գումար մըն էր, որով բնական է չկրցա գնել։

Այդ ձեռագիրները հետո անցեր են նյութորք հնավաճառ Հ. Գևորգյանի ձեռքը և առաջարկուեր են Ուաշինգտոնի Ֆրիըր Արք Կալըրիին։ Հոս է որ Գարեգին Սրբազն Հովսեփյան Հյուս։ Ամերիկայի իր առաջնորդական օրերուն վերստին անոնց հանդիպեր է։ Ֆրիըր Կալըրին ապա չէ գներ այդ ձեռագիրները և առոնք դարձյալ եղել են սեփականություն Գևորգյանի ի նյութ-օրք։

Արդ որոշ է, որ այս երկու ձեռագիրները անհետացեցին կա Ղալաթիր մատենադարաննեն 1914—1929-ի մեջն ատեն մը։ 1914-ին Գարեգին Սրբազնը Ղալաթիր Ազգ մատենադարանին մեջ է տեսեր, 1929 ես ա-

տոնք կտեսնեի Աղեքսանդրիո մեջ հուն Հնավաճառի մը մոտ:

Ո՞վ, ի՞նչպես և ե՞րբ ատոնք գողցեր է բռն մատենադարաննեն, ինծի կմնա անծանթ: Արսլանյան Սրբազն «Նարոյանի վերագրած է» ատոնց կորուստը, հավանաբար ըսել ուզելով, որ անոր «ժամանակ» գողցուած ըլլալու են:

Ասիկա եթե ճիշտ է, դյուրին ամբաստանություն մըն է մինչև ապացուցներ մեշտեղ հանովիլը: Իսկ եթե ճիշտ չէ, այն ատեն շատ այլանելի բան մըն է:

Ամեն պարագայի տակ Արսլանյան արքափսկոպոս 1944-ին մեռած նարոյան Սրբազնի պատրիարքական իշխանությունը իր տեղապահ ձեռք առնելեն վերջ, պետք էր զններ, թե ի՞նչ ազգային հարստություն իրեն խնամքին կհանձնվեր: Կերևա թե ինք անտարբեր գտնված է, քանի որ գրեթե տարի ու կես վերջ գեռ այդ գողցուած ձեռագիրներուն մասին ոչինչ կիրապարակեց: Միայն «Պայքար»-ի մեջ իմ հրատարակութենես վերջն էր, որ եղած աղմուկին վրա, ատոնց գողցուած, ըլլալուն հանցանքն ու պատասխանատվությունը իր նախորդին վրա կրամար:

Հոս լավ կը լա անդրադառնալ պատահարի մը, որոն մասին ժամանակին ալ գդած և ահագին աղմուկի պատճառ եղած եմ, առանց ոնէ շոշափելի արդյունք մը ձեռք բերելու:

1937-ին Երուսաղեմ Շուետացի Հնավաճառ մը կդնեի խիստ մեծարթեք և հայդավանական տեսակետով եղական ու ամենակարենոր Կրիլկյան ԺԳ դարու ձեռագիր մը, Սակայն նկատի առնելով ձեռագրին ինչ ինչ հանգամանքները կասկած ունեցա, թե մի գուցե վանքին գողցուած ըլլա: Զեռագիրը 1931-ին ալ ինծի ցույց տրված էր Երուսաղեմ Հայ Հնավաճառ մը, որ 1937-ին մեռած էր արդեն: Այն ատեն ալ կասկածիս պատճառով՝ շփնեցի հատորը: Սակայն երբ տեսա, որ 1937-են գեռ այդ հատորը հրապարակին վրա է, որով գողցուած ըլլալու վախս մասսմբ փարատեցավ, զնեցի ձեռագիրը: Կատարելապես ապահով ըլլալու համար սակայն ձեռագիրը վանք տարի և երշանկահշատակ և սիրելի բարեկամներու Մեսրոպ Սրբազն նշանյանի և Մկրտիչ Սրբազն Աղավնունիի ցույց տվի: Երկուքն ալ զմայեցան ձեռագրին պարունակության, սակայն ապահովցուցին զիա, որ վանքին չեր ձեռագիրը: Ցույց տվի նաև սիրելի բարեկամիս, այժմու պատրիարք Կյուրեղ Սրբազնին:

Քանի մը օր վերջ Կյուրեղ Սրբազնը հայտնեց, որ թորգոմ Սրբազնը զիս տեսնել կուզե: Ես շատ զբաղված ըլլալու և թորգոմ Սրբազնը անձամբ ճանչցած լըլլալու իրեն չէի այցելած: Թորգոմ Սրբազնը իր ինդիբել էր այդ նշանավոր ձեռագիրս ալ հետո տանիմ, որ ինքն ալ տեսնե: Տարի և Սրբազնը ինքն ալ զմայեցավ: Որ վանքին էր: Ինքն ալ ինդիբեց, որ վանքին նվիրեմ: Պատասխանեցի, որ անկարելի է: Խոսակցոթյան ատեն ուզեցինք գիտնալ թե վանքը ալ կամ այլուր օրինակ մը կար այդ եղակի և ցարդ անտիպ մնացած գրութենեն: Զարրհանելիանի մատենագրության զիմեցինք և գտանք, որ Սաղեմի վանքին մեջ այդ նյութին մեկ օրինակը կհիշվի:

Ցուցակներու դիմվեցավ և հետո մատենագրանին ու անկարելի եղակ գտնել Սաղեմի վանքին օրինակը: Սրբազնը առանց ունել պատճառի պնդեց, որ ատիկա ըլլալու է «կորսված» օրինակը: Ես ալ իմ կարգին պնդեցի, որ երբ վերջնականապես ապացուցի, որ վանքին է, ձեռագիրը այն ատեն վանքին կվերադարձնեմ, սակայն ոչ ատկե առաջ: Եվ ձեռագիրը ալ հետո մեկնեցա պանդոկ:

Ուշ գիշեր երկու վարդապետներ պանդոկ եկան: Ահագին աշխատությամբ, որ միայն վանքին ձեռագրաց ցուցակագրության անկատար, անգործնական ըլլալը ցույց կուտա, հաշողին վերջապես Խապայան կաթողիկոսի ցուցակին մեջ գտնել նկարագրությունը այս ձեռագիրին: Ցուցակը բերած էին իրենց հետո: Եվ արդարն իմ գնածս վանքին գողցված ձեռագիրն էր: Հաջորդ առավոտ նույն վարդապետներուն հետ ըստ մեր ժամադրության բարեկամի մը վաճառատան մեջ ձեռագիրը հանձնեցի և ընկալագիր ստացա: Նույն ատեն հայտնելով, որ եթե թորգոմ պատրիարքը մինչև վեց ամիս հրապարակավ, կամ գոնե ինծի անձնապես, շրացատրե վանքեն այս ձեռագրին հեռացնելուն մանրամասնությունները, ես ստիպված պիտի րլլայի հրապարակել: Ամիսներ անցան և ոչ մեկ ձայն: Ուստի ես իրապարակեցի: Արդյունքը նախատինքներու տարափ մը եղավ «Իրազեկ» ստորագրությամբ, կամավորապես խեղաթյուրյալ մանրամասնություններով: Կարծես թե ես ըլլալի կամավորապես ձեռագիրը վանք տանողը, և անոր սեփականությունը ըլլալուն համոզվելես վերջ վանքին վերադարձնողը, թնագ խոսք չկար թե ի՞նչպես ձեռագիրը վանքին մեկներ է, ի՞նչպես միարաեւորյան Քրին տակ 1931-են մինչև 1937 Երուսաղե-

մի հեավանառներուն մոտ ծախու մեացեւ  
է:

Սակայն ինչ որ ալ ավելի անհաշտելի էր, սա էր, որ իբր թի Թորգոմ Սրբազնին պատասխանատվությունը կիմրանար, քանի որ գողությունը կատարված էր ոչ թի իր պատրիարքության օրով, այլ երջանկահրշատակ Դուքան Սրբազնի օրով: Ճիշտ, ինչպես որ Արսլանյան Սրբազն Ղալաթիո Ազգ. Մատնենադարասնի ձեռագիրներու գողցրվիլը կրենին Նարոյան Սրբազնին վրա, անոր ժամանակ կատարված ըլլալով:

Ասոնք ապարդյուն արդարացումներ են, ինձի երեք գոհացում չարփեցավ, թի ինչպես տարիներ կանցնին և ձեռագրատան պարունակությունը գոնե տարին անգամ մը մայր ցուցակի վրա չի ստուգվիր, գիտնալու համար թի ձեռագիրը հոն է դեռ, թի «կորսված»:

Ալ ավելի այպանելի է սա պարագան, որ պատրիարքներ կմեռնին և անոնց հաջորդները իրենց ինկած իշխանության կարեռագույն մասը՝ հայ ձեռագիրները և եկեղեցական զանազան անոթներ ու հնություններ չեն ստուգվիր, թի գոյություն ունին, որ գոյուրյուն ունեցած ըլլան ցուցակներու վրա:

Թորգոմ Սրբազնի և Արսլանյան Սրբազնի հանցանքը իրենց նախորդներուն հանցանքին նվազ չէ:

Անիկա շատ պախարակելի, այպանելի վիճակ մըն է, որ այլևս պետք է վերջ գրտնա և իրարու հաջողուու իշխանություններ պետք է որ իրենց ստոցած իշխանության ազգապատկան գանձերն ու հարստությունները պարտ ու պատշաճ համարատվությամբ ստուգեն և անկե վերջ միայն ըստանձնեն:

Իմ գիտողությանցս հենակետն ալ այդ էր, և միայն մեղավոր մարդիկ ատոր զեմ կրնային արտահայտվիլ, ինչպես որ եղալ Սաղեմի տիսուր խնդրին առթիվ: Միայն Շիրազեկա կեղծանունին տակ ապաստանած մարդիկ կրնային խեղաթյուրանքով, ցեխարձակմամբ հանրության ուշագրությունը հեռացնել իմ խնդրած «բարենորդություններես»: Տարիներ վերջ միայն հավաստվեցավ, որ Սաղեմի վանքին ձեռագրաց իմ ուզած համարատվությունը կատարված է և ուեւ ուրիշ ձեռագրի պակաս չէ նկատված: Զեմ գիտեր անկե վերջ ալ շարունակված է, գոնե տարին անգամ մը կատարվելիք այդ գնահատելիք ստուգումը:

Զեւսպրաց գողության, որ դարձյալ հազարավոր տոլարներ արժողությամբ ազգապատկան ձեռագրաց շուրջ կղառնա, ուրիշ պատմություն մը:

Մեծ աղետն վերջ հրապարակավ ըսվեցավ և գրեցավ, որ Սեբաստիո Ս. Նշանի վանքին, ինչպես նաև Սեբաստիո շրջանին ձեռագիրները կարելի եղած է սնտուկներով Պոլիս ստացվիլ և անկե երուսաղեմի մատենադարանը տարվիլ:

Սեբաստիո ձեռագրաց ցուցակը կազմված է Թորգոմ Սրբազնին Մեծ աղետն առաջ, և հետո մաս առ մաս հրապարակված «Հանդէսիս Ամուրիայ»-ի թիվերուն մեջ:

Ուրեմն հոն գտնված ձեռագիրներուն մասին գրեթե լիակատար տեղեկություն ունեինք: Ասկե զատ Գարեգին Սրբազնն ալ տեսած է զանոնք Ս. Նշանի վանքը 1914-ին:

Արդ այդ ձեռագրաց ազգային հավաքածոյին ամենակարևոր քանի մը ձեռագիրներուն մասին տեղեկություններ ունիմ:

Սեբաստիո այդ գրադարաննեն ամենահանկարեւոր քանի մը գրված Կիլիկիա 1262-ին և մանրանկարյալ Թորոս Ռուսլինե, տարիներ առաջ Փարիզի մեջ կզն Տիգրան Քելիկյան ծանոթ հայ հնավաճառը: Հետո ձեռագիրը կվաճառե Պալտիմորի (Հյուս. Ամերիկա) Ուալթըրը Արդ Կալըրիի, ուր և կդանվի այժմ իբր այդ հավաքման թիվ 539:

Դարձյալ երկու երկաթագիր, մագաղաթյա ընտիր ավետարաններ, մին ժի դարեն, գործ մեր գեղեցկագույն գրիչներեն Կողմա գրրին, որոնք կգտնվեին դարձյալ Սեբաստիո Ս. Նշանի հավաքածոյին մեջ, երուսաղեմ՝ այժմ մեռած՝ հայ հնավաճառ մը ինձի ծախուցան: Սեբաստիո ցուցակեն գիտնալով որ անոնք Սաղեմի վանքեն չէին գողցուած, առանց այլ և այլի գնեցի, և այժմ հավաքման մաս կկազմեն:

Ուրիշ մեծարժեք ձեռագիր մը Սեբաստիո Բարազամ գրչին Միքայել որդիեն գրրված և 1914-ին ներկայացն եկեղեցին գտնը վող, ուր տեսած էր այդ ավետարանը Գարեգին Սրբազնն, այժմ կգտնվի Ուաշինկոնի Ֆըրիըր Արդ Կալըրին:

Արդ ի՞նչպես կըլլա, ուր այս ընտիր ձեռագիրները այնքան խնամքով կգատվին Սեբաստիո ձեռագրաց հավաքման մեջեն, և հոս ու հոն հրապարակ կհանվին: Զէ՝ որ Սեբաստիո ձեռագիրները եղածին պիս սնտուկներով Սեբաստիոյին Պոլիս և անկե ալ երուսաղեմ փոխադրված են: Ո՞ւր և

երբ այդ ձեռագիրները զատված են իրենց մայր հավաքածոյն և լաճառված: Այս է, որ կրցած է ատիկա ընել: Աստարակույս ձեռագիրները ճանչող մըն է, որ ըրած է:

Ասոնք հարցումներ են, որոնց կարելի չէ պատասխան գտնել գոնե առ այժմ:

\*\*\*

Վերջին պատմություն մըն ալ ձեռագրաց գողության անհատնում և վրդովիլ շարքեն:

Հ. Աճառյան 905—6-ին Թավրիզի Ս. Աստուածածին եկեղեցվոյ մեջ հանողիպի արծաթակազմ, ընտիր և լավ վիճակի: մեջ ավետարանի մը, որ նկարագրած է իր Թավրիզի ձեռագրաց ցուցակին մեջ: Այս մեծարժեք ավետարանը գրված է 1311-ին և մանրանկարված վարպետ հայ մանրանկարիչ մը, թորոս Սարկավագի:

1924-ին Ֆրետերիք Մաքլեր ի Փարիզ կը հրատարակեր Տոքուման տԱրդ Արմենին, ուր կներկայացներ վեց բոլորէջյան ընտքր մանրանկարներ: Աստոնցմե շորս հատը նըշանակված էին իրը Ռողենպերկի հավաքածոյն: Այս շորս մանրանկարները (Երկու թերթ) այժմ կգտնվին Նյու-Յորք պահանջյան Հազարյան բարեկամիս գեղարվեստական հավաքածովին մեջ: Երկու մանրանկար ալ Մաքլերի հրատարակության մեջ նշանակված են «Նախկին Խաչիկ Սվաճյան հավաքածոյն», որոնց այժմ ուր ըլլալու մասին տեղեկություն չունիմ:

1943-ին Նյու-Յորք պարսկաստանցի հրեա վաճառականնե մը ինծի ցուց տրվեցան Մարկոսի և Ղուկասի բոլորէջյան մանրանկարները, որոնցմե միայն Ղուկասը գնեցի իր հիշատակարանին համար: Հետո նույն հրեային զնեցի ԺԲ դարյան խիստ կարևոր թղթյա ավետարան մը Հոնական մանրանկարներով և հիշատակարաններով, մեծահամբավ Կողմա գրշեն գրյալ: Ասիկա որքան որ գիտեմ հնագում թղթյա հայերեն ավետարանն է մեր մոտ: (Թղթյա ձեռագիրներ, ու ավետարան, Ժ դարեն կան էշմիածնի նախկին հավաքման մեջ): Այս ավետարանին մեջ էր նաև ուրիշ ձեռագրե մը փրցված էշ մը, սկիզբն Մարկոսի ավետարանին գունագեղ խորանով և սկզբնատառերով: Ամենեն վերջ Ռապերդ Կարրեդ մեծահարուստ ամերիկացիին հավաքածուին մեջ: Հանդիպեցա Մաթեոսի մանրանկարին: Բոլոր այս մանրանկարները և Մարկոսի սկիզբը հանված էին Հ. Աճառյանի նկարագրած և 1906-ին Թավրիզի Ս. Աստուածածնա եկեղեցին մեջ գտնվող արծաթակազմ, լավ վիճակի մեջ եղող ընտիր և մեծարժեք

ավետարանեն, գրված և մանրանկարված 1311-ին:

Կարրեզի հավաքման Մաթեոսի, և իմ հավաքման Ղուկասի մանրանկարներուն և անոնց ձնուագրինք մասին նկարազարդ ուսումնասիրություն մը հրատարակեցի անգերեն թրինը դընի հումանիային հունիսի 1943. Ցվին մէջ:

Արդ ի՞նչպես կըլլա, որ Թավրիզի Ս. Աստուածածնա պատկանող ձեռագիր մը, որ կերևա իր արծաթ կազմով մասնավոր հարգանք պիտի վայելեր, 1906—1924-ի միջն ատեն մը եկեղեցին կողողավի, կտոր-կտոր կըլլա և էշ-էշ Փարիզին մինչև Ամերիկա կծախվի: Բուն ձեռագիրը իր ամբողջությամբ, նաև արծաթի կազմը, որ կարեոր կազմ մըն էր, այժմ բոլորում աներեւոյթ կմնաւ:

Այսպես, գոյություն ունեցող եկեղեցին մը օր ցերեկով կգողցվի կարեոր և մեծագին ձեռագիր մը և ատոր համար ոչ մեկ խոսք կըլլա:

Իրապես սահմանկեցուցիչ վիճակ մը:

Քանի մը սենթի համար իրարմի հաշիվ կպահանջնենք, նույնիսկ իրարու գուլս պայթեցնելու կելլենք: Ազգային իշխանություններ, հաստատություններ երկար բարակ հաշիվ կուտան նույնիսկ ծախսված նամակադրումներու համար: Սակայն ազգային իշխանություններ, թաղականություններ, հոգաբարձություններ, պատրիարքներ կուգան ու կերթան, առանց եկեղեցական իրերու, հնությանց ձեռագրաց և այլնի մասին հարեանցի ակնարկ մը նետելու, ուր մնաց ստուգելու նվ սակայն այդ մոռացված, «անգիտաց անպետ» իրերը ավելի արժեքավոր են, և ավելի կարեոր, որքան այն շատ մը դրամական գումարները, որոնց համար դրամ, ժամանակ և կարողություն կուպանն հանրության ցուց տալու համար, որ ասոնք անիմարդախ կկիրարկվին:

Մեծ Աղետին ատեն, եղր Ֆիլիպ էի, ահագին աշխատությամբ մոռցված ծակերու մեջ կամ անպետ դեղերու տակե նետված ձեռագիրներ գտա: Մաքրեցի ինամբով և այժմ՝ որքան որ գիտեմ ինամով կպահպին անոնք Ֆիլիպի եկեղեցին կամ առաջնորդարանը: Իրավ է, մեծարժեք բաներ չէին անոնք, սակայն գաղութին լավագույն հարստություններն էին:

Այսպես ամեն կողմ ես կրնամ ցուց տալ հայ ձեռագիրներ փշացման, անապահովության, ենթակա, այս ու այն տարակուսելի պատճառներով ծակերու, ծերպերու, խոռոշներու մեջ թխմված, զուրկ կանոնա-

վոր և գիտական խնամքեր, ենթակա ցեցի, խոնավության և համանավաճակ գողության կամ այլ տեսակ փշացումի: Մինչ նույնիսկ տարրական պարբերական ստուգություն մը, համարատվություն մը չի կատարվիր անոնց համար: Անոնց ցուցակները չհատարակված կմնան: Իզուր չէ որ մեր նախնիք «գիրք փակյալ կուռք են» վճռած են:

Թող քինախնդրություն, թող նախանձ, թող ինչ որ կուզվի վերապրվի ինծի, սակայն ի սեր Աստուծո, քանի բոլորովին ուշ չէ, ստուգումի ենթարկենք մեր մշակույթային ժառանգությունը, խնամք տանինք անոնց, փրկենք զանոնք կորուստե: Շատ բան շմնաց այն ահարկու հարվածեն վերջ, որ այնքան խնամքով մեզի տվին թուրքերը. չի նիզակեցինք անոնց և անոնց բոլորովին զլուխ չի հանած գործը մենք մեռ անտարբերությամբ մեղսակցյալ կատարյալ շընենք:

Իրավ է չունինք պատրաստված ուժեր բուրու ատոնցմեն օգտվելու, սակայն պատրաստության պետք չկա այդ ձեռագրերը և այլ իրերը ըմբռնելի, գոնք ձեռքի ցուցակներու մեջ արձանագրելու, ժամանակը անդամ մը անոնց գոյություն ունենալը արդ ցուցակներով վերստուգելու, զանոնք խոնավ տեղ շդնձլու, ցեցի, մվլոտելի փրկելու, փոշիները սրբելու, նկարազարդ թերթերու մեջ բարակ և կակուղ պաշտպանիչ թուղթեր դնելու և այլն:


Եթի ոչ ամեն տեղ, գոնք եթե տեղ մը կատարվի այս ինդրանիքներս, անտարակույս թե «Պայքար», որ հյուրնկալն է այս ոռչերուն, և թե ևս մեր վարձքն ստացած կրլամեք:

(«Պայքար» հաւելվար 15 և 16 1946 թ.  
Բուտոն)



Հոռոմոսի վանքի (Ղոշավանք) մեծ  
ժամատան ներմին անսը (ԺԳ դար)

**ՆԱՑԻՆԵՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂՅԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՆՉՊԵՍ  
ԿՈՂՈՊՏԵՅԻՆ ՆՈՒՊԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԵ**



Երմանացի զինվորներ 1941-ի հունվարին մեկ քանի անգամ Բարեգործականի գրասենյակը կուգան՝ Մատենադարանի մասին տեղեկություն առնելու գերմանացիք արդեն գրաված էին Բարիզի Ռուսական և Լեհական և Հրեական մատենադարանները:

Նուպարյան Մատենադարանին պաշտոնաները նույնատեսակ բախտ մը գուշակելով՝ կսկսեին մաս մաս փախցնել արժեքավոր հատորներ:

Փետրվարի երկրորդ շաբթօւն, առառու մը, մինչ Մատենադարանի վերակացու Պ. Ա. Անտոնյան տակավին անկողին էր դուռը բանալ տալով ներս կմտնեն շորս գերմանացիներ, մեկ զինվորական և կը սկսեն թե Պեղլինեն հասած հրամանի մը համաձայն Մատենադարանին բոլոր գրքերը հոն պիտի փոխադրվին անմիջապես Միկնուն պահուան՝ երեսունի շափ ֆրանսացի բեռնակիրներ կսկսին սնտուկներու մեջ լցնել Մատենադարանին գիրքերը նույն գործողությունը կշարունակվի երկու օր ևս Կլեցվին 168 սնտուկներ, որոնցին 48 հատը միայն կրնան գամմիլ այդ օրը: Մնացած ները բաց կմնան մեկ քանի օր Պերլինեն գաղիք կառախումքի մը սպասելով: Մինչև այն առեն՝ Բարեգործականի կողմէ դիմումներ կրլան ազդեցիկ անձերու միջոցավ: Վերին հրամանը կրարեփումի: Պերլինեն հատկապես մեկը կորկվի՝ ընտրություն կատարելու, փոխանակ դիրքերը ամբողջապես հոն փոխադրելու: Այդ անձն էր պրոֆեսոր Արտաշեն Աբելյան, որ մեկ քանի տարի առաջ Բարիզ գտնվելով ուսումնասիրական աշխատանք կիստարեր Մատենադարանին մեջ:

Պ. Արեղյան կհասնի մարտ ամսվա կիսուն և Բարիզ կմնա երեք շաբաթի շափ, հետք առնելով 18 սնտուկ գիրք փոխանակ 168-ի:

Պ. Արեղյան՝ Մատենադարանի պաշտոնաներուն խոսաւացած էր թե պիտի շաման Հայագիտական գործերն ատարեր գիրքեր և ամեն տեսակ գիրքեր, որ Վենետիկ ու Վիեննա տպված էին: Պ. Արեղյան չի հարգեր իր խոստումները և կը նարու գիրքեր ալ, որ բանասիրական կամ հայագիտական նյութի չին վերաբերիր Կորավե թերթերու և պարբերականներու հավաքածոներ, մինչև անգամ Միսիթարյան վանքերու հարատարակություններու Ան տարած է նաև բոլոր դերմաններն գիրքերը և Խորհրդային Հայաստանի բոլոր գործերը:

Գիրքերու ընտրության միջոցին վեճեր կծագին Պ. Արեղյանի և Մատենադարանի վերակացուին միջև, երբեմն փոթորկալից և «հայոցյական» բառերով: Գերմանացի պետք Տերենին կմիջամտե երկու անգամ: Հետք բերելով զեսմափոյի պաշտոնյա մը: Այդ ընդիմության շնորհիվ կորկվին մեկ քանի արժեքավոր հավաքածոներ:

Տարվաձ 18 սնտուկները կապրունակեն 1.343 հատոր գրքեր, 950-են ավելի հայերեն, մնացյալը ելքուպահան լեզուներով: Նաև 500-ի շափ կազմված կամ անկազմ պարբերականներ և 33 հայերեն հին ձեռագիրներ: Առողք, բոլորը միասին, ներկա վաճառմամբ հաշվելով կարծեն եղեր 440.000 ֆրանք, եթե կարելի ըլլար զանոնք ձեռք բերել: Կազմակերպի թե անոնց մեկ մասը հազվագյուտ են, կամ բացարձակապես «անգտանելիության Տրված տեղեկության նախելով այս կորուսար շատ ավելի մեծ պիտի ըլլար, եթե զերման պաշտոնյաներու շնորհալորելի անհոգության հետևանքով Մատենադարանին վերակացուն և օգնականները չի հաջողեին սնտուկներեն հանել և փախցնել այլ և այլ թանկագին հարատարակություններ:

«Պայման»

(«Երաբեր» հունվար 17 1946 թ. նյութություն)

## ՀԱՅ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԳԱՆԶԱՐԱՆԸ



ՍՍՌ Մատենադարանը շատ հին պատմություն ունի, նրա ակոնքները, կարելի է ասել, սկիզբ են առնում V դարից։ Վահան Մամիկոնյանին ուղարկած իր նամակում Ղաղար Փարակեցին գանգատվում է, որ էջմիածնի միաբանությունը խլել է իր ունեցվածքը, որի հետ նաև Հունարեն ձեռագրերը։ «...և զիս Հանին մերկ և թշնամնոր յամենայն արարելոց իմոց, զոր և մանկութենէ արարեալ էի։ Զի անգամ և զհոռում գրեանդ ոչ ետուն զկնի իմ»<sup>\*)</sup>։

Անկասկած, էջմիածնում գրատուն է եղել և այդ վեցրյած ձեռագրերը դրվել են միաբանության մատենադարանում։

Ուշ միջնադարում էջմիածնի մատենադարանը Հարստացել է զանազան ձեռագրական ժողովածուներով։ Այդ ժողովածուներից առանձնապես կարեռ են Հաղպատի, Սահանի և Սաղմոսավանքի ժողովածուները (XII—XIII դար), որոնց մի մասը հասել է մեզ։ Ուշ շրջանում միացվում է նաև Հոհանավանքի ձեռագրերի ժողովածուն (XVII դար)։ Վերջինս դպրատան հետ միասին Հոհանավանքից տեղափոխվում է Փիլիպոս կաթողիկոսի պատվերով<sup>\*\*</sup>)։ «Եվ զգարատունն, որ ի Յօհաննավանք հաստատեցին, սա (Փիլիպոս կաթողիկոսը (1633—1654 թ. թ.) և կարի հաստատեաց... և յետ ամաց ինչ փոխեաց ի Յօհաննավանքից և երեր ի սուրբ էջմիածնին...»։

Մինչև Սիմեոն Երևանցի կաթողիկոսը (1763—1780 թ. թ.) մատենադարանը, ըստ տեղեկությունների, ավելի շուտ նման է ե-

ղել պահեստի, քան իրապես մատենադարանի։ Սիմեոն կաթողիկոսը առաջինն էր, որ մատենադարանը դրեց իր կոչման բարձրության վրա։ Այդ առանձնապես վերաբերում է արխիպային բաժնին, որի սկիզբը, կարելի է ասել, դրեւ է Սիմեոն Երևանցին։ Ի միջի այլոց, այդ ժամանակվանից է, որ էջմիածնի գրատան ձեռագրերը կորսուից ազատելու համար, սկսում են կնքել։ Մեր Մատենադարանում այժմ բավական թվով ձեռագրեր կան ՏՎՀՇ դարի էջմիածնի գրատան կնիքներով։

Զեմս Մորերի 1810—16 թ. թ. ուղեգրություններից երեսում է, որ նրա էջմիածնի այցելած ժամանակ Մատենադարանը տեղավորված է եղել մի մութ սենյակում, ձեռագրերը ժամկված են եղել փոշով և ցուցակ չեն ունեցել։ Իր ուղեգրությունների մեջ Զեմս Մորերը նկարագրելով Մատենադարանի անմիթար վիճակը, ցինիկորեն նկատում է, որ լավ կլիներ այդ ձեռագրերն օգտագործվեին բաղնիքների ջուրը տաքացնելու համար, քան պահվեին այդ վիճակում<sup>\*\*\*</sup>)։

Մատենադարանում զգալի բարեփոխություն է կատարվում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին կցվելուց հետո։ 1828 թվին ներսես Աշտարակեցու հրամանով Ղրիմից էջմիածնին է տեղափոխվում Մանվել վարդապետ Գրումուշխանեցին, որին հանձնարարվում է երկու այլ վարդապետների հետ միասին կարգի բերել Մատենադարանը<sup>\*\*\*\*</sup>)։

Մեզ հասած տեղեկություններից երեսում է, որ էջմիածնի Մատենադարանի ձեռագրերի ժողովածուն XIX դարի առաջին բառորդում շատ փոքր է եղել—ընդամենը 307 ձեռագրի, որոնց մասին կցկառու տեղեկու-

<sup>\*)</sup> Ղաղար Փարակեցի, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս 1904 թ., էջ 196։

<sup>\*\*) Առաքել Դաւրիձեցի, Պատմութիւն, Վաղ-պատ 1896 թ., էջ 325։</sup>

<sup>\*\*\*\*)</sup> Ուղեգրություններ, III հատոր։

<sup>\*\*\*\*\*)</sup> Ա. Երիցյան, Ամեն, Հայոց Կաթ., մասն Բ, էջ 124։

թրում պահպել է Շոպենի աշխատության մեջ\*):

1837 թվին Հովհան Վարդապետ Շահնախոնյանը Սինոփի հրամանով կազմում է ձեռագրերի առաջին ցուցակը, որը հրատարակում է ակադեմիկոս Բրոսն ոռուսերեն և ֆրանսերեն լեզուներով 1840 թվին: Այդ ցուցակը պարունակում է 484 ձեռագիր\*\*):

Էջմիածնի Մատենադարանն այդ ժամանակ ևս սակայն շարունակում է նմանվել պահեստի Թաղիադյանը, որը 1847 թվին այցելել էր Էջմիածն, հետևյալն է գրում. «Գրապետ է, որ ունի զբանալի գրատան աթոռոյն, ուր յամին մի անգամ հազիւ մը-

1850 թվին Էջմիածնի Մատենադարանը դեռ այնքան անմիտիթար վիճակում էր գրտնը վում, որ Ալեքսանդր Բ կայսրը (գեռ թագավորանդ) Էջմիածնի այցելելով դիտողություն է անում ձեռագրերն անխնամ պահելու առթիվ և հանձնարարում է կազմել նրանց ցուցակը:

1860 թվին Դանիել Վարդապետ Շահնախորյանը կազմում է ձեռագրերի ցուցակը, որը և հրատարակվում է Հ. Կարինյանի կողմից 1863 թվին \*\*\*): Զեռագրերի այդ ցուցակն ընդգրկում է 2340 ձեռագիր: Հետագայում ձեռագրերի ժողովածուն հարըստանում է նոր ձեռագրերով, նվիրված մի



### Մեր ձեռագրերի ժողովման կինուրուններից մեկը

տանէր, և այն՝ մանաւանդ վասն ցուցանելոյ զայն երեսի անցաւորաց»\*\*\*\*):

1857 թվին Հաքստհառուզենը երբ Էջմիածնին այցելելով ցանկանում է տեսնել Մատենադարանը, նրան այդ չի հաջողվում, որովհետև Մատենադարանի բանալին կորսըված է լինում և փնտրում ու չեն գտնում, որ բաց անեն:

\*) И Шопен. Исторический памятник состояния арм. области в эпоху ее присоединения к Российской империи, СПБ 1852, стр. 915.

\*\*) Каталог книгам Эчмиадзинской библиотеки сост. М. Броссе, СПБ 1840.

\*\*\*) Ճանապարհորդութիւն Մեսրովայ Թաղիադեանց, Կալկութա, 1847 թ., էջ 110:

քանի բարեգործ անձանց կողմից (Ք. Պատկանյանի, Ա. Հովհաննիսյանի և այլոց ժողովածուները): Ի գեպ այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում Կ. Եղյանը:

1915 թվին, առաջին համաշխարհային պատերազմի ժանր օրերին, Էջմիածնի Մատենադարանի ձեռագրերը Սինոդի հատուկ կարգադրությամբ տեղափոխվում են Մոսկվա՝ վտանգից ազատելու համար. հետագայում ձեռագրերը Մոսկվայից ետ են բերվում սովետական իշխանության կողմից:


\*\*\*\*) Մայր ցուցակ ձեռագիր մատենից դրադարանի սրբոյ Աթոռոյ Էջմիածնի, 1863 թ., Թիֆլիս:

1917 թվին, Տաճկահայտառանի ողբերդ զության ծանր շրջանում, կոտորածից ազատված գաղթականների և առանձին էքըսպեղիցիանների միջոցով Տաճկահայտառանից բերվում և էջմիածնին են հանձնվում 1526 ձնուղիբեր, որոնք միացվում են Մատենադարանի ժողովածուին:

Մատենադարանի վիճակը արմատականապես փոխվում և իսկապես գիտական գրադարանի է վերածվում սովետական իշխանության օրոք: 1920 թվի դեկտ. 17-ի դեկտեմբերին այս պետականացվում է, իսկ 1921 թվի փետր. 6-ի դեկտեմբերի Մատենադարանի բազայի վրա հիմնվում է կոլտուր-

առությամբ գրադիվող մասնագետների աշխատանքը հեշտացնելու համար (և գ) ուսումնասիրել Հայկական ձեռագրերը ու նըրանց պարունակած կարենոր բովանդակությունները գիտության սկիականություն դարձնել:

Անհրաժեշտ է նշել, որ ձեռագրերի ժողովածուի հարստացումը սովետական շըրշանում կատարվել է մի քանի ճանապարհով. ա) նախ՝ բերվել ու միացվել են առանձին փոքրիկ ձեռագրական ժողովածուները (նախկին Հազարյան ճեմարանի ժողովածուն Մոսկվայից, Ներսիսյան դպրոցի ժո-



c

### Հաղպատի վանքը

Մեր ձեռագրերի ժողովման կենտրոններից մեկը

պատմական ինստիտուտ:

Այդ օրվանից ՀՍՍՌ Մատենադարանի ղեկավարությունը՝ աշխատանքի գլուխ անցնելով, իր ուշադրությունը կենտրոնացնում է շորս գլխավոր Հիմնական խնդիրների վրա.— ա) Հարստացնել Մատենադարանի ձեռագրերի ժողովածուն, բ) ապահովել ձեռագրերի պահպանումը՝ զնելով այն գիտական հողի վրա, գ) կազմել ձեռագրերի և վավերագրերի համար հեղինակային, թեմատիկ և այլ բիբլիոգրաֆիաներ՝ Հայագի-

դովածում Թիֆլիսից, Սևանի, Տաթևի և այլ վանքերի ժողովածուները). բ) պետությունը Մատենադարանին ամեն տարի որոշ գումար է տրամադրում, որով Հնարավոր է լինում գնել մասնավոր մարդկանց վաճառած ձեռագրերը և գ) նվերների ճանապարհով:


ՀՍՍՌ Մատենադարանն իր ծաղկման շրջանն է թևակոխել 1938 թվից սկսած: Նրա նկատմամբ Հատուկ Հոգատարությունն է ցուցաբերվում Սովետական Հայաստանի

կառավարության կողմից, որի հետեանքով Մատենադարանը վերածվել է Հայագիտական աշխատանքների ուսումնասիրության կարևորագույն օջախի:

\*\*\*

ՀՍՍԾ Մատենադարանի ձեռագրերի ժողովածուն իր պարունակած ձեռագրերի հընությամբ և բովանդակությամբ աշխարհի ամենախոշոր ձեռագրատներից մեկն է: Նա պարունակում է ավելի քան 10.000 հայերեն ձեռագիր, չհաշված պատառիկները և արարական, վրացական, եթովակական, ասորական և այլ լեզուներով գրված ձեռա-

բեր դիտությունների վերաբերող նյութեր: Կարելի է ասել, չե՞տ զիտության մի բնագավառ, որն իր պատմության համար չկարողանա հարուստ նյութեր գտնել ՀՍՍԾ Մատենադարանի ձեռագրերում: Նախասովետական հայագետների շրջանում իշխող կարծիքն այն էր, որ հայ մատենագրությունը հարուստ է միայն կրոնական և պատմական բովանդակություն ունեցող նյութերով, մասսամբ՝ տաղերով: ՀՍՍԾ Մատենադարանի նյութերի հիման վրա, տարբեր մասնագիտությունների գծով տարվող ուսումնասիրություններն այժմ համոզեցուցիլ ձևով ցույց են տալիս, որ հայ մատենա-



### Սևանի վանքը

Մեր ձեռագրերի ժողովման կենտրոններից մեկը

գրերը և պատառիկները: ՀՍՍԾ Մատենադարանից հետո, հայկական ձեռագրերի ժողովածուներից իրենց խոշորությամբ աշքի են ընկնում Վենետիկի Միհիթարյանների ձեռագրերի ժողովածուն, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Մատենադարանը, Վիեննայի, Նոր Զուղայի, Փարիզի ազգային գրադարանի և այլ գրադարանների ձեռագրերի ժողովածուները:

ՀՍՍԾ Մատենադարանի ձեռագրերի ժողովածուն պարունակում է բազմազան նյութեր, նրանց մի մասը կրոնական-կանոնական տեքստեր են, իսկ մյուս մասը՝ տար-

բությունը հարուստ նյութեր է պարունակում նաև մաթեմատիկայի, տոմարի, աշխամիայի, աշխարհագրության, փիլիսոփայության, բժշկության և բազմաթիվ այլ գիտությունների պատմության համար: Պարզվում է, որ հայ ստեղծագործ միտքը քիչ աշխատանք չի կատարել հարստացնելու համաշխարհային գիտությունն իր բազմազան ճյուղերի մեջ Ռուս աշքի ընկնող գիտնական Վ. Բրյուսովը ծանոթանալով հայ մատենագրության հետ, այդ առթիվ հետեւյալն է գրում. «Հայոց պատմությունը ուշադրության արժանի է այնքան, որքան

ամենանշանավոր ժողովուրդների պատմությունը, որոնք իրենց ինքնուրույն ներզերումն են կատարել մարդկության կուլտուրայի մեջ, առանց բացառելու եղիսաբացիներին, հելլեններին, հոռմացիցիներին և ժամանակակից ելքովայի ժողովուրդներին»\*):


**ՀՍՍՌ** Մատենադարանի ձեռագրերի ժողովածուն, ամենից առաջ, արժեքավոր է իր հնագույն ունիկումներով։ ՀՍՍՌ Մատենադարանի սեփականություն են հանդիսանում Երկու հնագույն պատարիկներ, որոնք ըստ մեր պալիոգրաֆիկ ուսումնասիրության, V—VI դարի հնություն ունեն (տե՛ս Պետական համալսարանում մեր կարդացած դասախոսությունների դասընթացը՝ «Բարտառակված Հայկական պալիոգրաֆիայի» խորագրով)։ Համաշխարհային նշանակությամբ |ունիկումներ են նաև կազարյան ճեմարանի նշանավոր ավետարանը 887 թվի ընդօրինակությամբ, փղոսկրյա ավետարանը 998 թվի ընդօրինակությամբ, մեզ հասած հայերեն հնագույն թղթա ձեռագրը 971 թվի ընդօրինակությամբ և ուրիշները։

**ՀՍՍՌ** Մատենադարանի սեփականություն են հանդիսանում մեր մի շարք մատենագիրների հնագույն և լավագույն ընդօրինակությունները։ — Եզնիկ Կողբացու (մեզ հասած աշխարհում միակ օրինակը), Մովսես Խորենացու, Եղիշեի (նշանավոր Անձեւացյաց օրինակը), Եփրակացու, Ղևոնդի, Սամվել Անեցու (իր աշակերտի ձեռքով գրած), Օրբելյանի և այլոց բնագրերը և ընդօրինակությունները։ Կարելի է տսել, որ մեզ հասած հայ մատենագրության հնագույն և լավագույն մատենագիրների գործերի մոտավորակես կեսից ավելին գտնվում է ՀՍՍՌ Մատենադարանում։ Ի դեպ, պիտի ասել, որ հայոց պատմության համար անշափ արժեքավոր են մեր գրիների հիշատակարանները, որ ոնի Մատենադարանի ձեռագրերի մեծ մասը։ Այդ հիշատակարանների մշակումը և հրատարակումը հայագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է։

**ՀՍՍՌ** Մատենադարանի ժողովածուները հարուստ նյութեր են պարունակում նաև մեր

աղերգումներից։ Մատենադարանի ձեռագրերում կարելի է գտնել նարեկացու, Լամբրոնացու, Ֆրիկի, Հովհաննես երզնկացու, Քոչշակի, Նարաջ Հովհաննեսի և ավելի քան այլ երեք հարյուր տաղերգումների գործերը։

**ՀՍՍՌ** Մատենադարանում են գտնվում սակայն ոչ միայն հայ մատենագրության, այլև մեր հարևան ժողովուրդների մատենագրության համար մեծ արժեք ունեցող երկեր։ Դրանցից կարելի է մատնացույց անել «Թարթիս Յիովլիբայի» հայերեն թարգմանությունը (Սարգիս Գոշի XIII դ.)՝ եղբայրական վրաց ժողովրդի պատմության



Փղոսկրյա Ավետարանի կազմը, որն ունի V—VII դարերի հնություն, իսկ Ավետարանի ձեռագիրը 998 թվականի ընդօրինակություն է հանդիսանում։

Համար, Մովսես Կաղանկատվեցու Աղյանից պատմության հնագույն ընդօրինակությունը՝ Աղքարեցանի պատմության համար (սա միակ մեզ հասած պատմությունն է աղվան ժողովով մասին), Խաչատրը Կաֆայեցու տարեգրությունը՝ Ղրիմի պատմության համար, Խաչատրը Զուղայեցու պատմությունը՝ պարսից պատմության համար և այլն։ Բափառական հայ մարդը, որ եղել է աշխարհի բոլոր ծայրերում, գրել և մեղ է թուղել իր հիշողությունները, որոնք և արժեքավոր պատմական նյութեր են հանդիսանում։

\*) В Брюсов. Летопись исторических судеб арм. народа, Москва 1918, стр. 8.

ՀՍՍՌ Մատենադարանում կան և այնպիսի հնագույն թարգմանություններ հնարենից, ասորերենից, որոնց բնագրերը չեն պահպանվել և այժմ նրանք գիտությանը հայտնի են միայն հայերեն թարգմանությունների հիման վրա (Եվսեբիոս Կիսարացի, Երինիոս, Հերմեն, Հովհաննես Ոսկերեռնի, Փիլոնի որոշ աշխատություններ և այլն). Կան նաև փիլիսոփայական բովանդակությամբ թարգմանական բազմաթիվ տեքստեր (արիստոտելյան, ստոյկյան, հեռ-պլատոնական բովանդակությամբ), ո-

կոմիտունները ՀՍՍՌ Մատենադարանի սեփականությունն են հանդիսանում:

Բազմաթիվ են ՀՍՍՌ Մատենադարանում նաև մանրանկարչական արժեք ներկայացնող ձեռագրերը: Կիլիկիալի, Բաղչչի, Սյունյաց, Կաֆայի և Հայկական գրչության գրեթե բոլոր օշախներում ծաղկանկարված ձեռագրեր կարելի է գտնել ՀՍՍՌ Մատենադարանում:

Պատահական չէ, որ ՀՍՍՌ Մատենադա-

րանի այցելուների մատյանում օտարազգիների կողմից գրված հիշատակարաններում նրանց հեղինակները հիացմունք անհայտնում իրենց տեսած ձեռագրերի և հայ ժողովրդի անցյալի հարուստ արվեստի մասին:

Ձեռագրերի բաժնից բացի, ՀՍՍՌ Մատենադարանն ունի արխիվային և տպագրի գրականության բաժիններ: Արխիվային բաժնում պահպան են մեզ հասած հնագույն բոլոր փակերները սկսած XV դարից մինչև նորագույն ժամանակները: Արդ վավերագրերի թիվը հարյուր հազարների է հասնում: Նրանք անշափ արծեքավոր են մեր նոր պատմության համար:

Տպագրի գրականության բաժինն իր մեջ ընդգրկում է Հինգ ենթարածիններ — հնատիպ գրականության, մամուլի և հայկական, ուսւական ու կլրպական գրականության. այս բաժիններում կարելի է տեսնել հայոց պատմության համար մեծ արժեք ներկայացնող գրեթե բոլոր ունիկումները — 1512 թվի առաջին հայերեն տպված գիրքը, 1794—1796 թվին տպված առաջին հայկական ամսագիրը, «Հիւսիսափայլ»-ը և ուրիշները.

\* \* \*

Ի՞նչ կարելի է անել առաջիկայում ՀՍՍՌ Մատենադարանի ժողովածուն էլ ավելի հարստացնելու, նրա պահպանումն ավելի ապահովելու, ձեռուրերի բիբլիոգրաֆիան ավելի կատարյալ դաշնելու և հայ մատենադրությունը գիտությանը ներկայացնելու աշխատանքներն ավելի ծավալելու ուղղությամբ: Այս հարցը շատ կարևոր հարց է և հետաքրքրում է հայագիտությամբ զրադալող ամեն մի փաղաքացու:

Մի քանի խոսք ասենք այդ մասին, սկսենք շենքից:

Զնայուծ ՀՍՍՌ Մատենադարանի ներկաները շատ ժամանակ չեն որ կառուցվել է



### Սահմանական Մատենադարան

Գործ՝ արքեստի վաստ. գործիչ Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
րոնց հունական բնագրերը շնայած պահպանվել են, բայց ուշ լենդորինակությամբ, մինչեռ հայկական թարգմանությունը կատարվել է V—VI դարից առաջ եղած հունարեն բնագրերի հիման վրա: Կասկած լինել չի կարող, որ հետագայում գիտություններ երկար պիտի զբաղվի հայերեն թարգմանություններով, իսկ այդ թարգմանությունների մեծ մասի հնագույն լենդորինա-

ակադեմիկոս Թամանյանի նախագծով, սակայն Սովետական Հայաստանի կառավարությունը շի բավարարվում դրանով և որոշել է կառուցել Մատենադարանի նոր շենք՝ հաշվի առնելով աշխարհի բոլոր լավագույն գրադարանների պահպանման փորձը։ Շինարարությունն արդեն սկսվել է։ Այդ շենքը պիտի լինի երևանի ամենագեղեցիկ շենքից մեկը։ Նա կառուցվում է Ստալինի



Անանիա Շիրակացի  
Գործ՝ Ն. Խեկովյան

պողոտայի վերին ծայրում և իր ճակատով նայում է դեպի Արարատ։ Ազգային կուտուրայի նկատմամբ սովետական իշխանության ցուցաբերած այս հոգատարությունն ամեն մի գովասանքից բարձր է։ Օտար բըռնությունների տակ երեմնի հեծող հայ մարդը ինչպիսի հպարտությամբ պիտի բարձրանա Մատենադարանի աստիճաններով դեպի շենքը՝ աջ ու ձախ կողմերում խորացած տեսնելով Մաշտոցի, Սահակ Պարթևի, Խորենացու, Երևանցու և այլ

աշբի ընկնող հայ մատենադարաների արձանները։

ՀՍՍՌ Մատենադարանի դիրեկցիան վերջին տարիներս զգալի աշխատանք է կատարել բիբլիոգրաֆիաներ կազմելու ուղղությամբ, որը շատ կարևոր է ինչպես ձեռագիրի պահպանման, այնպես և գիտական աշխատողների ուսումնասիրությունների դյուրացման տեսակետից։ Մեծ գործ է կատարվել այդ ուղղությամբ հատկապես վերջին տարիներս դիրեկտոր պրոֆ. Գ. Աբովյանը ձեռներեց և ժրաշան աշխատանքի շնորհիվ։ Մենք այժմ Մատենադարանում շունչներ ու մի ձեռագիր, որը չունենա սիստեմատիկ քարտ, գրանցված վիճին մայր ցուցակում և մշակված վիճին թեմատիկ և մյուս բիբլիոգրաֆիաների համար։ Մատենադարանի առջեւ այժմ ինդիր է ծառացած— հրատարակել այդ ձեռագիրի լրիվ ցուցակները։ ՀՍՍՌ Մատենադարանի դիրեկցիան կազմակերպված աշխատանք է տանում կարևոր տեքստեր հրատարակելու ուղղությամբ։ Մատենադարանի ձեռագիրերից վերջին տարիներս հրատարակվել են հետեւյալ կարևոր աշխատությունները։— ակադեմիկոս Ս. Մալխասյանը հրատարակել է Ամերդովլաթի «Օգուտ բժշկութեան», Սեբեոսի պատմության համեմատական տեքստերը, ակադեմիկոս Հ. Մանանդյանը հրատարակել է Թեոնի «Յաղագս ճարտասանական կրթութեանց» աշխատությունը, պրոֆ. Ե. Տեր-Մինասյանն այժմ աշխատում է Եղիշեի համեմատական տեքստի վրա։ Մեր աշխատությամբ հրատարակված են՝ Զենոր Գլահին և Հովհանն Մամիկոնյանին վերագրվող «Պատմութիւն Տրօնոյ» համեմատական տեքստը, Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրութիւն»-ը, Շիրակացու «Տիեզերագիտութիւն և տօմար»-ը, Շիրակացու «Մատենագրութիւն»-ը և մանր մի քանի տեքստեր։ Մատենադարանի գիտական աշխատող Հ. Աբրահամյանի աշխատությամբ լույս է տեսել «Անանուն ժամանակագրութիւն»-ը և «Կալվածագրեր»-ի ժողովածուն։ Մատենադարանը հրատարակել է «Գիտական նյութերի ժողովածու»-ի առաջին հատորը և պատրաստել է հրատարակության երկրորդ հատորը։ Սակայն այս ամենը դեռ քիչ է։ Մատենադարանի դիրեկցիան նպատակ ունի սիստեմատիկ աշխատանք կատարել տեքստեր ուսումնասիրելու և հրատարակելու ուղղությամբ։ Պիտի ի նկատի ունենալ, որ Մատենադարանի նյութերի հրատարակությամբ զբաղվում են նաև ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիան, Երևանի Գև-

տական համալսարանը, Մանկավարժական ինստիտուտը և այլ հաստատություններ: Մատենադարանի հետ են կապված մեր ավագ և երիտասարդ գրեթե բոլոր հայագետները:

ՀՍՍՌ Մատենադարանի դիրեկցիան այժմ մեծ աշխատանք է կատարում Մատենադարանի բիմիական լաբորատորիան գիտական հոգի վրա զննելու և կազմառունը ընդարձակելու ուղղությամբ. հրավիրվել են երիտասարդ մասնագետ կադրեր: Այս աշխատանքներն անհրաժեշտ են մեր բոլոր հիմնադրամի մեջ զննելու համար: Դարավոր փոթորիկներից և գերություններից փրկված ու մեր պապերից մեզ հասած ավանդները աչքի լուսյի պես պիտի պահել—այս է ՀՍՍՌ Մատենադարանի դիրեկցիայի և աշխատողների ըմբռնումը ձեռագրերի պահպանման խնդրում:

ՀՍՍՌ Մատենադարանի դիրեկցիան աշխատում է նաև առաջիկայում պատրաստել հայագետ երիտասարդ լուրջ մասնագետներ, որոնք պիտի գրադպն ձեռագրերի ուսումնասիրությամբ: Այդ պատվավոր գործը կառավարությունը հանձնարարել է Վ. Մ. Մոլոտովի անվան երեանի Պետական համալսարանի ասպիրանտուրային:

Մատենադարանի ամեն մի այցելու, որը սիրում է հայագիտությունը, շի կարող ուրսխությունը զգալու, երբ տեսնում է լուսավոր և գեղեցիկ գահին ծովականի հայագետների ավագ և կրտսեր սերունդը մտագրադ ձեռագրերի վրա աշխատելիս:



Մենք ցանկանում ենք մի քանի խոսք էլ ասել արտասահմանի մեր եղբայրների պարտավորությունների մասին— թե ի՞նչ կարող են անել նրանք մեր ազգային ավանդների գանձատունը հարստացնելու ուղղությամբ: Մերձավոր Արևելքում մեր կատարած ճանապարհորդության ժամանակ նկատեցինք, որ բազմաթիվ ուսուցիչներ, հայագետներ, քահանաներ և այլ քաղաքացիներ իրենց մոտ ունեն ձեռագրեր, որոնք պետք է ասել, առանձին վերցրած ուսումնասիրության համար թերեւս մեծ արժեք չեն ներկայացնում: և ցանկալի է, որ այդ ձեռագրերը ուղարկվեին հայրենիք՝ ՀՍՍՌ Մա-


տենագարան: Միաժամանակ այն քաղաքացիները, որոնք հայրենիք են վերադառնում, պիտի ամեն կերպ աշխատեն իրենց հետ բերել իրենց ունեցած ձեռագրերը: Զպիտի մոռանալ, որ համաշխարհային առաջին պատերազմի զաման օրերին տաճկական կոտորածից փրկված մեր հայ եղբայրներն իրենց փախուստի պահին անգամ, հնարավորություն չունենալով երբեմն ամենաանհրաժեշտ իրը վեցնկու, չէին մոռանում իրենց տոնմական սրբությունը— ձեռագրերը և դրանք գրկած բերում էին իրենց երեխաների հետ միասին: Զեռագրերի նկատմամբ հայ մարդու ունեցած այս գրասիրության շնորհիվ է գուցե, որ անցյալի արհավիրքների բոլից փրկվել ու մեզ են հասել այսքան շատ հայկական ձեռագրեր:

Անհրաժեշտ է, որ արտասահմանի մեր հասարակական կազմակերպությունները ևս սկսն լուրջ մտածել իրենց ունեցած ձեռագրական փոքրիկ ժողովածուները հայրենիք փոխադրելու ուղղությամբ: Նրանց համար գծվար է լավ կազմակերպել թե ձեռագրերի պահպանումը և թե մշակումը: Բացի այս, դրանում շատ թիւ են ձեռագրերի ուսումնասիրությամբ զբաղվող անձինք և սույն տպագրական հնարավորությունները: Ցրված այդ ձեռագրերը հայրենիքի ձեռագրական ընդհանուր ժողովածուին միացվելով հնարավորություն կտան գիտական շատ ու շատ կնճռոտ հարցեր լուծելու:

Զեռագրերի հավաքման ուղղությամբ մեծ գործ ունեն կատարելու արտասահմանի մեր հայ բարեկործ հարուստները: Արտասահմանում եղած ժամանակ նրանցից շատերը դիմում էին մեզ բարեգործական այս կամ այն ձեռնարկության մասին: Ահա՝ բարեկործության մի կարևոր ասպարեզ— փրկել կորստից հայկական ձեռագրերը: Նրանք նյութական ո՛չ մի միջոց չպիտի խընային վաճառքի հանված հայերեն ձեռագրերը գնելու և հայրենիք տեղափոխելու գործում: Նյութական կորուստները կարելի է լրացնել, իսկ կորած ձեռագրերը երբեք

Ամեն մի հայ մարդ, եթե նա իրոք սիրում է իր ժողովրդի կովտուրան և իր հայրենիքը, պիտի աշխատի կորստից փրկել հայկական ձեռագրերը և հայրենիք տեղափոխել նրանք:

## ՀՆԱԳՈՒՅՑՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՕՉԱԽԸ<sup>\*)</sup>



տալիինյան չորրորդ հնգամյակում նախատեսված է Երևանում կառուցել Մատենադարանի նոր շենք:

Մատենադարանի շենքը կառուցվում է Քանաքեռի բլրի լանջին, Ստալինի անվան պողոտայի վերջում և շրջափակելու է պողոտայի հեռանկարը: Նա գտնվելու է մի բարձութի վրա, որը 18 մետր բարձր է լինելու գառիվայրի վրայով գետի նրան տանող սանդուխիքի առաջին աստիճանից: Պողոտայի կողմից շենքին մերձեցումը իրականացվում է դարպասի միջոցով. ապա 130 մետր երկարությամբ կանաչազարդ լայն ծառուղին հասցնում է սանդուխիներին, որոնք գառիվայրի վրայով շորս թոփշով տանում են գետի շենքի առջևի հրապարակը և այսուհետև զեղ պանդուների միջոցով դեպի շենքի գլխավոր ֆասադի առջևի կորդոները:

Շենքի նախագծման ժամանակ հաշվի են առնված մի շարք կրթականակես պարտադիր նախապայմաններ, որոնք համաշխարհային գիտության ալյանսական բնագավառում ունեցած տվյալների հիման վրա, անհրաժեշտ են ձեռագրերի պահպանման համար:

Պետք է ասել, որ հին ձեռագրերի պահպանման և ուսումնասիրման համար միայն հարմարեցված շենքերը բացառություն են կազմում: Այս տեսակետից Մատենադարանի շենքը, որպես ազգային կուլտուրայի գրավոր նյութերի պահպանման և ուսումնասիրման համար կառուցված հատուկ ճարտարապետական օբյեկտ, ոմի բացառիկ նշանակություն:

<sup>\*)</sup> Այս հոդվածը լույս է տեսել Երևանում ոռակերեն լեզվով հրատարակվող «Կոմունիստ» թերթում:



Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հստ նախագծի ձեռագրերը պահպելու հներքնահարկում, որտեղ ենթադրվում է զետեղել նաև պահեստարանի օժանդակ բաժինները:

Շենքի վերին հարկերը նախատեսված են Մատենադարանի այցելուների սպասարկման համար: Առաջին հարկում տեղավորվելու են.- գլխավոր վեստիբյուլը, ցուցահանդեսացմբն հանդինքը, դասախոսարանը. Մատենադարանի դիրեկտորի, առանձնահենյակը և գրասենյակը: Երկրորդ հարկը, չիմնականում, հատկացված է փիտական աշխատազններին. այստեղ տեղավորված են, շենքի ներքին հնարավոր աղմուկներից ձայնամեկուացված, 10 անշատ առանձնասենյակներ պարապմունքների համար: Երրորդ հարկում գտնվում են նիստերի դահլիճը, հայագիտության դահլիճը, ընթերցասրանը. սրանց կից կան մի շարք սպասարկող բաժիններ:

Նշված դահլիճների և վեստիբյուլի ճարտարապետական լուծումը կատարված է հայկական ճարտարապետության կոնստրուկտիվ ձևերի հիման վրա՝ անհրաժեշտ վերամշակումով, որպեսզի նրա կերպարներն ավելի մոտեցվեն ու իմաստավորվեն: ըստ մեր ժամանակի պահանջների: Վե-

տիբլուլի ճարտարապետության մեջ օգտագործված են Սանահնի վանքի, առաջին դամբի ճարտարապետական ձևերը:


Նիստերի դահլիճի ճարտարապետական լուծումը տրված է գալիթների նախագծման XI—XII դարերում լայն տարածված ձևերի ովով, ուր քառասյուն հիմերի վրա հանգչում է գմբեթը՝ իր ծանրությունը սյուներին փոխանցելով առագանատների միջոցով: Նիստերի դահլիճի ճարտարապետության ձևերում զուգորդված են շնորհման-ի և Սանա-

նը, պետք է նշել, որ առաջին հերթին խընդիր է դրվել գլխավոր ֆասադի համար գրտնել այնպիսի ճարտարապետական լուծում, որ պատճական իմաստի տեսակետից Մատենադարանի շենքին հատուկ, նոր ու ինքնուրույն կերպար տաղ նրան:

Ֆասադի սյուների որթմը, եռանիստ որմախորշերի միջև եղած պատի հետ կապված, կենտրոնում ընդարձակվում է գլխավոր մուտքի համար:

Ճարտարապետական ուժեղ ներգործու-

v



### Մատենադարանի շենքի նախագիծը

Նախագծի հեղինակ՝ արվեստի վաստ, գործիչ, ճարտարապետ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հնի վանքի դամբի ձևերը, իհարկե, բավականաշափ վերամշակված:

Խնտերյերների մշակման ընթացքում խընդիր է դրված օգտագործել հայկական ճարտարապետության զարգացման մի շրջանը:

Մատենադարանի մնացած մյուս խողորքաժինները, ինչպես օրինակ ցուցահանդեսային դահլիճը, դասախոսասրահը, ընթերցարահը, իրենց ճարտարապետական լուծման տեսակետից ոճական ընդհանրությունն ունեն վերը նկարագրված դահլիճների և վեստիբուլի հետ. Հիմնականում օգտագործված է XI—XIII դարերի ճարտարապետությունը:

Անցնելով շենքի ֆասադի նկարագրությա-

թյուն կթողնի վեհասերանչ որմախորշերի որթմի դասավորումը, որոնք պայծառ լուսավորությամբ և նիստերի ստվերով ընդգծեն պիտի ֆասադի հողավորման ներդաշնակությունը: Հայկական ճարտարապետության համար բնորոշ այդ ձևը՝ կիրապված ֆասադի դասական սխեմայի պայմաններում, անկասկած, արտահայտիչ կլինի:

Նախագծով նախատեսվում է վայելլագեղ գլխավոր մուտք՝ հայկական ճարտարապետության ազգային տրամադրման համապատասխան հորինված:

Ենքնի ֆասադը, ըստ նախագծի, երեսապատվելու է մաքուր հղկված երևանի բազալտով:

## ՄԱՏԵՆԱԴԱՐՈՆԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՄԱՏՅԱՆԻՑ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից, ձեռագրերի ժողովածուներն են: Ուրախ ենք, այդ հարստության ամենամեծ մասը գտնվում է մեր հայրենիքում: Մեր տարր տարվա բացակայության, ոչ միայն ճոխացել է մեծ շափերով՝ Պետական գրադարանի ժողովածուն, այլև գիտության պահանջների համեմատ ցուցակների մշակումը ըստ բովանդակության, ըստ հեղինակների, թվականների և այլն ամենամեծ դյուրությունն է ըստեղծել գիտական աշխատավորների համար՝ իրենց ուսումնասիրությունների նյութերը հավաքելու ժամանակի մեծ խնայողությամբ: Կարգավորյալ մատենադարանները, գրադարաններն ու թանգարանները մըշակույթի, արվեստի և գիտության զարգացման անհրաժեշտ պայմաններն են: Եվ այդ պայմաններն ըստեղծված են այսակ ընդարձակ շափերով:

Ուրախության զգացմունք ենք նշում Մատենադարանի աշխատավորների գորգուրանքը տեսնելով ձեռագրերի հանդեպ, գեղեցիկ և սիրալիոր սպասարկությունը հաստատության մեջ, որ ոչ պակաս նըպաստավոր հանգամանք է աշխատավորի համար: Երկու շաբաթվա մեր աշխատանքի արդյունքը եղավ կրկնակի՝ պաշտոնյաների այդպիսի վերաբերմունքի հետևանքով: Հայտնում ենք մեր շնորհակալությունը Մատենադարանի վարիչ Գ. Աբովին և նորա օգնականներին, որոնք ամենայն կերպով նպաստեցին մեր աշխատանքի ժամանակ:

Կմաղթենք, որ այս հաստատությունը ամենայն կերպով ծառայե հայ մշակույթի, պատմության և հին դրականության, արվեստի մշակության գործին և աղբյուր հանդիսանա նոր վերածնության և նոր ոսկեդարի, որ հավատում եմ, թե սկսվել է արդեն և մեծ թափով պիտի զարգանա:



ԿՐԻԿՈՐ ԱԲՈՎՅԱՆ ԿԱՐՈՊԵԼԻԿՈՍ

ԳԱՐԵԳԻՆ Ա.

Հայ վանականի ժիր մատները, կրոնի մաքուր գաղափարներով ներշնչված տվեր են մեզ այն ստվար և անդին ձեռագիրները, նրբարվեստ մանրանկարներով ու ծաղկումներով մողական հմայք զգեցած, և կրոնական, արվեստագիտական, գիտական, պատմական և իմաստասիրական երանգավորումներով բնորոշված,—որոնք այսօր եկեր հանգչեր են մեր նորաստեղծ հայրենիքի այս հոյակապ պալատին մեջ: Անոնք խոսուն վկաներ են հայ ժորի ստեղծագործական արժեքներուն՝ դարերու ընթացքին և ամենադառն ժամանակներու ու դժվարին պայմաններու տակ մարմին առած:

Խ. Հայաստանի կառավարության սրտագին հոգածությունը և երիտասարդ գիտնականներու պաշտամունքային նվիրումը՝ նոր լեզու տալու անոնց իսկական բովանդակության, լուսաբանելու մշակութային առանձնահատուկ արժեքները և երևան բերելու իմացական հառաջընթացքը հնարավոր ուղիներով,—հաճույքով, հիացումով և բարձր գնահատականով ողջոմելի երևույթներ են:

Դեպի բարձր վերելքի յուրաքանչյուր քայլափոխ, հավատքով և անսպաս եռանդով կատարված, երաշխիք է ապագայի ավելի փառավոր նվաճումներու՝ մշակութային ամեն մարզի մեջ: Մեր Խ. Հայաստանը, փյունիկանման դուրս եկած անցյալի մոխիրներու տակեն, կուտա այս երաշխիքը, լինելով միակ հայրենիքը հայ ստեղծագործ երևակայության և շինարար ոգվույն:

Հինեն ծնունդ կառնի նորը՝ ներկան և կպատրաստվի նորագույնը՝ ապագան:

Այս ձեռագրատունը և անոր վրա գործուրանքով թևածող նոր ոգին՝ կլեցնի մեր սիրտը հպարտանքով և նախատեսող հավատքով ավելի փառավոր ապագայի մասին:

10 հունիս 1945 թ.

## ՍԻՐՆ ԵՊԻՍԿ. ՏՐԱԳԻՉՈՒՅԹԻ

### ՍԻՐՆ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տեսանք հայ ձեռագրաց անդին գանձը և հիացմունքով դիտեցինք մեր արվեստագետ նախնյաց հանձարի գործերը: Մանավանդ հիացանք այն մեթոդիկ ու կանոնավոր աշխատանքին վրա, զոր կատարած է Մատենադարանի վարչությունը, խնամքով ցուցակադրելով ու դասավորելով ձեռագրերը:

Մեր ազգային մեծագույն հարստությունն է այս ձեռագիրներու հավաքածուն:

13 հունիս 1945 թ.



ՍԻՐՆ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՅՐԱՆՍՈՀԱՅՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ժողովուրդի մը մեծության իրական շահանիշը իր մշակուլիթն է: Հայ ժողովուրդը, մանավանդ այս մարդին մեջ, ձգած է փառքի մեծ կոթողներ:

3 Հուլիս 1945 թ.

ՊԵՏՐՈՍ ԹԵՐՂՅԱՆ

Կարելի չէ պտտիլ այս սրահը, տեսնել այս հոյակապ ձեռագրերը և չհիանալ մեր նախահայրերուն վրա և հպարտ չզգալ այսպիսի հանճարեղ ազգի մը զավակ ըլլալնուա: Երախտապարտ ենք այն կառավարության, որ մեր ազգային այս թանկագին արժեքները պահելու և պաշտպանելու մեծ հոգածություն ցուց կուտա: Ամերիկային հոս դալ կարժեր՝ սոսկ այս Մատենադարանը տեսնելու:

3 Հուլիս 1945 թ.

ՊԱՏՐԻԿ ՍԵԼՅԱՆ

Միմիայն Սովետական իշխանությունը կարող էր հնարավորություն տալ հայ ժողովրդի ազգային պանծալի վերածննդյան և անոր բազմադարյան կուլտուրայի ամբողջ գանձի հավաքման մի կտորի տակ, որ այժմ ծանոթ է Մատենադարան անունով: Հին հայկական մշակույթի տիրանալու միջոցով Սովետական Հայաստանի գիտնականները, գրողները և արվեստագետները կստեղծեն սովետահայ նոր կուլտուրան, հարստացնելով հայ և միջազգային կուլտուրան: Կազմակերպվածությունը, կարգապահությունը Մատենադարանի մեջ հասած են բարձրագույն մակարդակի: Սովետական Միության այս հնագույն Մատենադարանը կկազմե հայկական նոր մշակույթի հիմնաքարը և ունի համաշխարհային նշանակություն: Այս հաստատության պահպանման և զարգացման համար բոլոր ազգերու ազնիվ մտավորականները շատ բան կպարտին սովետական իշխանության և Հայաստանի գիտնականներուն: Ամեն մեկս մեր գործնական պատրաստակամությունը պետք է արտաքերենք այս հաստատությունը գլխավորողներուն և գիտական աշխատողներուն՝ մեր սեփական օժանդակությունը բերելով անոր զարգացման:

24 Հուլիս 1945 թ.

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ**

**ՀԱՆՐԻ ԲԱՐԲՅՈՒ**

(Քրանսիացի գրող)

Ես բախտավոր եմ, և իմ միտքը հարստացավ այս  
գրադարանի սքանչելի ձեռագրերը դիտելուց:



**ՀԱՆՐԻ ԲԱՐԲՅՈՒ**

**ԷԴՎԻՆ ՍՄԻՏ**

Սովետա-Ամերիկյան բարեկա-  
մուրյան Ազգային Խորհրդի  
դիրեկտոր

Սովետական Միությունում բարձր քաղաքակրթու-  
թյան մակարդակի ամենանշանակալից վկայություննե-  
րից մեկը հանդիսանում է Սովետական կառավարու-  
թյան և ժողովրդի վճռականությունը անցյալի կուլտու-  
րայի գանձերը կենսալի ներկայի մասը դարձնելու:  
Այդ քաղաքականության սքանչելի օրինակ է հանդիսա-  
նում ամբողջ աշխարհին հայտնի հայկական ձեռագրե-  
րի դրադարանը Երևանում, որը սովետական իշխա-  
նության հաստատման օրերից դարձել է բնուր երկր-  
ների գիտնականներին կուլտուրայի ու ինտելեկտի-  
բնագավառում նոր հետազոտությունների մղող հա-  
ռուսական կենտրոն:

23 Հունիսի 1945 թ.

**ՄԱՆՈՒԵԼ ՄԵՍՍԱ**

Խուս-Մեկսիկական ինստիտուտի  
գլխավոր քարտուղար

Ինձ հիացնում են ինչպես իրենք գանձերը, որոնք  
ժողովուած են այս գրադարանում, այլ և այն հետա-  
քրքրությունը և հոգատարությունը, որ հանդես է բի-  
րում նոր քաղաքակրթությունը մարդկային իմաստու-  
թյան ուսումնասիրման ու պահպանման նկատմամբ:

10 Հունվարի 1945 թ.

**Ա. Թ. ԴԱՅ**

Օքսֆորդի համալսարանի դոցենտ

Մեծ հետաքրքրություն էր նայել պատմական վայե-  
րագրերի այս հոյակապ հավաքածուն, որը բացահայ-  
տում է Հայաստանի հինավուրց կուլտուրան: Նա հա-  
մաշխարհային կարևորություն է ներկայացնում: Ուրա-  
խալի է տեսնել այն խնամքը և գիտական մոտեցումը,  
որ ցույց է տրվում նրա նկատմամբ Սովետական ժա-  
մանակներում:

27 Հունիսի 1945 թ.

## Դոկտոր ՀՅՈՒԽԵՏ ԶՈՆՍՈՆ

(Քենտրոնի տաճարի ավագերեց)

Խորը հետաքրքրությամբ ես հետևել եմ հասաշ-  
խարհային հոչակ վայելող այս թանգարան-Մատենա-  
դարանի լուսապայծառ պատմությանը։ Ամբողջ քաղա-  
քակիրթ աշխարհի գիտնականները շափազանց երախ-  
տապարտ են Սովետական Միությանը և հայ գիտնա-  
կաններին այն չերմ հոգատարության համար, որ  
նրանք ցուցաբերում են այս համաշխարհային գան-  
ձարանի նկատմամբ։

27 հունիսի 1945 թ.



ՀՅՈՒԽԵՏ ԶՈՆՍՈՆ

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱԳՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ



Ակադեմիկոս Լ. ՕՐԲԵԼԻ

### Ակադեմիկոս Լ. ՕՐԲԵԼԻ

(Ֆիզիոլոգ)

Գրապահեստի և հատկապես նրա ձեռագրերի բաժ-  
նին ծանոթանալը ինձ վրա բացառիկ տպավորություն  
գործեց։ Անկարելի է չսովորհնել հարազատ հայ ժո-  
ղովողի հին ու միջին դարերի կուլտուրայի առաջ, Ան-  
կարելի է ՀՀապարտանալ նրա ուշագրավ պատմական  
անցյալով։ Զի կարելի շուրախանալ այն բանի համար,  
որ իմ ժամանակակիցները այսպիսի սիրով ու խան-  
դավառությամբ ձեռնամուխ են եղել այդ արժեքավոր  
նյութերի ուսումնասիրմանը։ Զեմ կասկածում, որ  
նրանց մոտ ապագայում կդառնա հիմնական կուլ-  
տուրական կենտրոններից մեկը։

### Պրոֆեսոր ՇԵՍՏԱԿՈՎ

Պատմաբան

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի ներկայացու-  
ցիչները հիացած են ՀՍՍՌ Պետական Մատենադարա-  
նի ձեռագրերի և գրականության հարուստ կոլեկցիա-  
յով։ Մենք գտնում ենք, որ բացառիկ գիտական ար-  
ժեք ունեցող այդ ֆոնդերը պիտի հնարավորին շափ-  
շուտով ուսումնասիրվեն և հրատարակվեն։ Այդ էլ ա-  
վելի կրարձրացնի սոցիալիստական գիտությունն ամ-  
բողջ աշխարհում։ Հայկական կուլտուրայի գանձերը  
շպիտի թողնել անհայտ մնան։ Նրանք պիտի ծառային  
սովետական ժողովրդի լայն մասսաների դաստիարա-  
կությանը։ Զեռադրերի և գրեթերի ֆոնդը պիտի հանդի-  
սանա առաջայի Հայկական Դիտությունների Ակադե-  
միայի բազան։

30 նոյեմբերի 1938 թ.

## Ակադեմիկոս Ե. ՏԱՐԻՔ

### (Պատմաբան)

Հայաստանի հնագարանային գրապահեստը անջընշելի տպավորություն է գործում. կանգնած ես դեմառ դեմ ամենակուլտուրական պատմական մի ժողովրդի, որը դասական հնագարի ժամանակներից և ընդհանուր մինչև ներկա ժամանակները դասվել ու դասվում է կուլտուրական ազգերի առաջին շարքերը: Եվ որքան ուրախալի է, որ ժամանակակից հայ սերունդը այսպես սիրով ու խնամքով է վերաբերվում իր հոյակապ անցյալին: Շատ հնագարաններ կարող են սովորել այնպիսի զարմանալի իմաստալից ու լին գույքացուցակ կազմելը, ինչպես թեկուզ այն, ըստ որի սիրալիր ու գիտնական հնագետները մի քանի ըստ պետում գտնում էին իմ աշխատանքի համար անհրաժեշտ արժեքավորագույն փաստաթղթերը: Ըստ արժանվույն գնաճատելով՝ հայտնում եմ նրանց իմ անհատական շնորհակալությունը և հիացմունքն իրենց սքանչելի գանձարանի համար:

10 Հունիսի 1942 թ.




Ակադեմիկոս Ե. ՏԱՐԻՔ

## Ակադեմիկոս Խ. ԿՈՇՏՈՅԱՆՑ

### (Ֆիզիոլոգ)

Իմ այցելությունը Մատենադարան և ծանոթացումը նրա ձեռագրերի հետ հանդիսանում է իմ կյանքի խոռոշոր անցքերից մեկը: Անցյալի հուշարձանների պահպանման շատ թանգարաններ ու հիմնարկներ եմ տեսել ես թե մեր և թե եվրոպական երկրներում: Բայց այսօրվա տպավորություններս ես չեմ կարող համեմատել անցյալի տպավորությունների հետ: Ինչպես հայ, ես չափազանց հպարտ եմ իմ ժողովրդի կուլտուրայի համար. որպես գիտության պատմությամբ զրադվող գիտնական, ես կցանկանայի մասնակցել մեր նախնիքների բնության ճանաշման բնագավառում ունեցած ժառանգության մշակմանը: Ընդհանուր առմամբ— մեծ շնորհակալություն: Շնորհակալություն նրանց, ովքեր կարողացել են դարերի ընթացքում պահպանել ամբողջ առաջավոր մարդկության այդ կուլտուրական արժեքները և նրանց, ովքեր մեր օրերում շարունակում են պահպանման ու գիտական մշակման մեծ գործը:



Ակադեմիկոս Խ. ԿՈՇՏՈՅԱՆՑ

### ԴԵՐԵՆԻԿ ԳԵՄԻՐՃՅԱՆ (Գրող)

Սովետական Միության բոլոր ծայրերից գիտության մարդիկ գալիս են երեվան ու հապ հաստատում Մատենադարանի հետ:

9250 ձեռագրեր, 3000 պատառիկներ, 600 աղբքեշանական, իրանական, արարական ձեռագրեր, նիզամիի ժողովածուն, նավուիի պոեմները: Կապերի «Չառավիդը» — Մերձավոր, Միջին Արևելք, Արարիա, Հնդկաստան, Բյուզանդիոն, Լեհաստան, Իտալիա, Ղրիմ, Անդրկովկաս....

Մատենադարանը, դա հայ և մյուս ժողովուրդների պատմության պահպանման վայրն է: Բայց նա ևս ունի իր պատմությունը, — ամուր կամքի տեր մարդկանց, գիտության մարտիրոսների, արվեստի էնտուզիաստների, հանճարեղ մանրանկարիչների պատմությունը: Արյան, Հրդեհների, սովի, հաւածանքների ժամանակ անվնաս են մնացել այդ ձեռագրերը. թափառել են վանքերից քարանձավները, գերի են ընկել «անհավատների» իշխանների ձեռքը, ետ են գնվել, ընկել են եզրիածնի վանքը ու դարեր «ապրել» այնտեղ գրապահստներում:

Մատենադարանը — եղակի հաստատություն է, նա հայ ժողովրդի պարծանքն է: Գրքերը, սքանչելի մանրանկարները, գիտությունը, պոեզիան այժմ Հայաստանի և ողջ աշխարհի գիտական մտքի տրամադրության տակ են:

Չորրորդ հնգամյակի այլ կառուցումների թվում Հայաստանի մայրաքաղաքը կհարստանա ևս մի նոր շենքով — գրքերի պահպանման մոնումենտալ շենքով՝ Մատենադարանով: Նա վեր կիսոյանա Քանաքեռի բլրի ստորոտում և բարձունքից կնայի Ստալինի անվան պողոտային: Նրա հետ միասին վեր կիսոյանան և՛ դիտական միտքը և՛ մեր ժողովրդի պարծանքը:



ԴԵՐԵՆԻԿ ԳԵՄԻՐՃՅԱՆ

### ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ



Մեծ խնամքով պահպող անգնահատելի ձեռագրերն ու բազմաթիվ այլ աշխատությունները ցայտուն արտահայտությունն են հանդիսանում հայ տաղանդավոր ժողովրդի գարավոր բարձր կուլտուրայի, գրականության, արվեստի և հերոսական պատմության: Ես խոնարհվում եմ մեր մեծ նախահայրերի գործերի առաջ, որոնք հնարավորություն են տալիս մեզ ճիշտ պատկեր կազմելու մեր ժողովրդի ստեղծագործական մեծ տաղանդի, զարգացման և հերոսական պատմության մասին:

26 նոյեմբերի 1945 թ.

# ԿՈՍԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԳՈՀԱՐԻԿ ՊԱԶԱՐՈՍՅԱՆ

## ԿՈՍԻՏԱՍԻ ԱՆՀԱՅՏ ԵՐԳԵՐԸ

  
րաշբով մը 1943-ին ձեռև ին-  
կան վարդապետին երկու տես-  
րակները, որոնք կպարումա-  
կեին յոթանասուն անտիպ ժո-  
ղովրդարին երգեր, գրի առնված 1913-ին  
արևելյան ձայնագրությամբ:

Այդ երգերը ընել տվին ինձ աշխատանք  
մը, զոր Փարիզի երաժշտանոցի ուսուցիչ-  
ներս, իրենց բոլոր հմտությամբ, անկարող  
պիտի ըլլային ընել տալու Ստիպեցին, որ  
սովորիմ արևելյան ձայնափշներն ու եղա-  
նակները իրենց դարձվածքներով, ուսում-  
նասիրեմ կերպը դաշնագորումին, որ Վար-  
դապետինն է, ու ի վերջո թափ տամ այն  
կյանքին, որ կեռա ներսս, երբ կլսեմ երգը  
ցեղիս:

1942-են ի վեր թափած աշխատությունս  
ցուց տվավ ինձին ուղին, որուն ամեն հայ  
երգահան պարտավոր է հետեւել, եթե կուզե,  
որ իր կտորները կրեն տոհմային դրոշմ,  
գույն և ոճ, որոնք միմիայն մերն են:

Ցոթանասուն երգերը մեկ ամսվան ըն-  
թացքին վերածված էին եվրոպական երա-  
ժշտության ու արդեն հարուստ ներշնչա-  
րան մը կպարզեին ինձի:

Հուգում, հիացում, խանդավառություն ի-  
րար կհաջորդեին մեջս, ու կդաշնավորեին  
առաջին երգը, որ ողբ մըն է 5/4 շափով,  
ԲԶ եղանակ, օթրնանի նահանգի Սուրմալու  
գալարի եվշելար գյուղումը երգված: Երա-  
ժշտագետ ու անմոռանալի մեր Վարդա-  
պետը այնպիսի կանոնավորությունով մը  
նոթ առած էր, — արևելյան ձայնանիշները,  
ժողովրդական երգը իր զանազան տունե-  
րով, երգող գյուղացիին ո՞ր գալառին, ո՞ր  
դյուղին ըլլալը, — որ բնականորեն պարտք  
կդնի վրաս այդ երգով ամիսներ տարվե-

լու, արտաքին անցուդարձերում խորը  
փնտուելու, ներշնչվելու:

Ողբը դաշնավորված է, կխորհիմ, այն-  
պես, ինչպես Վարդապետը պիտի ուզեր որ  
ըլլար, պարզ մտացիորեն զգայում ու գյու-  
ղը վերհիշել տվող բնույթով: Ինձ այսպես  
կթվեր, թե վերջապես երաժշտական աշ-  
խարհի մեջ հայերն սկսեր եմ խոսիլ. արդ-  
յո՞ք հայերենն զգալ գիտեի, թե ի՞նչ էր: Ա-  
տոր գիտակցելու համար պետք էր պահ մը  
հեռու նետել եվրոպական երաժշտության  
պաշարս, զոր 13 տարվան միշոցին հավա-  
քեր էի ու զառնալ գիտունորեն տգետ ու  
իմաստունորեն պարզ:

Երգին բառերը խոր, սիրտ բգկտող, կու-  
զեն որ չաս, որովհետև լացը քիչ է անոնց  
համար.

«Աղջիկ մերդ մեռել ա,  
Նեյնիմ աման օ՝ օ՝ շորերը  
կելալուել ա,  
Վա՝ յ մերդ մեռեի սարի աղջիկ,  
զիյան աղջիկ,  
կվաճամ վարդի ջրով, չորացնեմ  
բերնի գոլովի:

Երկրորդ աշխատանքը կշիներ մահերդ մը  
այդ ողբի վրա, հոս եվրոպական մշակույթս  
շարժամարհնեցի, ալ վասնգե զերծ էի, չէ որ  
հայրենի հողս առած էի իբր մեկնակետ ու  
շունչս կմնար հարազատորեն հայ, ընդլայ-  
նելով առանց վրդովումի երգը Վարդապե-  
տին, զոր ունկնդիրը իբր կընե այնքան դյու-  
րությամբ:

Երախտիքի անհուն զգացումով կոգեկո-  
չեմ հիշատակը անմահ Վարդապետին ու  
կմոռնամ, թե ինձ պակսեր է բախտը զինքը  
տեսած ու լսած ըլլալու:

Կ. Պոլիս

(«Ալիք» թիվ 75 1946 թ. Թեհրան)

Արվեստագիտ. գիտ. դոկտ. Մ. Գևեսին

## ՀԱՆԴԻԹՈՒՄ ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏ

Դեպի Պաղեստին կատարած ուղևորության ժամանակ՝ 1914 թվի հունվարին թիվ հետրվարին ևս եղա Կոմիտանդինոպլսում։ Այստեղ ես պատեհություն ունեցա հանդիպելու հշանակոր հայ երաժիշտ Կոմիտասի հետ։

Կոմիտասը իր կենդանության ժամանակ չի ունեցել այն մեծ հռչակը, որին արժանի էր նա իր ստեղծագործության շնորհիվ։ Մասնավորապես Ռուսաստանում Կոմիտասի անունը քիչ էր հայտնի։ Եթե ևս գիտեի նրա մասին, այդ էլ գլխավորապես նրա համար, որ իմ ամենալավ ժամանակի աշակերտներից մեկը եղել էր Ա. Գ. Տեր-Ղեոնդյանը, որը հաճախակի հիշում էր նրա անունը մեր զրույցների ընթացքում։

Ես Պաղեստին էի ուղևորվում մի խումբ մարդկանց խնդրանքով, որոնք հովանավորում էին Պաղեստինում հրեա-կոլոնիստների կողմից բացված երաժշտական դպրոցները և ցանկանում էին իմ կարծիքն ստանալ այդ դպրոցների մասին։ Ես սիրով արձագանքեցի ինձ համար բոլոր տեսակետներից հետաքրքիր այդ առաջարկին։

Հրեական հին «ոքիոն» ձայնանիշները հետազոտող Դ. Գ. Մագգիդը խնդրել էր ինձ Պոլսում բնակվող, հայկական ժիազերից հետազոտող Կոմիտասից մի քանի տեղի կողմից ուղարկել առաջարկին։

Նման հետազոտություններով, ինչպես օրինակ հին դպրության ուսումնասիրությունը, զբաղվող մարդկանցից քերը սովորաբար գիտեն միմյանց մասին։ Դ. Գ. Մագգիդը գիտեր Կոմիտասի աշխատանքների մասին և մինչև անգամ գիտեր նրա Պոլսի հայցին։ Դ. Գ. Մագգիդը բազմակողմանի տաղանդի տեր ու գիտնական մարդ էր և շափազանց շատ բան էր արել այն ձայնանիշների բացահայտման բնագավառում, որոնցով ծածկված են հրեաների Ա. Գրիգի բաղկացուցիչ գրքերը։ Նրանից ես իմացա, որ մինչեւ մեր ժամանակները բանավոր արագիցիայով հասած այս կամ այն «ոքիոն» աներին համապատասխանող վաղեմի եղանակները (տաղերը) գոհացուցիչ չեն սաղմուների կատարման համար։ գործածության մեջ գտնվող, գոյություն ունեցող եղանակները պարզապես ավելի ուշ ժամա-

նակաշըշանի ծագում ունեն և պատկանում են կանտոր-կոմպոզիտորների անհատական ստեղծագործությանը։ Այս ինչ նշանները, որոնցով նշված է սաղմուների գիրքը, նույն են, ինչ որ ավետարանի մյուս մասերում։

Դ. Գ. Մագգիդին հաջողվել էր պատահաբար հանդիպել սաղմուներից մեկին հարմարվող առանձին տրադիցիոն տաղերի։

Ամբողջի մեջ նրանց գերը սահմանելու համար նրան անհրաժեշտ էր պարզել համապատասխան եղանակների փոխառընչությունը հայկական ձևերում։ Եվ Մագգիդը ամբողջ հույսը Կոմիտասի վրա էր։ Ահա այսպիսի հանձնարարությամբ ես ուղղ զբացի գեղարվարանը, ուր բնակվում էր Կոմիտասը և ևս նորիցից ինձ ուղեկցել նրա մոտ։ Սպասելու կարիքը բոլորովին չգեցացից։

Հիշում եմ այդ շենքի բարձր ու ընդարձակ սրահները և ինձ հանդիպելու դուրս եկող միջին տարիքի տեր, բարձրահասակ, զեղեցիկ ու աղնվաբար մարդու արտաքինը։ Կարծեմ նրա հագին ֆարազա կար, բայց ստույգ չեմ հիշում։ Ընդհանրապես նա իմ վրա միանգամայն աշխարհիկ մարդու տպավորություն թողեց։

Մենք անցանք զրույցին։ Կարելի էր և շիշել, որ արևելյան սովորության համաձայն մեզ թասերով ևս սուրճ մատուցվեց։

Կոմիտասը շատ լավ խոսում էր ուսուելին։

Իմանալով որ ես Ռիմսկի-Կորսակովի աշակերտն եմ եղել, նա ասաց ինձ, որ մեծ համակրանքով է լցված այդ արվեստագետի հանդեպ ու ցույց տվեց սեղանի վրայի նոտաների ու գրքերի կույտը։

— Ռիմսկի-Կորսակովի մի քանի երկերը և նրա ներդաշնակության դասագիրքը իմ սեղանի գրքերն են կազմում։

Հանկանալի է, որ ինձ համար շափազանց հաճելի էր լսել այդ Բայց ես քաշվում էի երկար պահել անկասկած շափազանց գրադարձ արվեստի գործին ու անմիջապես անցա այն գործի շարադրմանը, որի համար եկել էի։

Հենց այդ պահին էլ ես դառնությամբ իմացա, որ Դ. Գ. Մագգիդի համար ոչինչ

արժեքալոր և շեմ կարող տանիլ:

Կոմիտասի ասելով՝ Հայերի, ինչպիս և հրեաների, մոտ հատկապես Դավթի սաղմոսների եղանակները հանդիսանում են համապատասխան երածշատական ստեղծագործության ավելի ուշ ժամանակաշրջանի նմուշներ և ամենամեծ շափով կրում են անհատական մշակման հետքը: իսկ ավելի վաղ շրջանի եղանակները կրում են:

Ինչպես երեաց, Կոմիտասը թեև զբաղվում էր հիմնականում հայկական ժամանակարում, բայց լավ ծանոթ էր նաև հրեական ուղղությունում՝ ու ավելուրանական ուղղությունում:

Կանոնից այս ողջ բնագավառին:

Նա ինձ տվեց հրեական նկամքի բացահայտված նմուշները, որ կատարվել էր հումանիստ Ռեյնլինի կողմից: Այնուհետև գրադարակից հանեց մի մեծ ու հետաքրքիր հատոր, նվիրված նապոլեոնին զանազան պրոֆեսորների կողմից, որոնք մասնացել էին նրա ծգիատուի արշավախմբին: Այնուհետև կար և մի հողված՝ ավելուարանական կանոնից ամսին ծգիատուի հրեաների մոտ XIX դարի սկզբին՝ ձայնանիշային օրինակներով: Բոլոր այդ օրինակները են արտադրեցի:

Այդ հարցի մասին Կոմիտասն ասաց հետևյալը.

— Ես հրեական «neginot»-ների սիստեմը համարում եմ ավելի հին, քան մեր ժամանակները, որովհետև մեր երերի նմուշներն ըստ նկամքի ավելի մեղողիկ են, կարելի է ասել անգամ, որ նրանք կրում են տեքստերին հարմարեցված ամբողջական մեղեղիների բնույթ, այն ինչ հրեական տրադիցիոն եղանակները զուտ արտասանական ծաղում ունեն: Դա իսկական «accensus» ո-ի զերծ մնացած նմուշ է:

Այնուհետև Կոմիտասն ինձ պատմեց շատ հետաքրքիր բաներ ժամանակարին վրա կատա-

րած իր աշխատանքի մասին, պարզապես ցանկանալով հասկացնել ինձ, թե հետազոտական աշխատանքն այդ բնագավառում որքան դժվար է և ինչքան զգույշ պիտք է լինել վերջնական եղրակացությունների մեջ:

— Երիտասարդ հասկացու ես զանասիրությամբ աշխատել եմ՝ ուսումնասիրելով մեր ձայնանիշները: Այդ աշխատանքի արդյունքը հանդիսացող գիրքը ես կարդացի Փարիզում՝ հատուկ ժողովում: Իմ աշխատությունը մեծ հաջողություն ունեցավ և մրցանակի աղօժանացավ: Բայց ես շրադարկորի աշխատանքս: Անցավ մոտ քանի տարի ու ես հանգեցի բոլորովին ուրիշ եղրակացության: Սկզբի իմ եղրակացությունները հիմնված են եղել միայն մեր ձայնանիշներում գծիկների ուղղության ուսումնասիրության վրա, բայց հետագայում պարզվեց, որ գծի ամենանվազագույն ստվարացումը նշանակություն ունի արդեն մեղեղինի բացահայտման համար: Ամեն ինչ դուքս եկավ ավելի բարդ ու հարուստ, քան ես մտածել էի սկզբում: Եվ ևս հավատացած շեմ, որ իմ կողմից այսուեղ բոլորը հայտնաբերված է ու շարունակում եմ աշխատել:

Ես շեմ հիշում այն ամենը, ինչ մասին

խոսեցինք մենք: Բայց ամենի մասին ինչ և ինչպես որ նա խոսեց, ես զգացի և լրջությունը գիտական կենտրոնացվածության, և՛ մհծությունը պայծառ գեղարվեստական ձիրքի, և՛ հմայքը մարդկային բարյացակամության: Մեր զրույցը ծայր աստիճան աշխատություն ու հետաքրքիր էր: Այնուամենայնիվ պատրիարքարանի շենքը մի քիչ կաշկանդում էր ինձ: Ես չգիտեի տեղին կլինե՞ր այստեղ խորպել Կոմիտասին, որպեսզի իր ստեղծագործություններից որևէ մեկի հետ ինձ ծանոթացներ: Իմ մտքովն անցավ անգամ, թե շրջապատողների համար գգաղտ-



Կոմիտաս վարդապետ

նիացված» ըլ՝ արդյոք նրա գործունեության աշխարհիկ մասը: Եվ ավելի նվազ հարմար գտա առաջարկել նրան այստեղ ծանոթանաւլու: իմ աշխատանքներին ու այս կամ այն կերպ արտահայտվելու նրանց մասին:

Մեզնից որևէ մեկը կարո՞ղ էր մտածել, որ աշխարհը ահավոր պատերազմի նախօրյակին է գտնվում և որ մի քանի ամսից հետո հայ ժողովով համար կակավի զարդուրելի ուղբերգությունը, և որ այնքան սիրավելի ինձ ընդունող ու հետև բարեկամաբար զրուցող Կոմիտաս-կոմպոզիտորի ու հետազոտողի ստեղծագործական մտքերը պետք է վերջինը հանդիսանացին:

Միայն շատ ուշ, ես ծանոթացա Կոմիտասի ստեղծագործությունների հետ՝ համոզվելով թե ինչպիսի խոշոր կոմպոզիտոր ու

ապահնդ, կոմպոզիցիայի ինչպիսի ինքնաշտիպ ու հատաքրքիր վարպետ է եղել նա և ինչքան խոշոր է նրա դերը XX դարի հայկական երաժշտության զարգացման դուռը:

Իմ աշքերի առաջ տեղի է ունենում նրա ծաղկումը ու ինձ համար հաճելի է գիտակցել, որ ես գիտեի նորագույն հայկական երաժշտական կուլտուրայի խոշոր հիմնադիրներից մեկին, որ ինձ վիճակվեց բարեկամական հարաբերությունների մեջ գտնվել երա խոշոր ներկայացուցիչներից հետ ավելի ուշ ժամանակաշրջանում և լինել կրտսեր սիրունդի ամենից աշքի ընկնող հայ կոմպոզիտորների բարեկամն ու դեկավարը:

Խուս. քարզմ. Վ.

## ՄԱՐԳԱ. ԽՅԱՅԱՆ

### ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՎ ԻՐ „ԳԵՂԶՈՒԿ ԵՐԳԵՐ“-Ը

Հայ երաժշտությունը վերածնունդի շրջան մը կապրի ներկայիս դատելով երաժշտական մարզի մեջ ի հայու եկած գործունեութիւննեն, — երգ, նվագային և օբերատիք, — թե՛ Հայաստան և թե՛ արտասահման:

Այս ներշնշիլ երևույթը կպարտինը ոչ միայն օր ըստ օրի փթթող երգահաններու և երաժշտներու տաղանդին՝ այլ և հասարակական խավերու ցույց տված հետաքրքրության դեպի տոհմային երաժշտությունը: Թեև ժողովուրդը ժլատ է եղած իր գնահատանքին մեր, սակայն քաջալերական է տեսնել թիվը հետզհետե աճող ունկնդիրներուն, որոնք կգիտակցին՝ թե երաժշտությունը դեղարվեստի արտահայտության բարձրագույն եղանակներն մեկն է:

Ըստ Ոսկեղարու մատենագիրներուն, որոնց տված տեղեկությունները շատ քիչ, բայց թանկագին են, հեթանոսական շրջաննեն ի վեր ունեցած ենք երգ և երաժշտություն: Հայ պատմության ծանոթ Գողթան երգիշները՝ հավատարիմ ավանդապահներն ին ցեղային աննյութական հարստության: Ապա Գուսաններգուները, ավելի ետք Միջնադարյան Տաղերգուները, որ աշխարհաբար լեզվով երգեցին, ընդհանրացուցին զայն և ժողովրդին սիրելի դարձուցին: Աշուղությու-

նը հայերուս մեջ ծաղկեցավ վերջին երկու դարերու ընթացքին:

19-րդ դարու երկրորդ կեսին ասդին, հայ բանահյուսությունն ու եղագ սկսան երեան գալ զուտ հայրենասիրական, արգային ոճավ ու ոգիսվ, այլ եղանակները զուրկ էին ցեղային հատկանիշեն:

Մինչև 20-րդ դարու վաղորդյանը մեր աշխարհիկ երաժշտությունը տարտամ, անգույն բնույթ մը ուներ: Արևմուտքի մեծանուն երաժշտագետներուն համար Փոքր Ասմիան և Հայաստանը երաժշտության տեսակետ անապատներ կհամարվեին ու բնիկներու երգն ու նվագն ալ նախնական միօրինակություն, անտաշ խառնուրդ մը:

Ահա այս պահուն էր, որ հայ երաժշտությունը՝ որպես ինքնատիպ և ազգային դրոշմով արվեստ մը՝ կհայտնվեր Եվրոպայի միջազգային գեղարվեստի դաշտին մեջ, նոր էշ մը կբացվեր նվիրված հայ երաժշտության, և հանճարը, որ անվիճելի տիրականությամբ լույս աշխարհ կհաներ այս թագնրված ժողովրդային հարստությունը՝ էր ԿԱՄԻՇԱԾԱՎԱՐԴԱՊԵՏ

Կոմիտաս վարդապետ Կուտինացի (Քեռահաճիա) Գևորգ Սողոմոնյանի և՝ Պրուսացի Թագուհի Հովհաննեսյանի զավակն էր: Մըած 1869 սեպտ. 26-ին, մկրտված Սողոմոն

անունով: Երբ մեկ տարեկան էր՝ մայրը մեռավ և 11 տարիկանին հայրը կողանցուց: Դպրոցին սերս ոտք կոխեց առաջին անգամ՝ երբ ութ տարեկան:

Կոմիտասի մեջ նրգի և երաժշտության սերը կսկսի այն փոքր տարիեւն, երբ որբուկը հարաբրոց հետ միասին ամեն կիրակի եկեղեցի կերթար և լարված ուշով կը հետեւեր երգեցողության:

Մայրը՝ մեռած 17 տարեկան մատաղ հա-

վեհափառին զարմանքը մեծ կըլլա, երբ կտեսնե, որ տղան հայերեն չի գիտեր և կսկսի սաստել զայն.— Ճես ճիշտ անոր համար եկա այստեղ: Սակայն ևս կարող եմ հայերեն երգել ձեզ», կուստասիսնե պատանյալը: Եվ կսկսի երգել հին շարական մը քացրը ձայնով ու մաքուր հայերենով: Կաթողիկոսին բարկությունը կփոխվի հուզումի:

Ահա՝ այս փոքրիկ, բայց պատվախնդիր հանդինությունը իր ապագա հրակա հաջողության նախաքայլն եղավ:

Եր 11 տարվան դպրոցական շրջանին կհետաքրքրութեր միմիայն երաժշտությունով:

1890-ին սարկավագ կծեռնագըրվի և կճանցվի բոլորեն «Երգիչ Սողոմոն Սարկավագ»: 1896-ին վարդապետական աստիճանին կրարձրանա Հայրիկի ձեռնագըրությամբ և տարի մը վերջ Ալեքսանդր Մանթաշյանի բարերությամբ Պերլին կորկիվ երաժշտական ուսումը կատարելագործելու «Դիմեցի աշխարհահույակ շութակահար ճուսեֆ Իոանիմի, որ Պերլինի արքունի երաժշտանոցի տեսուլն էր: Խորհուրդ տվավ մտնել Թիշարտ Շմիտի մասնավոր երաժշտանոցը: Ուսուցչապետ և արքունի երաժշտագիտ տեսուլ Շմիտ հանձն առավ ինձ հետ պարապել առանձնապես: Ավարտեցի տեսական և մանավանդ գործնական երաժշտության ամբողջ դասընթացը: Միաժամանակ ուսանող գրվեցա Պերլինի արքունիքի Ֆրետիկս Վիլհելմ Համալսարանի փիլիսոփայական բաժնում և լրացրի երաժշտության փիլիսոփայական պատմական դասընթացը: Ուսուցչապետներա էին Ֆ. Պերլինի, Գ. Ֆլայշը և Կ.



Կոմիտաս վարդապետ

սակին, ունեցած է երգչի ու բանաստեղծի հակումներ: Հայրը եղած է քաղաքի եկեղեցին դպիր:

Կոմիտաս իր մանկությունը անցուցած է չքաղոր վիճակի մեջ: Հորը մահեն տարի մը վերջ, 25 տղոց մեջեն իրեն կվիճակվի եղմածին երթալ, միանալու Մայր Տաճարին համար կազմվելիք երգչախմբին: Այս գովելի ձեռնարկը գործադրության կորվի Գևորգ Դ կաթողիկոսի փափագով:

Ֆրիտլանտրը: Վերջին տարին իր համար աշխատանքին շնորհիլ կարժանանա իր ուսուցչապետներեն լիւննուքոր տիտղոսին:

Բե որքան անկեղծ սեր ու գուրգուրանը կտածեր պրոֆ. Շմիտ իր տաղանդավոր աշակերտին հանդեպ՝ թող պատմե վարդապետին լավ բարեկամ երգչուհին, օր. Մարգարիտ Բարայան: — Ավարդապետը համարյա իր ամբողջ թոշակը գործածում էր ուսման,

դաշնակի ու երգեհոնի վարձքի, գրքեր և նոթաներ գնելում և հազիվ կարողանում էր օրսական մի անգամ ճաշել: Պրոֆեսորը հուզմոնքով նկարագրում էր իր տաղանդավոր աշակերտին հալվիլը, որ օրից օր նիհարում էր: Վերջապես չհամբերելով, մի օր դասից ետ այ. Շմիտը վճռում է նրան հետևել, հասկնալու համար նրա կյանքը. Հեռվեն տեսնում էր, ինչպես նա մտավ մի ժողովրդական համեստ պանդոկ և խեղծուէ նախաճաշ արավի: Նա շարունակեց հետևել վարդագետին մինչև նրա գուռը և մտավ տանտիկոցը մոտ՝ բացատրելով իր այցելության նպատակը և խնդրելով, որ իրեն միշոց տա հասկնալու իր աշակերտի կյանքը: Տիկինը տեղափորում է նրան մի հարկ ցածր, Կոմիտասի սենյակին տակ և նա մնում է այդտեղ, ամբողջ օրը ունկնդրելով ինչպես վարդապետը մերթ երգում, մերթ նվագում է, սայց այլևս ուտելու խնդիր չկա: Իրիկան ժամը տասին նա բախում է դուռը: Երբ Կոմիտաս զարմանքով տեսնում է իր պրոֆեսորին, վերջինս հարձակվում է իր աշակերտի վրա. — «Դուք այսպես ապրում եք առանց սնունդ առնելու», ևս արդիւում եմ այլևս ինձի վճարելու»: Եվ այդ օրվանից նա ստիպված է վնում շաբաթը երեք անգամ գնալ ճաշելու իր պրոֆեսորին մոտ, որ ամսուհետև տանում էր նրան Պերլինի օբերան: Կոմիտասի առաջին հոգու, դառնալիս Կովկաս, լինում է իր պարագը լիովին վճարել իր ամենապատվական ուսուցչապետին: Նա սրդու պես սիրում էր վարդապետին և եթե մի շաբաթ նամակ շաման նրանից, հեռապիր էր տալիս իմանալու: Կոմիտասի առողջությունը»:

«Հանձարը երեան բերելու համար կայծ մը պետք է» խոսքը որքան կհաստատե Կոմիտաս վարդապետ:

Քսան տարեկանին, երբ տակավին ճեմարանի աշակերտ՝ բարեկենդանի արձակուրդին, իր զյուղացի դասընկերներն մեկուն տունը հյուր կմնա: Այստեղ լսած մեկ խաղը ներգործող ազդեցություն մը կծե իր վրա և այն օրեն սկսյալ կնվիրե ինքոյնք ժողովրդագիրին երգեր հավաքելու, ուստմնասիրելու, բազմածայնի դաշնավորելու և գեղարվեստի աշխարհին ներկայացնելու տաժանագին աշխատանքին:

Ուստագնացություններ և տոնական հանդիսավորեր լավագույն առիթը կընծային իրեն՝ մատիտ ու թուղթ ի ձեռին շրջելու զյուղե գյուղ, գավառե գավառ, երեմն որպես խաղ կանչող վարդապետ, հաճախ թափնաված և երբեմն ալ ծալտյալ, գրի

առնելու անձեւ ու անկերպարան երգերու բայցակներն ու մոթիվները:

Ու այս ձեռվ Կոմիտաս վարդապետ հավաքեց ավելի քան 4000 ժողովրդացին երգերու անսպատ շտեմարան մը, որ ներշնչումի ազբյուր պիտի հանդիսանար և նյութ հայթալիքներ ապագա երգահաններու:

Այս երգերը, զորս Կոմիտաս վարդապետ կորակե «Դեղչուկ Երեւեր» ամվամբ, կներկայացնեն զանազան տեսակներ, — շինական աշխատանքի, հարսանեկական խրախնձնանքի, օտարության, դյուցազնական, սիրո, օրորոցի, պարի երգեր, և այլն: Այս երգերը իրենց կրած հանգամանքն համաձայն, մերթ եղանակալից են, մերթ գունագեղ, հաճախ մելամաղձեկ և խիստ հաճախ մեղեղիական, երանգալից, ցայտուն կղուափով և կենդանի թափով: Ունին մշտաթարմ հրապուր մը, որ ունկնդիրները կը գրավե րոպեական, համակելով զանոնք ներքնազագաց զերմությամբ և թափանցող ուժմությամբ:

Կոմիտաս վարդապետի գեղջուկ երգերու բանահյուսության առանցքը կկազմեն մեր Անգիր Դպրության և «Ջան Գյուլում» — ներու հարյուրավոր քառյակները, որոնք կհայտնվին նաև նոր երգահաններու երգերուն մեջ:

Մեծանուն երաժիշտը՝ իր տիրացած արվեստին նըրացննին և խորասույզ ուսումնասիրողի հատկության շնորհիվ, զատեց ու զտեց, հարազատ ձայները որոնելով, գոնելով, տվավ անոնց ազգային դրոշմ և բնորոշ նկարագիր: Զերբազատեց զանոնք օտար մեղեղություններ և հագուային գալարումներ ու միօրինակություններեւ:

Հայ գեղջուկ երգին ամենահատկանշական երկութը, բառի շեշտակն համապատասխան երաժշտական շեշտավորումն է: Կոմիտաս վարդապետի բոլոր երգերը պահած են իրենց բուն շեշտը երաժշտության մեջ իսկ: Հայ երգին ոգիին ու ոճին համապատասխան ինքնահատուկ ձայնաշար, փոփոխական կշիռ, ու բարդ չափ գործածելու նոր և եղակի ձեռ՝ իրմով սկսավ: Այս ակնբախ հանգամանքը՝ վարդապետին երաժշտական կարողության կուտա բարձրագույն արժեք, իսկ հայ երգին հմայք և ինքնուրույն կնիք:


Մեր երգերուն այս հատկանիշը կհարկադեր մեծ վարդապետը որդեգրելու խորին «ձայն առ ձայն»-ի ձեռ, հայ երգը դաշնավորելու, փոխան սովորական ներգաղնակումի:

Իր Պատարագը՝ շտեսակ բազմաձայն,

ողջոմնելու բախտը չունեցանք: Իր սակավաթիվ սաներեն վ. Սարգսյանի վերհիշումով դրի առնված և Կոմիտասյան հանձնախմբի ջանքերով արտատպված «Կոմիտասյան Պատարագ»-ը հրապարակի վրա է: Ան մեծ մասմամբ կտարերի եկմալյան Պատարագն: Բազմաձայնի ընտիր նմուշ մըն է եռաձայն այս պատարագը, իր «ձայն առ ձայն»-ի հզոր ու ներգործող դաշնավորությամբ Պախի FUGUE-երը հիշեցնող: Իր ինքնության մեջ Կոմիտաս Վարդապետ,

խստապահանջ, բժախնդիր, կծու քննադատ և ինքնաքննադատ էր:

Վարդապետի կիրթ և գեղեցիկ ձայնով, զգայուն երգի կարողությունը երկար ժամանակի համար թարմ պիտի մնա զինք ունկնդրության մեջ: Իր «Լույս Ջուարթ»-ին, «Բաց մեզ Տեր»-ին, «Տեր Ողորմյա»-ին առընթեր հիշենք եվրոպական ընտրյալ երաժիշտներու վրա ձգած խորին տպավորությունը իր երգիրեն, «Կոռւնկ», «Անտունի», «Մոնկաց Միրգե», «Կանչ



Կոմիտասը Զվարքնոցում (ձախից աջ՝ Երկրորդը)

ու սքեմին ու վեղարին շուրջին ներքեւ վայելշահասակ, բարեկազմ, նույր դիմագծով, խոհուն և փայլուն աշքերով անձնավորություն մըն էր: Իր ներաշխարհին մեջ ժուժկալ, պարզակյաց և սակավապետ: Ընկերային շրջանակի մեջ արթուն, սրամիտ, զվարթախոս և կատակարան: Որպես դեկավար՝

կոռնկ, կանչեա-ին և այլն, զորս կերպել սառսուազդեցիկ հուզումով:

Որպես համերգներ կազմակերպող վարող՝ Կոմիտաս տիրացավլ միշագայի համբավի: Զայս կապացուցանեն իր սարքած բազմաթիվ համերգները եվրոպական շահանավոր քաղաքներում մեջ, ինչպես

եգիպտոս, Ռուսիա և Պոլիս, երգիշ-երգչուցներու ստվար խմբերով: Եսկ որպես բանասիր և զասախոս հրապարակ կալը, իր մասնագետ բարեկամները և ուսուցիչ-ուսուցապետները հիացուց: Տվավ քանի ավելի զասախոսություններ հնու, ուր համերգներ սարքեց և արժանացավ օտար մամուլի անվերապահ գնահատության: «Ձեր հմտալից և խորիմաստ զասախոսությանց միջոցավ խորունկ հայացք մը ձգել տվիք դեպի այն երաժշտությունը, որ մեզի համար ցարդ գրեթե գոց էր, և որ մեզի՝ արևմտյաններուն շատ բան սորվեցնել կարող է» (Պերլինի համալսարանի երաժշտության պրոֆեսոր Ֆլայշը):

«Այն խորվանկ հայացքը, որով դուք մեզմե բոլորովմին հնորու եղող բարձր ու զարգացած քաղաքակրթության մը վսեմ կարողությունը մոտեն ճանցուցիք մեզի... Ձեր զասախոսելու և երգելու կատարելագործ արվեստը—ասոնք այնպիսի բաներ են, որոնք մեզ զարմացնել կարող էին և որոնք ձեր ունկնդիրներն ոչ մեկուն հիշողության մեջ պիտի թառամին»: (Մաքս Ջայֆերթ, Պերլինի համալսարանի երաժշտության ուսուցչապետ):

Իր գործունեության ամբողջ շրջանին ան ենթարկվեցավ բազմապիսի անարդարության, թշնամնանքի և զրկանքի իր մեծամեծ ներեն և եղբայրակիցներեն: Ասոնք ավելի մեծ ցավ ու կսկիծ պատճառեցին, քան իր մտամաշ ամենի աշխատանքը:

Կոմիտաս միևնույն հալածնքը ու թշնամնանքը դիմագրավեց Պուստ մեջ իր սարքելիք համերգներու վերջին վարկյաններում: Իր վարդապետական վարկը բեկանելու շանքեր, իր վսեմ գործը նսեմացնելու քննադատություններ, որոնց պատճառած հատուվիշտը կսկիպեր զինք ըսելու մեղմ հանդիմանությամբ.

—«Ե՞վ հավաքողը, և՛ ստուգողը, և՛ ուսումնասիրողը միայնակս եմ եղել...

...Այսպիսի աշխատանքներն անթերի և խղճմտորեն կատարելու համար մեկ մարդու կյանքը հերթ չէ...»:

Կոմիտաս Վարդապետ, իրեն նպատակ շունցավ երգահան կամ երաժշտահան մը ըլլալով՝ լոկ իր անձը ճանշցնել և փառավորվիլ, այլ հետապնդեց բարձր սկզբունքը մը— հաստատակամ հավատարմությամբ նվիրվեցավ տոհմային երաժշտության մասները ի մի բերելու, Ֆշաւ ելու, վերլուծելու, գիտական մասնագիտությամբ զգեստագրելու և գեղարվեստական կանարին նիրեալացնելու:

Վարդապետը իրագործեց իր դժվարա-

հաս նպատակը:

1914, հունիսին, Փարիզ գումարված երաժշտական միջազգային համաժողովին ներկայացավ որպես ժողովին մեկ անդամը և 400 երաժշտականներու ներկայության ավավ երեք զասախոսություններ և վերլուծական փաստերով ու գործնական օրինակներով (համերդ) ապացուց թի «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն»:

Այս կուռ և հմտալից բանախոսությանց շնորհիվ արժանացավ դրական գնահատության բոլոր մեծամեծ երաժշտականներն, որոնք իրենց հիացումը հայտնեցին՝ «Վարդապետ, գուք արևելյան երաժշտության համար մեզի նոր բանալիններ շնորհեցիք» ըսելով, և խոստացան երաժշտության պատմության գրքի երկրորդ տպագրությունը ճոխացնել «Հայ երաժշտություն» հավելվածով:

Կոմիտաս Վարդապետ իր գործունեության գագաթնակետին էր երաժշտական աշխարհը ընդհանրապես և հայ ազգը մասնավորապես կանկալեր նորանոր հայտնություններ և հանճարեղ ստեղծումներ իր հասուն և բեղմնավոր մտքեն, երբ ճակատագրի անողորմ հարվածը զգեստնեց զինքը:

1915-ի տարագրության, Վարդապետը մեկն էր Պուսեն աքսորված հայ մտավորականներեն: Զորավոր և ազգեցիկ միջամտությանց շնորհիվ թեև ողջ վերադարձավ Պուլիս, սակայն իր ականավոր ընկերներուն թուրքերու ձեռքով եղեռնական վախճանն ու տարագրության սարսափը հզոր կերպով ցնցեցին իր գերզգայում հոգին ու խորտակեցին իր մտքի վեհապանծ ներդաշնակությունը: ՀՕ երկար տարիներ Ֆրանսա-հիվանդանոցի մը մեջ «ուրվականալին» մտամեռ վիճակով մը տուայտեցավ, մինչև որ 1935, հոկտեմբեր 22-ին մահը բերավ իր խոշտանգված հոգիին հավիտենական խաղաղություն:

«Հայ դասական երաժշտության հայրը» իր ինքնածին մեծ տաղանդովն ու երաժշտական լուրջ դաստիարակության միավորությամբ օղակեց Արևելյան նուրբ արվեստը Արևմտյանին:

Եվ այսօր, Կոմիտաս Վարդապետին անունն ու համբավը մեծագույն գրավականն են մեզ ոգեպնդելու, թե ինչպես որ վերջին հիսուն տարիներու ընթացքին իր երգն ու երաժշտությունը ուներթեցին և ներշնչեցին իր ոնկնդիրները, նույն խանդ ու եռանդով պիտի երգին ապագա սերնդներե, որոնք գուրգուրանքով և նվիրումով պիտի պահեն ու պահպանեն իր ձգած ազգային թանկադիմանը:

(«Ըստ օր» փետր 6,7 1946թ. Ֆրեկոն)

## ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ



աֆայել Պատկանյանի մեծ ար-  
խիվն նրա մահից հետո, անցել  
էր նրա մոտ բարեկամ Գրիգոր  
Չալխուշյանի ձեռքը, որ մեզ  
էր հանձնել ջոկելու և կարգի բերելու գոր-  
ծը: Այն ժամանակներից (1892 թ.) այս նա-  
մակի բնագիրը մեզ մոտ էր մնացել, և մենք  
այստեղ օրևանում արդեն, երբ կազմում  
էինք նրա «Դիվանը», մուծելուց հետո այն  
դիվանիս մեջ, վերադարձրել էինք բնագիրը  
իր իսկական տիրոջը:

Ի նկատի առնվազ այն, որ «Դիվանը»  
1937 թ. մինչև օրս դեռ անտիպ է մնում,

իրավունք ենք համարում հանել այս հե-  
տաքրքրական նամակը «Դիվանը»-ից և  
հրատարակության տալ:

Նամակի բնագիրը գրված լինելով մատի-  
տով գիշերվա ժամը 12-ին, շտապ, Անվո  
ավերակ Կաթողիկե եկեղեցու մեջ, լապտե-  
րի նվազ լուցի տակ, գժվարությամբ է կար-  
գացվում, նամանավանդ, որ լիզուն էլ,  
Պատկանյանին հատուկ սովորական  
խառն խոսակցության լեզուն է: Տպագրում  
ենք անփոփոխ և կարծում ենք, որ շահեկան  
ու հետաքրքրական պետք է լինի ընթերցող-  
ներիս համար:

Հոկտեմբերի 1, 1879, Անի, Կարողիկեի  
ավերակի մեջ, ժամը 12-ը գիշերվա.

### ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ ՀԱՅԻ ԻՄ

Ժամը երեկոյան 6-ն էր, որ հասա Անի:  
իշեվանեցի լուսանկարիչ Քյուրքյանի վրա-  
նումը, որ հարած էր ավերակ-մայրաքաղաքի  
քայլայված Կաթողիկե ասված եկեղեցու  
աշակողմյան խորանումն (մատուռ): Ալեք-  
սանդրապոլիսն 4 ժամու ճանապարհ է կառ-  
քով և համարվում է 30—40 վերստ, ճիշտ  
շգիստմ: Եկանիք Անի հյուսիսային կողմից,  
անցանք դրեթե բոլոր ավերակների մեջից,  
իսկ իմ կեցած եկեղեցին թափ ծայրումն է  
Ախուրյան ձորին, մոտիկ միջնաբերդից և  
իմ կարծիքով, Հայոց մեծամեծաց խորհրդա-  
րանից, իսկ այլոց կարծիքով, երբ թե Տաճ-  
կաց մզկիթից: Ինչ և իցէ լույսը նվազելու  
վրա էր, ամեն բան երևում էր կիսաձևով,  
մառախչապատ: Մինչև շալ կպատրաստեին,  
մինչև նեղ վրանի մեջ ինձ համար օթևանե-  
լու տեղ կպատրաստեին, ժամը ութը—ինն  
եղավ: Հյուրասեր Քյուրքյանը, կարծելով  
թե ես ճամբեք հոգնած կլինիմ, համոզեց  
շուտ մտնեմ անկողին, ես այդպես էլ արի:

Հետոց եկող պարոն Խաչատուրը շատ  
խրիստոցեց. ես օրվա ծանր տպավորու-  
թյուններն պաշարված, քունս աշքես կո-  
րուցի, մնացի անքուն սւզիդ մինչև գիշեր-  
վա ժամը 11, պտուտ, պտուտ գալով ան-  
կողնիս մեջ, ինչպես որ սովորություն է  
ամեն ժամանակ մարդու: Փչեց հյուսիսի  
քամին, բայց ի՞նչ քամի, նրան պատահողը  
միայն գիտե, խոսքով շատ դժվար է մեկնե-  
լու:— քամի, որ կանգնած մարդուն ոչ  
միայն գետին է գլորում, այլ առնում տա-  
նում է ու ձորն է ձգում, քամի, որ վրան-  
ներու շվանները կարտում է և բարձրաց-  
նում է երկինք, քամի, որ արգիլել է ար-  
գավանդանող Շիրակին ունենալու անտառ-  
ներ ու պարտեզներ (Անիի շուրջը, որքան  
հեռագիտակն էր հասնում, ոչ մի թուփ  
չէի նկատում): Անդունք, անպատուհան  
Կաթողիկեն փուլ եկած, և բանի տե-  
ղին ճամբարած պատերեն քամին ներս էր  
մտնում ու գիշերային սոսկալի ժամերգու-

թրում էր անում, արձագանք տալիս տաճարի մեջ, մասս տիգ տիգ էր կանգնում, զլուխու ու բոլոր մարմինս փուշ փուշ էր վենում, թեև ոչ մահու հրեղուղեն, Դժվար է հրեակայիլը, բայց տեսնողը դիտե, որ ավերակը մարդուս վրա բատմնելի ազգեցություն է կատարում զիշերային խորհրդավոր ժամերում, ուր մարդ, որ հասակին կուղի լինի, ինչպես զամտիարակված կուղի լինի, խսկույն կենգանացնում է յուր մարդի մեջ այսիրուն, շար ողիներուն, թաղած մեռելներուն ու տունի տերերուն։ Անբնական բան է, որ մարդ, որ հաղար ոժվարությամբ յուր համար շինում է մի աղքատիկ ու խարխուկ խրճիթ, հանկարծ տեսնե նա ահապին բաղար, մեջը լցրած հսկայած տաճարներով, հոյակապ պալատներով և բյուրը բյուրոց մեծագին շենքերով, չի սարսափի. ինչո՞ւ թողին ու փախան մարդիկ այսպիսի հարստությունից, միթե մարդու հեշտ է բաժանվում յուր պապերու սրբազն տեղերեն, յուր ծնած տեղեն, յուր զավակների օր ու արև տեսած տեղեն։ Այսօր լքած, թողած բաղարը, տունը ու տաճարը ամենի վրա, գիշերվա ժամին ահ ու սարսափ է բերում, բայց դարձյալ ասում եմ, մահվան երկյուղը չէր



Գ.Ա.Մ.Ա.Ռ.—ՔԱՐԵՊԱ.

ինձ պաշարողը։ Տաճարի ահապին բարձրությունից հանկարծ գոռաց բուն յուր տիսրալի ու շարագուշակ ձայնով, որ խիստ հարմար էր քամիի ոռնալուն և տեղի մեռելանման լուսությանը և ահա, նույն հեռավոր դիտակից, որ կարծվում է տաճիկի մինարե, պատասխանեց նրան ուրիշ բու... Լուսթյուն, բայց այնպիսի լուսություն, որից բոպեի մեջ սպիտակում է մարդու գլխու մազերը... Հանկարծ մի փոքրիկ քար վայր ընկավ, նրա արձագանքը ծ- անգամ կրկնվեցավ տաճարի մեջ. լուսություն, ահա հաշեց հեռույումը վայրի աղվեսը, բայց

այնպիս ովբալի, իբր թե վհուկներու մազիներեն օգնություն է խնդրաւմ։ Քամին հանկարծ դադիսց վշելու, ափսո՞ս և իզո՞ւր, գոնե գիտես, որ քամին քամի է, մի սովորական երևութիւն է, բայց նրա լուսության ծամանակ ավերակի կողմից, ամայի ձորերի մեջն, քաղաքի գլաւակների տակերեն սկսան լսվել գիշերային անորոշ ձայներ, ան ձախերը, որ իրական կյանքի մեջ բնության մեջ, օր ցերեկով երբեք չեն լսվում. այն ձայները, որն երբեք մարդիկ կարողացած չեն իմանալ, թե որի՞ ձայնն են, և որին ժողովուրդը կոչել է

գիշերվա արհավիրը։ Ընկերա խոխուում է, հյուրասեր տանուտերը նույնպիս անուշ քուն է վայելում, ևս մենակ քուն չեմ լինում. սոսկալի ահապին պատերը թեկ աղոտ լուսավորված են լուսեն, բայց ակնհայտնի երկում են ինձ, աշբս փակում եմ, կոպքիս մեջն տեսնում եմ, ավելի տեսնում եմ թան թե աշբս բաց ժամանակը... Տեսնում եմ անձնավորած ամեն հայկական մոլությունը, որը կործանեցին ապաժաշեն Անին Անին շունի ոչ փայտ, ոչ աղմաս, ոչ գաճ, Ասին շինած է լոկ քարե, շինած է աղառաժյա վիճե, ինչպիս քանդկեցավ, զարմանալի՝ բան:

Անհնար է այսպիսի հրաշակերտ շինելու հասարակ մահկանաց վի ձեռքով, Անիի շինողը հսկաներ և դյուցազներ են եղել, բայց և քանդովք եղել են ոչ պակաս հսկաներ շարության և մոլության կողմանի։ Հայոց շոր ու ցամաք պատմությունը ամեննենին արտահայտիչ չայնքին ու մահուն, ես այս սոսկալի ժամուն հոգիով և երեակայությամբ ըմբռնեցի այն ամեն գաղտնին, որ վարդապետների գրիշը երբեք հասկացնել չէր ինձ; Ես հասկացա շատ բան. այս բարերեն ես ավել բան հասկացա, բան թե մեր բազմահատոր գրքերեն Այս լոգեիս Անիի մեջ կա 7 հոգի հայք— ես, ուղեկիցս,

Քյուրքճանց, նրան երկու ժառայիք և երկու ծառայիք (թեև բացի ինձմեն, ամենքը քնած, բայց մեր շորս կողմը, ձորերու ու հովհաններու մեջ կան ավելի, քան թե հազար արյունաբրու քյուրդեր, Անիի օր ու դիմեր ավերովները... Մահին ամեն բոպես սպառում եմ, չեմ վախենում, Աստված հավատացեք, բարձիս տակը ունիմ վեց փողանի ատրճանակ, կյանքս արժան չեմ ծախիլ կեղտու քյուրդերին, բայց 7 զավակս, բայց անտեր կնիկս, որից ահա 3 մամիս է լուր շունիմ, նորա, նորա, խեղճերը

Զամիերը շատացան, բամին ու բուերը ունում են, կարծես թե Թուզգիլը, Արփ-Արսւանը, Զարմաղանը ու Մասիսի գետնաշարժը նորից պիտի ցուց տան խեղճ Անիին իրանց կատաղի բնավորությունը: Ողջ լեռուք և աղոթեցեք Ձեր Շափայելի ողջության համար:

Սիրելի Հայր իմ, այս նամակը կարգացեք և անհապաղ ինձ վերադարձուցեք. սա պիտի մտնե իմ ճանապարհորդության մեջ, իբր Անիի գիշերվա կատարած ծանր տպավորությունը: Որքան և փորրովի լինի եր-



Անի. Կարուղիկն եկեղեցին

պիտի մնան անպատսպար որբեր, իսկ ինձ համար Անիի մեջ արյուն վոթելը անթառամ պսակ է... Օրհնեցե՛ք ձեր որդուն, որ ի սեր ազգին յուր կյանքը վտանգի տակ ձգել գտիտ... ի սեր ազգին, ասում եմ. ես գիտեմ, որ իմ ճանապարհորդեմ Հայաստանի մեջ անօպուտ չի պիտի մնա հայերի համար: Ժամանում:

բեմն մարդս, բայց նրան միշտ թանգ է ամեն մի իսկական զգացմունք, թեկուղ լինի նա դյուցաղնական կամ երեխայական. այսպիսի բոպեներ շատ հազիկ են պատահում իրական կյանքի մեջ, և եթե պատահում են, նորա թանգ և անմոռանալի են, և նոցա հիշատակը, իբրև սրբոց մասունք, նվիրական է մեզ համար:

### Սանորություն

Թափ ծայրում — Ամենածայրում:

Այս, այսեր — Սատանա, սատանաներ:

Տունի տերեր — Տների մեջ ապրող ոգիներ:

Նամակիս մեջ հիշված Խաչառուրի ովլինելը մեջ հայտնի չէ, իսկ Քյուրքճանը ժամանակի հայտնի հայ լուսանկարիչ է եղել, որ ամիսներով ապրել է Անիում և վարպետորեն լուսահանել բոլոր ավերակները

ու կազմել մի ընտիր հավաքածու ստեղծուկոպի համար:

Մեզ թվում է, որ մեր շնորհալի բանատեղծը սխալվում է, երբ Անվո դաշտի բուսականություն շռանենալը վերագրում է այլտեղ վշող քամիների ազդեցության: Անվո դաշտն անշրջի է, նման մեր երկրի շատ տեղ եղած անշրջի առապարներին, որոնք, սակայն, շուր ստանալուն պես, հա-

մակ պարտեզ ու այլի են դասնում, ինչպես ցուցի են տվել Սովորական Հայաստանի հաջող փորձերը:

Պատկանյանի խոսքերից երեսւմ է, որ նա ցանկացել է ճանապարհոութել Հայաստանում, բայց որքան մենք գտանք, չի կատարել իր ցանկությունը, որովհետև Մակար կաթողիկոսը, ինկատի առնելով ժամանակի անհարժարությունը քաղաքական տեսակետից, խորհուրդ չի տվել:

Որ Անին քարուքանդ է եղել երկրաշարժից և դրա հետևանքով վերջնականապես դատարկվել բնակչությունից, այդ վաստ է և ոչ ոք չի հերքում, բայց որ նա քանդվել է Մասսի շարժից, մենք այդ առաջին անգամ իմանում ենք Պատկանյանի այս նամակից: Ո՞րքան ճիշտ է այդ: Իսկ քաղաքի կործանումն քաղաքական տեսակետից, որի մասին ակնարկում է Պատկանյանը իր «Տեսնում» եմ անձնավորած ամեն հայկական մոլոքյունք, որք կործանեցին ապառաժաշեն Անին», խոսքերով, բոլորովին ճիշտ է: Այդ հետևանք է եղել բյուզանդական կայսրության Հայաստանին տիրելու համար գործադրած նենք քաղաքականության, որին նպաստել են քաղաքականապես անբարոյականացած իշխաններն ի դեմս դավաճան «Ենտ Սարգիս և մյուսների ու ժամանակի, ու բարով «Գետադարձ» կոչված Պետրոս Ա. կաթողիկոսի (1019—1028), որոնք անձնական շահերից դրդված ծախել են իրենց հայրենիքը և ազգի դավաճանների սկ անունը (տես Էջմիածնի միաբան Հուսիկ վարդապետ Մովսեսյանի «Հայաստանի հայոց» պատմութիւն), դուխներ թ—ժ):


Ռաֆայել Պատկանյանի իր այդ Անվո ավերակներին տեղն ու տեղը ծանոթանալու հանգամանքը կապված է եղել նրա մտադրության հետ՝ մի բան գրելու քաղաքի կործանման մասին, որ նա հետագայում և իրագործել է՝ գրելով իր պատմական «Անւոյ»:

առումն» խորագրով թատերական երկը, բայց մեզ անհայտ պատճառով կիսակատարէ թողել:

Բանաստեղծի այդ կիսատ երկը, որ բազկացած է մի նախերդանքից և երկու արարածից, մենք տպագրել ենք մեր ծանոթագրությամբ «Հումայը»-ի 1901 թ. երկորդ գրքում: Ավելորդ չենք համարում այստեղ ասել և այն, որ Պատկանյանն այդ թատերագրությունը գրել է Սունդուկյանի հորելանի առթիվ. նա ցանկացել է այդ ներկայացնել նոր՝ նախիշևանում տեղի օթատերասիրաց ընկերության» անդամների միջոցով, նույնիսկ հորելյանի օրը:

Դ. Խաչկոնցն իր «Հայոց Կրօնական բանաստեղծութիւնը» խորագրով հոդվածում խոսելով վերոհիշյալ Պետրոս Գետադարձի գրած շարականների մասին՝ ասում է, ու... Գետադարձ Հայրապետն, որ ուներ ցեղական ճոխություն՝ հինգ հարյուր գյուղ ու առաստ գանձեր, որ իբրև հոգլոր տեր ոչ միայն հինգ հարյուր գավառատեսուշ եպիսկոպոսներ ուներ ճեղքի տակ, այլև ամբողջ Հայոց կապողն ու արձակողն էր, կամ, բայց Գրիգոր Մագիստրոսի, իբրև «սուրբ» Հայրապետ բացող մեզ դրանն արքայութեան, էրք ամեն բան կորսնցուց, իրավունք ուներ երկարորեն մտածելով իմաստունին և ման բացականչելու՝ «Ունայնութիւն ունայնութեանց»: Այդ միտքը իր ձևով իր աստիճանի ու կոչման համեմատ ամփոփված է այնպիսի հոգլոր երգի մեջ, որ ամեն ժամանակ ու անդադար հնչվում է հայ էկեղեցու մեջ իբր խրատ ամենքին. «Ուսկի է ղեալս անպիտանացայ, գեղեցկայրմար շինուածոյս քակտումն. իմաստոնս լիմանցաց ի բարեաց մեղաց, յոր ընկղմեցայ, և այժմ աղաչեմ Ստեղծողի ամենից, ընկա'լ և հանգո՛ զհրաժարեալ հոգիս յեօթնաստեղեան լուսեղէն խորանս» և այն: (Տես «Հումայը» գիրք թ. էջ՝ 305—368):





# ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԱՆՐԻ ՎԵՐՆԵՈՅ

## ՀԱՅԵՐԸ ԵՎ ԻՐԵՆՑ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Մարտելի մեջ հրատարակվող կոմունիստական «Մարտելզ» օրաթերթը 1945 դեկտեմբեր 30, 31 և 1946 նույնվար 1 թվերուն մեջ հրատարակած և պատմական փաստարուղբերու կոքեած հոդվածաշարենվ մը կպատախանե այդ օրերուն Քիազիմ Կարապետիր՝ Թուրքիո մեջիսին մեջ խոսած շնական և սպառնալից նաոին: «Մարտելզ»-ի հոդվածաշարեր պատախան մըն է նաև Ֆրանսայի Սոցիալիստ կուսակցության որկան՝ «Փոփյուլեր»-ին, որ կհայտարարեր թե իրավական գետին մը չունին հայկական և վրացական պահանջները Թյուրքիային, այլ պարզապես արտահայտությունն ին Սովետ Միուրյան ժիմպերիալիստական ձգումներուն»:

ախ իրենց տեղը դնենք մարդիկը: Թուրք կառավարության պատգամախոսը՝ Թիազիմ Կարապետիր հեղինակն է Սարըղամիշի անտառին մեջ մորթոտված 60.000 հայերու զարդին:

Անմիջապես, որ հայկական և վրացական պահանջները իմացվեցան ֆրանսայի մեջ, Սովետ Միության հետ կապ ունեցող ամին բանի կատաղորեն թշնամի և կոմունիզմի դեմ ուստեմատիկ ատելությունն սնուցանող մամուլը այս խնդիրն շուրջ շղթավերծեց հրապարակագրություն մը՝ որուն հանկերդն է «Սովետ Միության ժիմպերիալիստական ձգումները»:

Հանուն «հավաքական պահանջության», «ազգային գերիշխանության» և «միջազգային դեմոկրատիայի» նույն այս մամուլը լայն և լավագույն տեղ տվակ թուրք դահճներու պոռուտախոսությանց, անոնց մամուլին ամբարտավան ելույթներուն, ինչպես նաև անոնց պետական մարդոց ցափուութներուն:

Եվ մինչ ժողովրդային Հանրապետական Հարժման թերթերը իրենց օրհնությունները կուտային թրքական կեցվածքին, դեկտեմ-

բեր 22-ի «Փոփյուլեր»-ը կարտահայտվեր հետեւյալ ձևով:

«Ու հիմա մեջտեղ կնետովի բոլորովին չնախատեսված պահանջք մը, որ կրիսի իմպերիալիստական նույն քաղաքականութենն: Սովետ Միությունը առանց այլեայի թուրքիային կպահանջն Սև ծովի ափերին սկսյալ 300 կիլոմետր երկարությամբ և 100 կիլոմետր լայնովով հողամաս մը...»

«Դրուսիո Ֆրետերիքը կըսեր. «Նահանգ մը կգրավեմ: Ետքն է, որ կգտնեմ այս նրավաճումս արդարացնող օրենսգետներ»: Սովետ Միությունն ալ պահանջներ կներկայացնի, սակայն թուի բացարձակ վստահություն շունի իր միջազգային օրենսգետներուն վրա: Գամի որ հոգնությունը հանձն առած է հայթայթելու իր արդարացումները: Այս իրավունքներուն պատմությունը կերպի թե կսկսի մինչև 15-րդ դարեն, նախքան ոսմանյան գրավումը...»:

Եվ «Փոփյուլեր»-ի խմբագիրը սրամտություն մը կփորձե, թելադրելով որ Հունաստանին արվի Տրապիզոնը, քանի որ այս նավահանգիստը... (ու կհետեւին «Թէյն» բառարանի 4802-րդ էջեն հապեճապով ընդօրինակված մի քանի տեղեկություններ):

Կրնայի՝ արդյոք «Փոփյուլեր»-ին հիշեց-

նել թի նույն այս նավահանգստին մեջ է, որ թուրքերը 1915-ին կլսեղեին հաղարավոր հայ մասունքները եղ սակայն 15-րդ դարուն չեն, որ տեղի կունենային այս բաները Ու բնական է, որ ոչ կառուսը և ոչ ալ համայնքի տարանը չեն հիշատակեր այս իրողությունները:

Մարդ կշփոթի, կմնա պատմական սխալներով լցուն այսպիսի հոդվածներու առջև: Քանի որ ի վերջո կամ այն է, որ արտաքին քաջարականության այս խմբադիրը՝ բռլորովին տգես է պատմության մասին և կամ կատարելապես վերահսու է թի հարկ չկա մինչև 15-րդ դար երթայու, թի այս օրինավոր պահանջները 1920-ի պահանջներն են և այն ատեն ակներև կդառնա իր խեղաթյուրող մը ըլլալը:

Ասոր համար է, որ առանց «միջազգային օրենսգետ» ըլլալու այս արտառողությունները կհարկադրեն մեզ, հակիրճ լերհիշումը ընել այն իրադարձությանց, որոնք անցնող 25 տարիներուն ընթացքին տեղի ունեցան Արևելիք այս մասին մեջ:

Ավելի հստակ դարձնելու համար դեպքերու այս պատմականը, հաջրդաբար պիտի շոշափենք հետևյալ նյութերը.

1.— Հայաստանը 1914—1918-ի պատերազմի նախօրյակին.

2.— 1914—1918-ի պատերազմի ընթացքին հայոց խաղացած գերը.

3. Մուտրոսի զինադադարը.

4.— Սերի դաշնապիրը և այս դաշնապիրին բնարարումը թուրքերուն կողմեւ

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1914—1918-ի ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Որպես արևելյան և արևմտյան քաղաքակրթությանց միջև բաժանման կետ, Հայաստան 30 դարերի ի վեր կրած է այն մեծ ցնցումները, որոնք տեղի ունեցած են այս երկու աշխարհներուն միջև:

Դարերու ընթացքին, ետ անհատնում պատերազմներու, այս շրջանները հափշտակած են Արևելիք ու Արևմտյափի մեծ տերությանց կողմեւ:

Եվ սակայն, ըլլա իր ազգային թագավորներուն տիրապետության, ըլլա օտարին լուծին տակ, այս լեռներուն բնիկ սեփականատերը, աշխատավորը, արտադրող՝ միշտ եղած է հայը, որ հայենի հողը ուռուծ է իր արյունով ու քրտինքով: Հաջորդաբար ոտնակիսված ու կործանված, հայը միշտ կառուցած է ու վերակառուցած:

Մեկ կողմ թողունք 1914-ին առաջ ընթացող շրջանը և արագ ակնարկ մը նետենք

վերջին քանի ատարիներու իր պատմության վրա: Քսան տարիներու պատմություն մը, որ հատակորեն կրացարեն իր այսօր բանաձեւած պահանջները:

1914—1918-ի պատերազմի նախօրյակին Հայաստան բաժանված էր երկու մասերու:

1.— Անդրկովկասյան Հայաստանը  
1.293.702 բնակիչներով:

2.— Թուրքահայաստանը, որ կբաղկանար թուրքերուն կողմն հայերեն խլված 10 նահանգների: Որով 2.026.000 հայերու բնակություն մը դարերե ի վեր ենթակա էր թուրքական բարբարության, ճիշտ ինչպես Ալգասն ու Լոռենը 1870-ին 1913 ենթարկվեցան գերմանական տիրապետության:

ՀԱՅԱՍՏԱՆ 1914—1918-ի ՊԱՏԵՐԱԶՄԻ  
ԸՆԹԱՑՔԻՆ

1914-ի աշնան Գերմանիո դաշնակից թուրքերը պատգամավորներ զրկեցին հայերու երպումի մեջ կայացող Ազգային Համագույմարին և անոնց խոստացան ինքնավարություն տալ «Թրքական Հայաստանին», եթե հայեր Վրաստանի և Ադրբեյջանի հետ համաձայնաբար կանխեին Գերմանիո կողքին: Հայերը մերժեցին բացարձակապես և հերոսական պայքար մղեցին դաշնակիցներուն կողքին:

Մեծ եղավ հայոց կողմն դաշնակից տերությանց բերած զինվորական նպաստը: Անոնց խաղացած դերը վճռական եղավ վերջնական հաղթանակը ապահովելու տեսակետեն: Եվ սակայն անհատնում եղան անոնց կորուստները: Պիտի բավականանանք հայշատակելով մի քանի պաշտոնական վավերաթուղթերու կարգ մը հատվածները:

Անգլիս Արտաքին Գործոց նախարարության պետական ենթաքարտուղար Լորդ Ռովը Սեպտ 1918 հոկտեմբեր 3-ին հետեւյալ զեկուցումը կընե Լորդ Պրայսին:

«Հայերու կողմեն հասարակաց գատին ընձեռուած ծառայությունները չեն կրնար մոռցուիլ: Հոս պիտի հիշատակեմ չորս կետեր, զորս իմ կարծիքով: Հայերը կընան նկատել որպես ուխտը դաշնակիցներու օգնությամբ իրենց աղաստագրության:»

«1.— 1914-ի աշնան թուրքերը պատգամավորներ ուղարկեցին հայերու Ազգային Համագույմարին և խոստացան ինքնավարություն տալ թրքական Հայաստանին, եթե հայերը հանձնանու ըլլային պատերազմին ընթացքին աքտիվ կերպով օդնել թուրքիու:»

«Հայերը մերժեցին օգնել Գերմանիո  
դաշնակից թուրքիո դատին»:

«Հ.— Մասամբ այս խիզախ մերժումին  
համար է, որ թուրքիո Հայերը 1915-ին  
սիստեմատիկորեն ջարդվեցան թուրք կա-  
ռավարության կողմեա: Բնակչության երկու  
երրորդը, ավելի քան 1.000.000 այրեր,  
կիներ, և մանուկներ բնախնչվեցան ամեն  
դժիմային մեթոսներով և ամենայն պաշ-  
արյունությամբ:

«Յ.— Պատերազմին առաջին օրեն Հայ  
ազգին կեսը կազմած է կամավորներու զո-  
րագունդեր, դիմագրավելով՝ Հարվածները  
Կովկասի պատերազմի ամեննեն ծանր կոփ-  
ներին մի քանիին:

«Հ.— Ռուսական բանակի քայլայումնեն  
ետք, Հայկական այս ուժերը հանձըն առին  
Կովկասի պաշտպանությունը և ամբողջ  
ուժը ամիս ուշացուցին թուրքերու հա-  
սաշխալացքը, այս ձևով աշքառու ծառա-  
յություն մատուցանելով Միջագետքի բրի-  
տանական բանակին»:

Պերլինի ամերիկան նախկին դեսպան  
ձերմս Ռուսական 1920 մարտ—7-ին  
Ամերիկան կառավարության ներկայացու-  
ցած Հուշագրով մը կըսեր.

«Հայերը 200 հազար կանոնավոր զորք  
և կամավորներ տվին դաշնակից բանակ-  
ներուն և 75 հազար հոգի կորսնցուցին  
ուղղմադաշտերուն վրա»:

Հիշեցնելի ետք, թե Հայերը ինչպես մեր-  
ժեցին թուրքերու ինքնավարության խոս-  
տումը, ձերըսա կպատմե թե ինչպես 1.000.000 այբեր կիներ, և մանուկներ  
ջարդվեցան պատմության մեջ իր նմանը  
չունեցող վայրագությունով մը»:

Ապա ձերըսա կմշշերե Ֆոն Լյուտեն-  
տորֆի Հուշերեն հատված մը, ուր սպա-  
րապես Հինտենպուրկի սպայակուլտի պե-  
տը կընդունի թե՝ «Գերման պարտության  
ազդակներեն մեկը եղավ վառելանցութերու  
պակասը և թե Հայերն ալ առ այդ իրենց  
աշակցությունը բերին, իրենց քաշարի  
դիմադրությամբ ութը ամիս հապաղեց-  
նելով թաքվի գրավումը»:

Ի վերջո զորավար Ալեմապի հհայտարարե.

«Պաղեստինի մեջ իմ հրամանատարու-  
թյան տակ դրված հայկական զորամասները  
կովեցան մեծ վարպետությամբ, և մեծ  
բաժին մը ունեցան հաղթանակին մեջ: Պա-  
ղեստինի մեջ Ֆրանսա ալժիրական միակ  
տարածուակ մը ուներ: Ֆրանսական դրոշի  
տակ գտնվող հայկական զորամասներն են,

որ դրավեցին սուրիական ծովափը և Կիլի-  
կիան:

«Որով սոսկ մարդկայնական պարտավո-  
րություն մը չէ դաշնակիցներու և Ամերի-  
կայի՝ Հայերու Հանդեպ ունեցած պարտա-  
վորությունը. քանի որ անիկա հիմնված  
է ուզմադաշտերու վրա՝ Հայաստանի կող-  
մե ընձեռուած ծառայությանց վրա»:

ՄՈՒՏՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ (1918 ՀՈԿ. 30)

Դաշնակից տերությանց և թուրքիո միջն  
զինադադարը կնքվեցավ Մուտրոսի՝ մեջ,  
1918 Հոկտեմբեր 30-ին:

Հայերը, որոնք պատերազմի ամեննեն  
ծանր կորուսաները կրած ըլլալու առանձ-  
նաշնորհը ունեին—կորսնցուցած ըլլալով  
իրենց ամբողջ բնակչության երկու երրոր-  
դը— կհուսային թե դաշնակից հաղթանա-  
կը ընդհանուր բարվում մը պիտի բերեր  
իրենց վիճակին:

Սակայն այս հողերը, որոնք կոչված էին  
զատվիլ օսմանյան հին կայսրութեանն և  
սահմանված էին Հայկական Պետության,  
միակը եղան, որ զգրավուցան դաշնակից-  
ներուն կողմեա:

Ի հեծուկս Մուտրոսի զինադադարին  
թրակական բանակը մասնակիորեն միայն  
զինաթափակեցավ:

Թուրք զինգորներն իրենց զինքերն ու  
ոսազմանցութերը կրաշնեին իսլամ բնակ-  
չությանց: Չքանդվեցին զինքերու և զինա-  
նյութերու մեծ պահեստները, որոնք տե-  
սավորված էին Ասիական թուրքիո դաշ-  
նակիցներուն հակակշիռին տակ գտնվող  
շրջաններուն: մեջ:

Հակառակ զինադադարի պայմաններեն  
մեկուն, որ կնախատեսեր դաշնակից գրա-  
վում մը, անմիշապես որ ծագեին թուրքի-  
րում կողմեա ստեղծված միշաղնեպեր և ան-  
կարգություններ, ոչ մեկ միշոցառում հ-  
ղավ երբ թուրք կառավարությունը ձեռք  
զարկավ նոր ջարդերու և տարագրությանց:

Ասկե զատ, 1918—1920 զինադադարի  
և խաղաղության վեհաժողովի միջն ինկող  
երկու տարիներուն թուրքերը մեծ թվով  
հզոր պաշտպաններ ճարեցին ելլուպայի  
մեջ, դիմելով թրական դիվանագիտության  
համար սիրելի եղող մեթոտի մը.— մըր-  
գակցություններ հարուցանել տերությանց  
միջեւ:

Այս ձևով ետ իրեն տարվան եր-  
կարատև և տաժանեի բանակցությանց,  
մինչ թուրքերը կարունակեին իրենց  
սպանդի գործը, 1920 օգոստոս 10-ին ստո-  
րագրվեցավ Ալիքի դաշնակիրը: Հոն Հա-  
յաստանը ևս կպանվեր դաշնակիցներու

կարգին: Ահավասիկ Հայաստանի վերաբերյալ զիմանքը հոգվածները.

ՀՈԴՎԱԾ 88.—Թուրքիա. կհայտարարի թե՛ ինչպես այդ ըրած են դաշնակից տերությունները, կրնդունի Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն մը:

ՀՈԴՎԱԾ 89.—Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև դաշնակիր բարձր կողմերը, կրնդունի Միացյալ Նահանգներուն ախագահին իրավախոռնության հանձնել Թուրքիուն և Հայաստանի սահմաններուն ճշշումը և ընդունիլ անոր որոշումը, ինչպես նաև բոլոր այն կարգադրությունները որ ան կրնա առաջարկել, ծովուն վրա ելք մը տալու համար Հայաստանին, ինչպես նաև վերոհիշյալ սահմաններուն մերձակա կա սամանյան հողերուն ապաղինվորականացման համար:

ՀՈԴՎԱԾ 90.—Այն պարագային, երբ Տ9-րդ հոդվածին հիման վրա սահմանին որոշվելով Հայաստանին փոխանցելի ըլլան թրական տիրապետության տակ գտնվող հայկական նահանգներուն (Թրքահայաստանի) ամբողջությունը կամ մեկ մասը, Թուրքիա հիմակվնել կհայտարարի թե՝ որոշման թվականի օրեն սկսյալ կհրաժարի փոխանցված հողերուն վրա ամեն իրավունք, և ալյու: Խաղաղության դաշնագործերի ուժից հոդվածներ կորոշեին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հասարակաց սահմանները ետ այս երեք տերությանց համաձայնության:

1920 նոյեմբեր 22-ին նախագահ Ռեփուրն առ ի գործադրություն 89-րդ հոդվածին, կարծակեր իր իրավախոռնական վիճուր, Հայաստանի տալով մինչև այդ օրը թուրքերու կողմեն գրավուած, սակայն սկիզբնեն հայերուն պատկանող հողերը (Հոս «Մարսելեզ» կհրատարակե Հայաստանի քարտեսը Ռէփուրնյան սահմաններով):

Սակայն ոչ Սկրի դաշնագորի հստակ և ճշգրիտ պայմանները, ոչ ալ Մուտրոսի դինագագարի պայմանները . հարգվեցան թուրքերու կողմէ:

Եվ ահա 1920 սնատեմբերի կիսուն թուրք զորքերը հրամանատարությանը տակ թիազիմ Կարասէքիմի, որ այսօր դարձյալ ատպարեղ կիջնե թրքական դիվանագիտության մէջ, առանց որուէ ձևով պատերազմ հայտարարելու, հարձակեցան Սկրի դաշնագորի նոր Հայաստանին վրա և խլեցին այդքան սուզ գնով ստացված հողերը:

Մի քանի ամիսներու կատաղի կոփներե ետք, հակառակ բոլոր հանդիսավոր խոս-

տումներուն, դաշնակիցներեն լրված Հայաստանը (ինչպես նաև Վրաստանը) Թուրքիուն ձգեցին Կարսի, Արտահանի և Սուրմալունները:

Նույն ժամանակամիջոցին է, որ Հայաստանը ու Վրաստանը ինքինքնին հոշակեցին Սովետական Հանրապետություն և մասն Սովետական Սոցիալիստական Հանրապետության Միության մէջ:

Տեսանք, թե ինչպես Հայաստան 1914—1918-ի պատերազմին ընթացքին, Կովկասի մէջ խաղացած վճարական դերով՝ իր արյան գնով շահեցավ Սկրի դաշնագորը: Նմանապես տեսանք թե Թուրքիա ինչպես բռնարարեց դաշնագորը և հափշտակեց հայկական հողերը:

Այսպես ուրեմն, խաղաղության դաշնագիրներս լույսին տակ և սույն շրջանի պաշտոնական վավերաթուղթերու ընդեշնեն, իրադաւթյուն մը կհաստատվի. — թե 1920-ին Թուրքիան, պարտված երկիր մը և Գերմանիու դաշնակիցը, բռնարարեց Մուտրոսի դինագագարի պայմանները և Սկրի դաշնագորը:

Թուրքիա հափշտակեց այն հողերը, որոնք հիշյալ դաշնագրի 89-րդ հոդվածով նորունված Նախագահ Ռէփուրնի իրավախոռնության համաձայն, Հայաստանի պիտի վիրադարձեն: Թուրքերուն կողմեն վայրագործեն ներխուժված այս հողերն են, որ հայ բնակչությունները կպահանջեն այսօն:

Այս երկու երկիրներու ժողովուրդները նադիներու գեմ մզգած պայքարին մեջ հակառական նպաստ բերին Սովետ Միության ստատերագմական ճիգին:

Հարյուր հազար հայեր և վրացիներ մեռան բոլոր ուազմագաշտերուն վրա հանուն պատության և գեմոկրատիայի:

Այս ժամանակամիջոցին թուրքերը երկությական շեղործության մը դիմակին տակ թանկագին օգնություն մը ընծայեցին հիտլերականներուն:

Հայ և վրացի ժողովուրդները իրենց արյան գնով շահեցան իրավունքը՝ ամբողջ աշխարհի երիսխն հայտարարելու. իրենց պահանջընները, ենչ որ կարելի չէ ամբաստանել որպես օրմագերիալիստական ձրգություն. 1920-ի անարդարություններին ամեննեն մէծը դարմանելը նվազագույն բան մըն է:

Լավ մը պիտի շխնդայինք, պաշտօնակից «Փոփյուլեր», եթե 1918-ին մեկը որպես իմպերիալիստ ամբաստաներ ֆրանսան,

քանի որ ան կվերստանար 50 տարի առաջ Գեղմանիո կողմեր գոավուած Ալգաւն ու Լոռենց:

Կտեսնեթ ուրեմն, թե հարկ չկա մինչև 15-րդ դար երթալու Կրավի գիտնալ թե Թուրքիային պահանջված հողերը տակավին թաց են թուրքերուն կողմեր խողխողված ավելի քան մեկ միլիոն այլբերու. կիւներու և մանուկներու արյունով, թուրքեր, որոնք այսօր կհամարձակվին դեմոկրատիայի անունով խոսիլ, պահանելու համար իրենց ասպատակությանց պտուղնիրը:

Կրավի հիշել թե սույն շրջանի պետական մեծագույն մարդիկը՝ արդեն իսկ ամենայն արդարությամբ որոշած էին. թե ոչ ոք է Հայաստանին վերադարձվին այս հոգերը:

Մեծն Բրիտանիո Արտաքին Գործոց Պետական Քարտուղար Պ. Պալֆուր 1917 նոյեմբեր 6-ին կհայտարարեր.

«Մեր պարուականությունն է թուոր կառավարութենեն իւլել այն ժողովրդները, որոնց կազմակուծվեցան թուրքերուն կողմեր, որոնց զարգացումը կասեցուցին թուրքերը, և որոնք, վստահ եմ, պիտի ծաղկին, եթե պատշաճ կառավարություն մը տրվի իրենց...»:

Հաշնակիցներու անունով ֆրանսիական Հանրապետության Նախագահ Պ. Արիսթիտ Պրիան 1917 հունվար 10-ին կհայտարարեր.

«Փաշնակիցներու պատերազմական նըստակներեն մեկը պետք է ըլլա աղատագրումը թուրքերու արյունոտ բռնակալության ենթարկված բնակչությանց և եվրոպային դուրս նետվիլը օսմանյան կայսրության, որ որոշապես օտար է արևմտյան քաղաքակրթության... Երբ հնչե օրինավոր հատուցումներու ժամը, ֆրանսական Հանրապետության կառավարությունը մոռացության պիտի շտա հայ ազգի տառապագին փորձությունները և իր դաշնակիցներուն հետ համաձայնաբար, հարկ եղած միջոցառումները պիտի ընե խաղաղության և հառաջդիմության կյանք մը ապահովելու համար անոր»:

1917 դեկտեմբեր 21-ին Պ. Լոյտ Ճորժ կհայտարարեր բրիտանական խորհրդարանին մեջ.

«Հայաստանը երբեք պետք չէ վերստին

դրվի թուրքերու աղետալի տիրապետության տակ»:

Ֆրանսայի վարչապետ Պ. Ժ. Քլեմանսոն կհայտարարեր 1918 հուլիս 14-ին.

«Նախահարձակումներու ամենեն անարդարին զոհը դարձող Ֆրանսան իր պահանջներուն մեջ արձանագրած է հարստահարված ազգերու ազատագրությունը. «...Նորախ եմ հաստատելու թե ֆրանսական Հանրապետության, ինչպես և Միացյալ Թագավորության կառավարությունը, չեն դադրած հայ ազգը զառել այն ժողովրդներուն կարգին, որոնց ճակատագիրը դաշնակիցները կհուսան կարգադրել համաձայն մարդկայնության և արդարության գերազույն օրենքներուն»:

Մեծն Բրիտանիո Արտաքին Գործերու պետական ենթաքարտուղար՝ Լորտ Ռուպրոտ Սենիլ 1918 նոյեմբեր 18-ին Համայնքներու Տաճ մեջ կհայտարարեր.

«Ինչ կվերաբերի մեզի, ու ես կկարծեմ թե այս հարցին մեջ կրնամ խոսիլ կառավարության անունով, խորապես հուսախառ պիտի ըլլամ, եթե թուրք կառավարութենեն շուրջ մը կամ հյուկ մը իսկ ձգվեր Հայաստանի մեջ»:

Խոտիլո վարչապետը՝ Պ. Օրլանտո 1919 նոյեմբեր 26-ին կհայտարարեր.

«Ըսեք հայեցուն թե կյուրացնեմ իրենց դատը: Պիտի պահեմ իմ այս հանձնառություն»:

Պ. Պ. Միլլերան, Ռեյմոն Պուանքարի և շատ մը ուրիշ պետական մարդիկ այդ շրջանին նմանօրինակ հայտարարություններ ըրին:

Այսպես ուրեմն, մոռցված են այս բոլորը:

Այսու և կամ լավ ևս, մարդիկ կուզեն մոռնալ:

Տարօրինակ է հաստատել թե ֆրանսական որոշ թերթեր, որոնք ինքինքնին սուցիալիստ և դեմոկրատ կկոչեն, արձագանքը կըլլան թուրք Փաշնականներուն, անոնց, որոնք կիսեղաթյուրեն պատմությունը և կփորձեն խեղել արդարության այս կոչը, որ այնքան հստակորեն կբարձրանա այս հողին ընդերքեն, հող մը, որ ընդարձակ գերեզմանոց մըն է անծանօթ հերոսներու և օսմանյան բարբարոսության մարտիրոսներու:

(«Ընդունուրդի ձայն» մարտ 5, 6, 7, 8 1946 թ. Պեյրութ)

## ԿԱՐՍՆ ՈՒ ԱՐՏԱՀԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿՈՄԱՏԿԱՆԻՆ

Գրանցում կատարվել է 1946 թ. մարտ 20-ի թվին մեջ խմբագիր Մ. Մանուկյան պատասխանելով՝ աշակողման և աշական դաշնակցին, որը մեզ ուղարկում է ծ միջին քենդալ ցորեն:

Երեկով «Ֆիկարո»-ի մեջ պ. Ֆրանսուա Փոնսեն, Բերլինի նախակին դեսպանը Ֆրանսուայի, սառնորեն շարախոսում է մեր Սովորական դաշնակցին, որը մեզ ուղարկում է ծ միջին քենդալ ցորեն:

ՍՍՌԴ-ին ամբաստանելուց հետո, որ իր թե ուղում է իր իշխանության տակ առնել Իրանը, ըմբուսացնել քյուրութերին, ոսնի ուժով բոլքակացնել ամբողջ աշխարհը և Սպանիան, պ. Ֆրանսուա Փոնսեն իրու գլուխոր նյութ ուղարկան ախորժական առարժական առաջարկում է մեծ մասշտաբով մի ծրագրի օգտագործումը Միջերկրականի նվաճան Հերարեմամբ և... Կարս ու Արտաշան նահանգների կցումով:

Իրապես Կարս ու Արտաշանի խնդիրը այժմէական է: Խայց այստեղ բնավ գոյություն չունի ՍՍՌԴ-ի տիրապետական ձգումը. Ո, մի. ֆրանսացու գիշում այն միտքը չ. ո ծագի, որ Ալզաս ու Լորնի: Վերաբերմամբ խոսեր տիրապետմից կամ կցումից, փոխանակ ասելու օրինապես վերադարձնելը Մայր Հայրենիքին: Այն ականավոր դիվանագետը, որ եղել է Անտրե Ֆրանսուա Փոնսեն, անշուշտ շպիտի անգիտանա ընավ, որ Կարսի և Արտաշանի նահանգները անմիջական մասն են կազմում Հայաստանի:

### „ԼԵ ԲՐՈԿՐԵ ԷԺԻԲՍԻԵՆ“-Ը ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Եր Բրոկրե էժիբսիեն» — թերթը իր թ. էջին սկիզբը լայնագիր մեկ ու կես սյունյակի վրա զետեղած է երիք Կոթեթրեռ ստորագրությամբ հոդված մը:

Իր հոդվածին մեջ պ. Կոթեթրեռը կհիշե, թե Հայերը քրիստոնեությունը ընդունած էն Դ-րդ դարուն, թե Ե-րդ դարուն երուսաղեմի մեջ շինած են եկեղեցի մը այն մինույն վայրին վրա: Ուր այժմ կկանգնի Ս. Հակոբա իրենց վանքը, որ նույն ատեն գլխատման և թաղման վայրն է Ս. Հակոբ առաքելին: Եկեղեցիին հյուսիս-արևելյան անկյան մեջ կառնվին նաև երեք վեմեր, շերված Մինայի լեռն, Բապոր լեռն և Հորդանանու այն ակեն, ուրկե անցած են իսրայելացիք: Տաճարին մեջ կտոնվի նաև Համպարե մականը Հայոց Հեթում թագավորին:

1914-ին Թուրք—Ռուսական սահմանը պարփակում էր Կարսն ու Արտաշանը ուղարկան հողամասում: Բայց շատ ավելի նվազ պիտի անդրագառնալ այդ իրադարձություններին և ուշադրության պիտի առնել երկրի ազգագրական վիճակը:

Հայ ժողովուրդը ամենավաղեմի ժամանակներից սկսած նշանավոր էր իր ըմբուտությամբ և դիմադրությամբ ընդդեմ ճնշման: Թրքահայաստան բազմիցս անգամներ ըմբուտացավ օսմանյան լուծի դեմ, որի հետևանոք սարսափի և ապապայնացման վայրագ մի քաղաքականությունն հետապնդվեց թուրք ղեկավարների կողմից (19-րդ դարի վերջին տեղի ունեցած շարդերը):

Այսօր, երբ գոյություն ունի ՍՍՌԴ-ի կազմում Հայաստանի մի ազատ հանրապետություն (1.300.000 բնակչությամբ) թուրքին 500.000 հայերը, որոնք վերապրել են տարագրումներին ու շարդերին, պահանջում են իրենց համախմբումը Հայաստանյան Հայրենիքում:

Ահա թե ճշգրտորեն ինչպես է դրվագ Կարսի և Արտաշանի խնդիրը:

(«Ժողովուրդի ձայն» ապրիլ 11 1946 թ.)

Հոդվածագիրը ապա կհիշե, թե Հայերը կըսեն, թե իրենք կսերվեն նոյան թոռնորդի Հայերն, որուն հիմնած հարստությունը տեսեց 1800 տարի և իր ժողովրդին ապած երկիրն ալ կոչվեցավ Հայաստան: Հայտելի ետք թե Հակառակ բազմաթիվ ուսումնասիրություններու, Հայ ազգին ծագումը դեռ բոլորովին չէ լուսաբանված, Հավանական կնկատե, որ վերածնունդովը այս ժողովրդին, որ Սովետ Հայաստանի մեջ այժմ շուրջ երկու միլիոն հաշուրի ու մանավանդ հիմնվելով երեանի համալսարանին, որուն մասին կըսի, պ. Բ. Բրիսթլեյ վերջերս Հիշատակություններ ըրած է իր Ռուսիո մեջ կատարած ճամբորդության մասին գրած նկարագրականներուն մեջ, ավելի մանրամասն տեղեկություններ կարելի ըլլա ձեռք բերել այս հետաքրքրական հարցին շուրջ:

Հայկե սերած ըլլալու պարագան, կըսի, դեմ աշխարհաղուականորեն նեցուկ կդտնի, նկատելով, որ ավետարանին հիշած Արարատ լեսր, ուր հանգչած է նոյան տապանը շրջնեղեղեն վերջ, կդտնի կեդրոնը այն հողամասին, ուր ապրած են և կշարունակեն ապրիլ հայերը:

Հոդվածագիրը հետո կհիշե եզմիածինը, իբր նստատեղի Հայոց ընդհանրական կաթողիկոսության, ուրկե Դևորք Զ կաթողիկոսը վերջնը կոչ մը ուղղեց Ստալինի, Թրումանի և Աթլիի, Սովետ Հայաստանին կցուիլը պահանջելով Կարսի, Արտահանի և Արդվինի, որը ամիսներ առաջ պահանջված էր արդեն արտասահմանյան հայ խմբակցություններու կողմե:

Հետո կխոսի Պաղեստինի հայության մասին, տասը հազար հաշվելով անոնց թիվը՝ որուն հինգ հազարը երուսաղեմի մեջ, հիշելով երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Կյուրեղ արք. Խորակելանը, անոր ընտրությունն ու գահակալության շրեղ հանդեսին նկարագությունը: Ի վերջո

կխոսի համայն աշխարհի հայերու գեղարվեստական տաղանդին մասին: Եթե քաղած տեղեկություններս ճիշտ են, կըսի, Բիթուֆսները հայկական ծագումնե են: Հիշենք նույնպես Ռուբեն Մամուչյանը և Ռուբեն Սարդյանը: Մյուս կողմե հայ ժողովրդի գժրախտ պատմությունը ներշնչած է մեծ դրագետ Ֆրանձ Դերֆելը գրելու իր «Մուսա Տաղի 40 օրերը», որ ատեն մը Մերբո Կոլտուինը ֆիլմի պիտի. վերածեր և որ Թուրքիո պահանջըով հետաձգվեցավ, բայց հիմա որ կրկին կխոսվի հայերու մասին, Մեթր ընկերությունը կիսորհի կրկին ձեռնարկել ֆիլմին պատրաստության, մանավանդ Վերֆելը «Պերճարտեթի երգ»-ին գտած համաշխարհային հաջողությունը նկատի ունենալով: Ու կվերջացնե հիշատակելով Երուսաղեմի մեջ սարքված մեկ հանդեսն ի հիշատակ ողբացյալ մեծ գրագետին, որ ամնան պերճորեն երգեց հերոսական դիմադրությունը հայ ժողովուրդին:

(«Ա.ՐԱ.ՔՍ» հունվար 26 1946 թ.)

## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԵՐԵՆ

Կլսենք թե մոտ օրեն հրապարակ կելլե կարեոր հրատարակություն մը ֆրանսերեն լեզվով, նվիրված. Հայոց պատմության: Այս գիրքը պատրաստած է ծանոթ պատմագետ Պ. Ռընե Կրուսե, որ հայտնի է արդեն իր Խաչակիրներու պատմության բազմաշխատ գործով: Այս գործին մեջ ան մեծ համա-

կրանքով կխոսի հայերու կատարած դերին մասին:

Պ. Ռընե Կրուսեի Հայոց պատմությունը պիտի բաղկանա մոտ հազար էջե, երկու հատոր, և որ պատրաստված է գիտական հիմերու վրա, պատմական բոլոր աղբյուրներու արձանագրությամբ:

(«Արև» թիվ 8127)



# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐՏԱՇԱՏԻ ՇՐՋԱՆԻ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ԵՎ ԿՈԼԽՈԶՆԻԿՈՒՀԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

ԸՆԿԻՐՆԵՐ:

ատերազմի ահեղ օրերին, երբ  
մեր Հայրենիքի պիտին կախ-  
վեց մահացու վտանգ և հերո-  
սական սովետական ժողովուրդի իր հանճա-  
րեղ առաջնորդ և զորավար մեծ Ստալինի ղե-  
կավարությամբ հաղթական պատերազմ էր  
մղում գերմանա-ֆաշիստական զավթիչների  
դեմ, ամբողջ աշխարհում ցրված արտասահ-  
մանյան հայերը նույնպես պայքարի ելան  
մեր ընդհանուր թշնամու դեմ:

Օտար երկնքի տակ ծանր ու անու-  
րախ կյանքում նրանց ողմուրում էր այն գի-  
տակցությունը, որ կա Սովետական մեծ  
Միությունը, որտեղ ծավկում է մեր հարա-  
զատ երկիրը՝ Սովետական Հայաստանը:

Պատերազմի հենց առաջին օրվանից ար-  
տասահմանյան հայերը պայքարի ելան ար-  
յունարրու ֆաշիզմի վեմ: Հազարավոր հայեր  
մտան մեր դաշնակիցների բանակներն ու  
պարտիզանական ջոկատները և զենքը ձեռք-  
ներին մարտնչում էին ատելի թշնամու դեմ:

Նրանք կազմակերպեցին առաջադիմական  
ընկերություններ և միուցներ հավաքեցին  
«Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն  
կառուցելու համար, ստեղծեցին գեներալ  
Բաղրամյանի անվան տանկային շարասյան  
հատուկ փոնդ:

Եկավ խաղաղությունը: Սովետական ժո-  
ղովուրդը իր մեծ առաջնորդ և հանճարեղ  
զորավար ընկեր Ստալինի զեկավարությամբ  
հաղթականորեն ալարտելով Հայրենական  
մեծ պտերազմը, անցավ խաղաղ ստեղծա-  
րար աշխատանքի:

Կերպերս ալարտված ՍՍՌՄ Գերագույն

Սովետի սեսիան հաստատեց ՍՍՌՄ ժողո-  
վրդական տնտեսության վերականգնման և  
զարգացման վիթխարի պլանը՝ ստալինյան  
4-րդ հնգամյակի պլանը:

Հնգամյանոր պլանի կենսագործմամբ ոչ  
միայն վերականգնվում է պատերազմի տա-  
րիներին զերմանական զավթիչների կողմից  
ավերված ժողովուրդական տնտեսությունը, այլ  
և զգալիորեն կերպազանցվի արտադրության  
նախապատերազմյան մակարդակը, դրանով  
իսկ էլ ավելի կրաքրանա ՍՍՌՄ ժողո-  
վուրդների բարեկեցությունը:

Ինչպես պատերազմի տարիներին, այնպես  
և այժմ օտար երկրներում ապրող մեր հայ  
և լըմայրների ու քույրերի հայացքն ուղղված  
է դեպի իրենց հայրենիքը՝ Սովետական Հա-  
յաստանը, Սովետական մեծ Միությունը,  
որտեղ միայն նրանք կարող են փրկություն  
գտնել բազմամյա թափառումներից, որտեղ  
միայն նրանց համար կարող է ապահովել  
խաղաղ ստեղծագործ աշխատանք և բերկ-  
րալի կյանք:

Հենց այդ պատճառով էլ արտասահման-  
յան հայերը այժմ՝ աշխարհի բոլոր ծալիե-  
րից դիմել են Սովետական Կառավարու-  
թյանը, խնդրելով թույլ տալ իրենց վերա-  
դառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան:  
Մեր հարազատ Սովետական Կառավարու-  
թյունը, մեր իմաստուն առաջնորդ ընկեր  
Ստալինը բավարարեցին մեր արտասահման-  
յան եղբայրների ու քույրերի խնդիրքը:

ՍՍՌՄ Միության ժողովուրդական հատուկ  
որշուրում ընդունեց, որով թույլատրեց ար-  
տասահմանյան հայերին արտասահմանից  
վերադառնալ Սովետական Հայաստան:

Այդ որոշումը հանդիսացավ բոլշևիկյան պարտիայի, սովետական կառավարության և անձամբ ընկեր Ստալինի հոգատարության նոր արտահայտությունը հայ ժողովրդի նկատմամբ:

Այդ պատճական որոշումը ընդունվել հսկայական ոգկորությամբ և երախտագիտությամբ ինչպես Սովետական Հայաստանի աշխատավորների, այնպես և արտասահմանում ապրող հայերի կողմից:

Սովետական կառավարությունը խոչոր միջոցներ է բաց թողել հայրենիք վերադարձող հայերին տեղափորելու համար:

Մենք՝ Արտաշատի շրջանի աշխատավորներս, որոշեցինք սովետական կառավարության միջոցառումներին միացնել մեր շանգիքը արտասահմանից վերադարձող մեր ելքայլների ու քույրերի ընդունելությունը և տեղափորումը հաջողությամբ կազմակերպելու համար:

Մենք որոշել ենք ստեղծել արտասահմանից վերադարձող հայերի տեղափորմանը օգնելու ֆոնդ, այդ նպատակով միանվագ տալով բանվորների ու ծառայողների 4—5 օրվա աշխատավարձը և յուրաքանչյուր աշխատունակ կոլխոզնիկի խնայողությունից որոշ դրամար:

Դիմումն ստորագրել են՝ Ն. Դվին գյուղի «Շինարար» կոլխոզի նախագահ՝ ԽԱԶԱՏՈՒՐ Ա.ԶԱՐՅԱՆԻ, Գետաշեն գյուղի կոլխոզի նախագահ՝ ԱՐԵՎԱԿ ՇԱՀԳԵԼԻԴՅԱՆԻ, Վ. Արտաշատ գյուղի Սվերդլովի անվան կոլխոզի կոլխոզնիկունիքի՝ ՍԱԹԵՆԻԿ ԲԱՂԴՈՅՅԱՆԻ, Դարդալու գյուղի Փարիզյան կոմունայի անվան կոլխոզի կոլխոզնիկունիքի՝ ՊԱՅՍԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, Արեշատ գյուղի Միկոյանի անվան կոլխոզի նախագահ՝ ԳԱՐԵԳԻՆ ԳԱԼԱՍՅԱՆԻ, Ազատավան գյուղի Ստալինի անվան կոլխոզի կոլխոզնիկ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱԽԵՎԵՐԴՅԱՆԻ, Հայաստանի Կ(բ)Պ Արտաշատի շրջկոմի քարտուղար՝ ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ՝ ԴԱՆԻԵԼ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻ, Կառավարական ուսուցչությունին համար:

Մեր որոշումը իրադութելու համար մենք արդեն հավաքել ենք ավելի քան 1 միլիոն ռուբլի, շրջանի 44 գյուղերում և շրջանային կենտրոնում առանձնացրել ենք 569 սենյակ, վերադարձող հայերին տեղափորելու համար, սկսել ենք 186 նոր բնակարանների շինարարությունը:

Մենք՝ արտաշատցիներս կոչ ենք անում մեր ուսապուրլիկայի բոլոր աշխատավորներին, բանվորներին, ծառայողներին, կոլխոզնիկներին, ինտելիգենցիային, հետևել մեր օրինակին, իրենց խնայողություններից առանձնացնել միջոցներ և պատրաստել բնակարաններ՝ հայրենիք վերադարձող հայերին օգնելու և տեղափորելու համար:

Մենք հավատացած ենք, որ մեր ուսապուրլիկայի ոչ մի աշխատավոր հեռու չի մնա այդ հայրենասիրական մեծ գործից:

Քարի գալուստ, մեր հարազատներ:

Կեցցե՞ մեր մեծ հայրենիքը:

Կեցցե՞ մեր փառապանծ սովետական կառավարությունը:

Կեցցե՞ լենինի-Ստալինի մեծ պարտիան:

Թող երկար ու երկար տարիներ ապրել մեր բոլոր հաղթանակների ստեղծող, սովետական ժողովուրդների հարազատ հայր, մեր իմաստուն առաջնորդ մեծ Ստալինը:

Կեցցե՞ կոլխոզնիկունիքի կոլխոզի նախագահ՝

Թող երկար ու երկար տարիներ ապրել մեր բոլոր հաղթանակների ստեղծող, սովետական ժողովուրդների հարազատ հայր, մեր իմաստուն առաջնորդ մեծ Ստալինը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԶԵՐՄ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՎ ԲՈՒՌՆ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹՅԱՄԲ Է ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ԱՐՏԱՇԱՏՑՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻՆ

Երեկ Երևանի գործարաններում ու ֆաբրիկաներում, գիտական և ուսումնական հաստատություններում, հիմնարկություններում ու ձեռնարկություններում, ինչպես նաև ուսապուրլիկայի շրջկենտրոններում ու գյուղերում տեղի ունեցան աշխատավորների բազմամարդ ժողովներ, որոնք քննության առան Արտաշատի շրջանի կոլխոզնիկների ու կոլխոզնիկունիքների դիմումը՝ արտասահմանից վերադարձող հայերի տեղա-

վորմանը օգնելու ֆոնդ ստեղծելու մասին:

Զերմունն պաշտպանելով արտաշատցիների նախաձեռնությունը, ուսապուրլիկայի բանվորներն ու կոլխոզնիկները, գյուղերան և արվեստի աշխատաղները, սովետական ծառայողները իրենց խնայողություններից հատկացուներ են կատարում արտասահմանից վերադարձող հայերի տեղափորմանը օգնելու ֆոնդ ստեղծելու համար:

### ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի պրոֆեսորա-դասախուական կազմը և ուսանողությունը հայրենական բուռն խանդավառությամբ ընդունեցին Արտաշատի շրջանի կոլյոզնիկների և կոլյոզնիկութիւնների գիմումը:

Համալսարանի սեկտոր ակադեմիկոս ընկ. Հ. Բուռնիաթյանը պրոֆեսոր-դասախուակների և ուսանողության ժողովում հանդիս գալով ասաց.

— Արտասահմանյան հայերի ներգաղթը կազմակերպելու մասին սովետական կառավարության պատմական որոշումը արտահայտում է արտասահմանի հարցուք հազարավոր հայ աշխատավորության և ամրող հայ ժողովրդի նվիրական իղձը: Մեր հայ եղբայրները և քույրերը ցանկանում են մեզ հետ միասին ապրել իրենց հայրենիքում՝ Սովետական Հայաստանում: Հայրենական պատերազմի տարիներին և այժմ դեպի Սովետական Միությունն ունեցած հայրենադարձության իրենց բուռն տենչանքով՝ արտասահմանի հայերը ցույց տվեցին, որ նրանք իրենց բանար կապել են միայն և միայն Սովետական Միության հետ:

Մենք պետք է ողջունենք արտաշատցիների հիանալի նախաձեռնությունը և շնուրացները՝ մեր միջոցները՝ մեր արյունակիցների ներգաղթը հաջող կազմակերպելու համար:

Այսուհետև ելույթներ ունեցան պրոֆ. Ա. Հովհաննիսյանը, Հայրենական պատերազմի մասնակիցներ՝ ասպիրանտ Գ. Թումանյանը, ուսանողներ Ա. Մարտիրոսյանը, Պ. Ղազարյանը և ուղիղները:

Ժողովի մասնակիցները միաձայն որոշեցին իրենց հինգ օրվա աշխատավարձը տրամադրել ներգաղթող հայերի տեղավորմանը ռանելու ֆոնդ ստեղծելու համար:

\*\*\*

Կերովի անվան գործարանում արտաշատցիների գիմումի քննությանը նվիրված ժողովները վերածվեցին սովետական կառավարության և հարազատ Ստալինի նկատմամբ անհուն սիրո և երախտագիտության գույցերի:

Արտաշատցիների առաջարկությունները արժանացան բանվորության և ինժեներատեխնիկական անձնակազմի միահամուռ հավանության:

— Արտաշատցիների գիմումը մեզ հիշեցնում է, — ասում է ընկեր Հ. Տոնոյանը, — որ սովետական կառավարության պատմական որոշումը անշեղորեն կենսագործելու

հայրենիք վերադարձող հայերին կազմուատրաստ դիմավորելու գործում մեծ անելիքներ ունեն Հայաստանի բոլոր աշխատավորները: Մենք պատրաստ ենք մեր համեստ միջոցները միացնելու կառավարության հակացական հատկացումներին և գրաբաց ընդունելու մեր եղբայրներին ու քույրերին: Ժողովրդներում ելույթներ ունեցան նաև գործարանի անվանի մարդիկի: Նրանք բոլորն էլ ողջունելով արտաշատցիների հայրենական նախաձեռնության կանուր նշանակությունը, առաջարկում էին հինգ օրվա աշխատավարձը հատկացնել արտասահմանից վերադարձը հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդ ստեղծելու համար:

Կերովցիները միաձայն ընդունում են արդ առաջարկը: Մի քանի ժամում գործարանի բանվոր-ծառայողները այդ նպատակի համար հատկացրին 150 հազար ռուբլի:

\*\*\*

Աշխատանքից անմիջապես հետո Զեմ-Օճառ կոմիտինատի բանվոր-ծառայողները ժողովի հավաքվեցին և քննության առան Արտաշատի բրանի կոլյոզնիկների և կոլյոզնիկութիւնների գիմումը:

Ժողովում ելույթ ունեցան կոմիտինատի գիրեկտոր ընկ. Ա. Խաչատրյանը, առաջավոր բանվորներ Ա. Կարակերյանը, Ե. Կարապետյանը, Հ. Սարոյանը և ուրիշներ:

Նշելով սովետական կառավարության կողմից հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերվող բացառիկ հոգատարությունը, Իրավ ջերմորեն պաշտպանեցին արտաշատցիների նախաձեռնությունը:

Կոմիտինատի բանվոր-ծառայողները միայն որոշեցին իրենց հինգ օրվա աշխատավարձը հատկացնել արտասահմանից վերադարձը հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդին:

\*\*\*

Երևանի Ստալինյան ռայոնի բանվոր-ծառայողների միայն 12 կոլեկտիվներ ֆոնդին հատկացրին 630.000 ռուբլի:

\*\*\*

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի երկրագործության ինստիտուտի կոլեկտիվի ժողովը, որը քննության առավ արտաշատցիների գիմումը, վերածվեց հայրենասիրական ջերմ ցույցի: Ժողովում ելույթ ունեցան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, Երկրագործության ինստիտուտի գիրեկտոր ընկ. Մ. Թումանյանը, ընկ. Պ. Բարաջանյանը, Լ. Կարապետյանը և ուրիշները, որոնք

միահամուռ կերպով պաշտպանեցին արտաշատցիների հայրենասիրական դիմումը:

Ինստիտուտի կողեկտիվի ընդհանուր ժողովը որոշեց արտասահմանից վերադարձող հայերի անեղավորմանն օգնելու փոնդին հատկացնել 4—5 օրվա աշխատավարձ: Մոտ մեկ ժամվակ ընթացքում հատկացումների դումարը հասավ 18 հազար սուբրու:

\*\*\*

Գյուղգործիների գործարանում արտաշատցիների դիմումի կապակցությամբ հրավիրված բազմամարդ ժողովում հայրենասիրական ցերմ ելույթներ ունեցան ինժեներներ: Գ. Դմիտրևը, Բ. Չոլոյանը, փականագործ Ա. Սավէճենկոն, խառատ Ա. Օհանյանը և ուրիշներ: Նրանք բոլորն էլ պաշտպանելով արտաշատցիների նախաձեռնությունը, գործարանի բանվորներին կոչ էին անում ակադիվորեն մասնակցել արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու փոնդի ստեղծմանը:

Ժողովը միաձայն որոշեց այդ նպատակի համար հատկացնել 5 օրվա աշխատավարձ:

\*\*\*

Ալրազաց Կոմիտենատի բանվոր-ծառայողներն իրենց բնդկանուր ժողովում ցերմորեն պաշտպանեցին Արտաշատի շրջանի կոլխոզների դիմումը արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու փոնդ ստեղծելու մասին: Ժողովի մասնակիցները ուղղեցին այդ նպատակի համար հատկացնել իրենց 5 օրվա աշխատավարձը: Հենունույն օրը բանվոր-ծառայողները հատկացրին 25.600 ռուբլի:

\*\*\*

Միախոտի գործարանի բանվոր-ծառայողները ոգենորությամբ արձագանքեցին արտաշատցիների հայրենասիրական կոշին: Ժողովում ելույթ ունեցող ընկերները խոստանում էին, որ իրենք, բացի իրենց խնայողություններից հատկացումներ կատարելու, ամեն կերպ կօգնեն արտասահմանից վերադարձող հայերի տեղավորումը հաջող կազմակերպելու գործին:

Ժողովը միաձայն որոշեց այդ փոնդի օգտիք հատկացնել 5 օրվա աշխատավարձ:

\*\*\*

Դարի առաջին գործարանի բանվոր-ծառայողների ժողովում, որը նվիրված էր արտաշատցիների դիմումի քննությանը, 70-ամյացանիոր Թ. Ստեփանյանը ասաց:

— Ես նույնպես երկար տարիներ եղել եմ օտարության մեջ, զգացել եմ պանդիստու-

թյան դառնությունը, տոշորվել հայրենիք վերադառնալու ցանկությամբ: Ինձ հայրենիք վերադարձեց սովորական կառավարությունը: Եվ ես այժմ վայելում եմ իս հայրենիքի բաղցրությունները: Մենք ամենքն կանքներ նրանց ընդունումն ու տեղափորումը լավ կազմակերպելու համար: Բարի դարւուս մեր հարազատներին:

Գործարանի բանվոր-ծառայողների կուլկանիվ ընդհանուր ժողովը միաձայն որոշեց արտասահմանից վերադարձող հայերի անեղավորմանը օգնելու փոնդին հատկացնել 5 օրվա աշխատավարձ: Մի քանի ժամվար ընթացքում այդ գործարը հասավ 20 հազար սուբրու:

\*\*\*

Արտաշատցիների կոչն ստանալուն պետ, Շեմարատա տրեստի և գործարանի բանվորներն ու ծառայողները հավաքվեցին միտինգի:

Արտաշատցիների նախաձեռնությունը մեծ խանդավառություն առաջ բերեց աշխատավորների մեջ: Նրանք իրենց ելույթներում ողջունում էին այդ նախաձեռնությունը և ըրտանց իրենց լուման էին մուծում այդ մեծ գործի օգտին:

Մեծ ոգենորությամբ կոլեկտիվը որոշեց 5 ըրվա աշխատավարձը հատկացնել հայրենիքի վերադարձող հայերի օգտին:

\*\*\*

Մուլիսի գործարանի բանվոր-ծառայողները բնդկան առան արտաշատցիների դիմումը: Գործարանի կոլեկտիվի բազմամարդ ժողովում ելույթ ունեցողները կոչ էին անում ամեն կերպ օգնել մեր հարազատների տեղավորումը հաջող կազմակերպելու գործին: Ժողովը որոշեց այդ նպատակի համար հատկացնել 5 օրվա աշխատավարձը:

\*\*\*

Ալլումինշինի կառուցողները մեծ սիրով ընդունեցին արտաշատցիների: Հայրենասիրական դիմումը: Ժողովում ելույթ ունեցող ընկերները միահամուռ կերպով պատրաստակամություն էին հայտնում ամեն կերպ օժանդակել արտասահմանից վերադարձող հայերին հաջող տեղավորելու գործին:

Ժողովը որոշեց այդ նպատակին հատկացնել 5 օրվա աշխատավարձը:

\*\*\*

Գ. Սունդուկյանի անվան Պետական Բատրունի արվեստագետներն ու բանվոր-ծառայողներն իրենց ժողովում խանդավառությամբ քննության առան արտաշատցիների դիմումը:

ժողովում հլույթ ունեցողները պաշտպանելով արտաշատցիների նախաձեռնությունը, կոչ արեցին կոլեկտիվի անդամներին ոչինչ չխնայել արտասահմանից վերադարձող մեր հարազատների տեղավորման գործին օգնելու համար: Դերասան Ա. Կոթիկյանը առաջարկեց մեկ ներկայացում տալ և ստացված գումարը ամբողջովին հատկացնել այդ նպատակին: Կոլեկտիվը որոշեց նաև վերադարձող հայերի տեղավորման փոնդի օգտին հատկացնել 5 օրվա աշխատավարձ:

\*\*\*

Հացի տրեստի բանվոր-ծառայողների բազմամարդ ժողովում քննության առնվեց Հայաստանի աշխատավորության ուղղված արտաշատցիների դիմումը: Ելույթներից հետո տրեստի կոլեկտիվը որոշում ընդունեց այդ նպատակի համար հատկացնել 5 օրվա աշխատավարձ:

\*\*\*

Միհամուռ կերպով հավանություն տալով արտաշատցիների դիմումին, երեսնի կոնսերվի գործարանի բանվոր-ծառայողներն իրենց ժողովում որոշում ընդունեցին արտասահմանից վերադարձող հայերի տեղավորման օգնելու փոնդին հատկացնել իրենց 5 օրվա աշխատավարձը:

### ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Արտաշատցիների հայրենասիրական դիմումը զերմ արձագանք գտավ Լենինականի գործարաններում ու ֆաբրիկաներում, երկաթուղարյին հանգույցներում և հիմնարկ-ծեմարկություններում:

Երկաթուղարյին հանգույցում տեղի ունեցավ բազմամարդ ժողով, որտեղ քննության առնվեց արտաշատցիների դիմումը: Երկաթուղարյինները հայրենիք վերադարձող արտասահմանյան հայերին ընդունելու և տեղավորելու համար հատկացրին իրենց 5 օրվա աշխատավարձը, որը կազմեց 205 հազար սուբլի:

Բազմամարդ ժողովներ տեղի ունեցան նաև Տերստի կոմիտինատի գործարաններում: Արձագանքելով արտաշատցիների դիմումին, կոմիտինատի բանվոր-ծառայողները և ինժեներա-տեխնիկական աշխատողները հատկացրին իրենց 4—5 օրվա աշխատավարձը, որը կազմեց 191 հազար սուբլի:

Մասի կոմիտինատի բանվոր-ծառայողները հատկացրին 22 հազար սուբլի, Կարի գործարանի կոլեկտիվը՝ 23 հազար սուբլի, կոնգէսի աշխատավորները՝ 8 հազար սուբլի:

Լենինականի աշխատավորները հենց առա-

ժին օրը այդ նպատակին հատկացրին մեկ միլիոն 22 հազար սուբլի:

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆՈՒՄ

Ստեփանավանի շրջանի աշխատավորություն ակտիվորեն արձագանքեց արտաշատցիների դիմումին: Շրջկենտրոնի հիմնարկ-ծեմարկություններում և կոլխոզներում տեղի ունեցան աշխատավորների մասայական ժողովներ, որոնք վերածվեցին հայրենասիրական բուռն ցույցերի:

Արտաշատցիների դիմումի ընթության առաջին օրը քաղաքի բանվոր-ծառայողները հատկացրին 150 հազար սուբլի, կոլխոզային աշխատավորությունը՝ կես միլիոն սուբլի:

### ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆՈՒՄ

Շրջանի աշխատավորները շերմորեն պաշտպանեցին արտաշատցիների դիմումը: Մինչև ապրիլի 7-ը շրջանի աշխատավորները այդ նպատակի համար հատկացրել են 850 հազար սուբլի:

### ՄԻԿՈՅԱՆՈՒՄ

Շրջկենտրոնում և բոլոր գյուղերում տեղի ունեցան աշխատավորների ժողովներ, որոնք քննության առան արտաշատցիների դիմումը: Իրենց ժողովներում բանվոր-ծառայողները որոշեցին արդասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու փոնդին հատկացնել իրենց 5 օրվա աշխատավարձը: Հենց միայն ապրիլի 5-ին շրջանի աշխատավորությունն այդ նպատակի համար հատկացրեց 150 հազար սուբլի:

### ԿՈՏԱՅՔՈՒՄ

Շրջանի բանվոր-ծառայողները և կոլխոզները իրենց ժողովներում միահամուռ կերպով պաշտպանեցին արտաշատցիների դիմումը: Ձենց առաջին օրը շրջանի աշխատավորները այդ նպատակի համար հատկացրին 350 հազար սուբլի: Շրջանի մի շարք գյուղերում և շրջկենտրոնում տասնյակ բնակարաններ են հատկացված արտասահմանից վերադարձող հայերին տեղավորելու համար: Ծրջանի աշխատավորները իրենց ժողովներում խոսանում էին ամեն բան անել արտասահմանից վերադարձող հարազատներին լավ ընդունելու և նրանց կարիքները հոգալու համար:

### ԳԻՒԻԶԱՆՈՒՄ

Արտաշատցիների կոչը զերմ՝ արձագանք դարձավ Դիլիջանի աշխատավորության մեջ: Քաղաքի հիմնարկ-ծեմարկություններում

կայացած ժողովներում աշխատավորները միահամուռ կերպով որոշեցին իրենց խնայողություններից հատկացումներ կատարել հայրենիք վերադարձող հայերի տեղավորման օգնելու ֆոնդին:

Տեղարկվոմքինստի կոլեկտիվը որոշեց հատկացնել 5 օրվա աշխատավարձ և արադ կերպով ավարտել վերադարձող հայերի համար կառուցվող 10 բնակարանների շինարարությունը:

«Նոր կյանք» փայտամշակման արտելի կոլեկտիվը որոշեց հատկացնել 6 օրվա աշխատավարձ և արտասահմանից վերադարձող ընտանիքների համար պահնից դուրս արտադրել սեղաններ, աթոռներ ու մահճականներ:

### ԲԱՍԱՐԳԵԶԱՐՈՒՄ

Ապրիլի 5-ին և 6-ին շրջանի հիմնարկ մեռարկություններում և կոլխոզներում տեսլի ունեցան աշխատավորների ժողովներ, որտեղ քննության առնվից արտաշատցինների դիմումը:

Զերմորեն պաշտպանելով արտաշատցինների նախաձեռնությունը, շրջկենտրոնի բանվոր-ծառայողները արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդին հատկացրին իրենց 5—6 օրվա աշխատավարձը:

ՄՏ կայանի աշխատույներն այդ նպատակի համար հատկացրին 45 հազար ոուբլի, տորֆագործները՝ 20 հազար ոուբլի, Մեծ Մազրայի կոլխոզնիկները՝ 50 հազար ոուբլի և այլն:

Միայն ապրիլի 5-ին հատկացումների գումարը հասավ 300 հազար ոուբլու։ Շրջանի գյուղերում աշխատավորների ժողովները շարունակվում են։

### ՆՈՐ ԲԱՅԱԶԵՑՈՒՄ

Ապրիլի 5-ին շրջանի աշխատավորունը լարված ուշադրությամբ լսեց արտաշատցինների դիմումի հաղորդումը ուղիղորդված նույն օրը շրջկենտրոնի հիմնարկություններում և գյուղերում սեղի ունեցան աշխատավորների ժողովներ։ Զերմորեն պաշտպանները արտաշատցինների նախաձեռնությունը, շրջանի բանվոր-ծառայողներն ու կոլխոզնիկները արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդին հատկացրեց 700 հազար ոուբլի։

Հատկացրին 300 հազար ոուբլի գումար և նրանի բանվոր-ծառայողներն իրենց ժողովներում որոշեցին այդ նպատակի համար հատկացնել իրենց 5 օրվա աշխատավարձը։

### ԷջՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 5-ին շրջկենտրոնի բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում տեղի ունեցան բանվոր-ծառայողների բազմամարդ ժողովներ, որտեղ քննության առնվից Արտաշատի շրջանի կոլխոզնիկների դիմումը։

Մինչև ժամը 12-ը միայն շրջկենտրոնի բանվոր-ծառայողները այդ նպատակի համար հատկացրին 185 հազար ոուբլի։

Աշխատավորների բազմամարդ ժողովներ տեղի ունեցան նաև շրջանի սովորողներում ու կոլխոզներում։ Միկոյանի անվան սովորողի բանվոր-ծառայողները հատկացրին 10 հազար ոուբլի, Մոլոտովի անվան սովորողի բանվոր-ծառայողները՝ 7 հազար ոուբլի։

Շրջանի գյուղերում աշխատավորների ժողովները շարունակվում են։

### ԱՇՏԱՐԱԿՈՒՄ

Արտաշատցինների դիմումը շերմ արձագանք գտավ շրջանի աշխատավորության մեջ։ Կոլխոզներում և հիմնարկ-ձեռնարկություններում հրավերված ժողովներում աշխատավորները ողջունում էին արտաշատցինների խրախուսելի նախաձեռնությունը։ Միքանի ժամվա ընթացքում շրջանի աշխատավորների կողմից կատարվող հատկացումների գումարը հասավ մոտ մեկ միլիոն ոուբլու։ Շրջանի գյուղերում հատկացումները շարունակվում են։

### ՍԻԾԻԱՆՈՒՄ

Սիսիանի շրջանի կոլխոզնիկները ապրիլի 5-ին իրենց ժողովներում հայրենասիրական շերմ զգացմունքներով քննության առան արտաշատցինների դիմումը։ Միահամուռ կերպով պաշտպանելով արտաշատցինների նախաձեռնությունը, շրջանի աշխատավորությունը արտասահմանից վերադարձող հայերի տեղավորմանը օգնելու ֆոնդի օգտին հատկացրեց 700 հազար ոուբլի։

Շրջանի գյուղերում արտաշատցինների դիմումի քննությանը նվիրված ժողովները շարունակվում են։

«Ըստ Հայաստան» № 81, 82  
83, 84, 85. 1946 թ.)

**ՀԱՆՐԻՍԱՎՈՐ ՆԻՍ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ  
ԹԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 25-ԱՄՅԱԿԻՆ**

Հայ ժողովրդի ներկայացուցիչները, հավաքվելով Երևանի Սպենդիարովի անվան օպերայի և բալետի թատրոնի հոյակապ կամարների տակ, շատ նշանակալից իրադարձությունների են նշել: Այդպիսի իրադարձություններից մեկը տեղի ունեցավ երեկ՝ ապրիլի 27-ին: Թատրոնի հսկայական դահլիճը՝ բերկրանքով դիմավորեց ռեսպուբլիկայի լավագույն մարդկանց, որոնք հավաքվել էին ժողովրդի կյանքում աշխի ընկնող տարեթիվը, Հայկական ՍՍՌ կուստուրայի անմոռանալի տոնը, Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարա-

բարտուղար ընկ. Բ. Աստվածատրյանը, Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրը ընկ. Գ. Աղբալյանը, Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի ռեկտոր ընկ. Հ. Բոնիթյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ ընկ. Վ. Համբարձումյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ ընկ. ընկ. Ա. Տերտերյանը, Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Երևանի Քաղաքային Սովետի գործկոմի նախագահ ընկ. Լ. Հովսեփյանը, Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի դպրոցական



**Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի շենքը**

նի 25-ամյակը նշելու համար: Թատրոնի դահլիճը լի էր գիտության ու կուստուրայի ականավոր ներկայացուցիչներով, աշխուց ուսանող երիտասարդությամբ, բազմաթիվ ձեռնարկությունների և հիմնարկությունների աշխատավորներով:

Նախագահության սեղանի մոտ են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ ընկ. Ա. Սարգսյանը, Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի պրոպագանդայի գծով քարտուղար ընկ. Զ. Գրիգորյանը, Հայաստանի

բաժնի վարիչ ընկ. Ա. Խրիմլյանը, պրոֆեսորներ Ա. Տեր-Պողոսյանը, Է. Մելիքսեթ-Բեկը, Ա. Հովհաննիսյանը, Վ. Ռշտունին, Մ. Սանթրոսյանը, Գ. Աղաջանյանը, Ն. Հակոբյանը, Ա. Ղարիբյանը, Բաբկի Պետական համալսարանի դելեգացիայի ղեկավար պրոֆեսոր Մաֆիլին, ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչները և ուրիշները:

Նիստը բացվում է հանդիսավոր իրադարձության մեջ, Հայկական ՍՍՌ պետական հիմնի հնագույնների տակ:

Պրոֆեսոր Ռշտունու առաջարկությամբ  
նիստին մասնակցողները երկար չլող ծա-  
փահարություններով ընտրում են պատվա-  
վոր նախագահություն՝ ՀամԿ(բ)Պ Կենտկո-  
մի Քաղըցուրյի կազմը մեծ առաջնորդ,  
Հանձարեղ գորավար ընկեր Ստալինի գր-  
իսավորությամբ, ինչպես նաև Հայաստանի  
Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հա-  
րոբյունյանին:

«Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պե-  
տական Համալսարանը 25 տարում գեկու-  
ցումով հանդես եկավ Համալսարանի ունկ-  
տոր, Հայկական ՍՍՌ Գիտությունների, Ա-  
կադեմիայի իսկական անդամ Հ. Բոնիաթ-  
յանը»:

— Երևանի Պետական Համալսարանը, —  
ասում է նա, — հանդիսանում է յսկետա-  
կան Համարակարգի ծնունդը Հայաստա-  
նում։ Գիտության ու կուտուրայի այդ խո-  
շորագույն օջախը ստեղծվել է սովետական  
իշխանություն Հաստատվելու հենց առաջին  
ամիսներին, երբ դաշնակների տիրապետու-  
թյան օրոք քայլայված երկրում արյան  
հետքերը դեռ չէին շորացել իր հիմնադրո-  
ման ժամանակ Համալսարանն ուներ միայն  
երկու ֆակուլտետ, այժմ դրանց թիվն է 10,  
որոնցից մեկն է նորերս կազմված՝ միշագ-  
առային Հարաբերությունների ֆակուլտետը։  
Իր գոյության ընթացքում Համալսարանը  
բաց է թողել գիտության զանազան ճյուղե-  
րի գծով 3.377 մասնագետներ։ Համալսա-  
րանն ավարտածներից երկուար հանդիսա-  
նում են Հայկական ՍՍՌ Գիտությունների  
Ակադեմիայի իսկական անդամ և շորսը  
թղթակից-անդամ։

Այժմ Համալսարանի առաջ բացվում են  
նոր լայն գիտական հորիզոններ և բեղմնա-  
վոր աշխատանքի հեռանկարներ ի փառ  
մեր հզոր սոցիալիստական հայրենիքի, —  
ավարտում է իր զիկուցուամը ընկ. Բոնիաթ-  
յանը։

Նիստին մասնակցողները ջերմ ծափահա-  
րություններով դիմավորեցին Հայկական  
ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ ընկ.  
Ա. Սարգսյանին, որը Հայկական ՍՍՌ կա-  
ռավարության և Հայաստանի Կոմունիստա-  
կան (բոլշևիկների) Պարտիայի Կենտրոնա-  
կան Կոմիտեի անոնմից ողջունեց հորելյար  
Համալսարանին։

Իր ճառում ընկ. Սարգսյանը բնութագրեց  
25 տարվա ընթացքում Համալսարանի ան-  
դամ ուղին և նրա կոլեկտիվի առաջ ; դոեց  
նոր խնդիրներ, որոնք կապված են ուս-  
պուրիկայում ստալինյան շորորդ հնգամ-  
յակի պլանը իրագործելու հետ։

— Պարտիան և կառավարությունը մեծ

ուշադրություն են նվիրում գիտնականնե-  
րին, անդուզ հոգատարություն են ցուցաբե-  
րում գիտական բազան ընդայնելու, գիտա-  
կան կադրերի աշխատանքի պայմանները  
բարելավելու, նրանց նկության կենցաղա-  
յին մակարդակը բարձրացնելու գործին։  
Արդիսի հոգատարության օրինակներից  
մեկը հանդիսանում է ՍՍՌ Բարձրագույն  
կրթության Մինիստրության ստեղծումը։  
Կասկած չկա, որ գիտության գործինները,  
մասնավորապես երևանի Վ. Մ. Մոլոտովի  
անվան Պետական Համալսարանի աշխա-  
տողները կատարեն այն խնդիրների բարձ-  
րության վրա, որ շորորդ հնգամյակում  
մեր գիտնականների առաջ գնում է մեր Մեծ  
առաջնորդ ընկեր Ստալինը։

Ցայտուն ճամաստաննեց Հայկական  
ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի միջե-  
պեկիդենտ ընկ. Վ. Մ. Սոլոտրովի անձնանից  
հորելյարին հանձնեց Հայկական ՍՍՌ Գի-  
տությունների Ակադեմիայի ուղերձը, իսկ  
ինինիքանի Պետական Համալսարանի ա-  
նոնցից հաջողություն ցանկացավ ի փառ  
հայրենիքի կատարող հետագա բնդմնավոր  
աշխատանքի ասպարեզում։

— Մեր Համալսարանը, — ասում է իր ե-  
լույթում Հայկական ՍՍՌ Լուսավորության  
մինիստր ընկ. Աղբալյանը, — հանդիսա-  
նում է գիտության իսկական տաճար, որով  
պարծենում է ժողովուրդը։ Բոլոր հիմքերը  
կան հույս ունենալու, որ հետագայում ևս  
Համալսարանի կողեկտիվը հնարավոր ամեն  
ինչ կանի՝ ամեն կերպ նպաստելու երկրի  
կուտուրայի բարգավաճմանը և ժողովրդա-  
կան տնտեսության զարգացմանը։

Խոսքը տրվում է Բարգվի Պետական Հա-  
մալսարանի գելեկացիայի ղեկավար պրո-  
ֆեսոր Ռաֆիկին։ Բոլոր ներկա եղողների  
միահամուռ ծափահարությունների տակ նա  
իր շեշտակի, պատկերավոր ճառում հաղոր-  
դում է Աղբալյական Աղբեկչանի գիտնա-  
կանների անունից ջերմ ողջուն Երևանի  
Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական Համա-  
լսարանի պրոֆեսորա-դասախոսական կազ-  
մին և ուսանողական կողեկտիվին ու հանձ-  
նում է Համալսարանական կողեկտիվի ներ-  
կայացուցիչներին նվերներ։

Նիստին մասնակցողները ջերմորեն են  
դիմավորում պրոֆեսոր Մելիքսեթ-Բեկին,  
որը հանդես է գալիս ողջունով թրիլիսիի  
հ. Վ. Ստալինի անվան Համալսարանի  
հանձնարարությամբ։

Այսուհետև ողջունով հանդես են գալիս  
Երևանի Բժշկական ինստիտուտի կողմից  
պրոֆեսոր Գ. Արեգյանը, Մանկավարժական

ինստիտուտի կողմից պրոֆեսոր Ա. Ղարիբյանը, Պոլիտեխնիկական ինստիտուտի կողմից պրոֆեսոր Խաչինսկին, Գյուղատնտեսական ինստիտուտի կողմից պրոֆեսոր Երիցյանը:

Երեսի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի հասցեով նրա 25-ամյակի հապակցությամբ ստացված ողջույնի հեռագրերը հրապարակելու համար խոսք տրվում է պրոֆեսոր Ա. Հովհաննիսյանին: Նա կարում է ՍՍՌՄ Բարձրագույն կրթության մինիստր ընկ. Կաֆտանովի, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ ընկ. Վավիլովի, Մոսկվայի Լոմոնոսովի անվան Լենինի շքանշանակիր Պետական համալսարանի, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, Լենինգրադի Էրմիտաժի, ակադեմիկոսներ Հ. Օրբելիի, Տարլեի, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ և. Կոշտոյանցի հեռագրերը և Հայտնում է, որ ստացված են նաև շատ այլ ողջույններ Սովետական Միության զանազան քաղաքներից, գիտական կազմակերպություններից և առանձին ականավոր գիտնականներից:

Հանդիսավոր նիստին մասնակցողները բուն ծափահարություններով են գիմավորում աշխատավորների մեծ առաջնորդ, ուղարկան ժողովրդի հաղթանակների կազմակերպիչ և ոփենչող ընկեր Ստալինին ողջույնի ուղարկելու առաջարկությունը: Ողջույնի տեքստը հաստատվում է ամբողջ դաշիճի երկարատև, միահամուռ ծափահարություններով:

Այնուհետև ներկա եղողների շերմ ծափահարությունների տակ հրապարակվում է մեծ Ստալինի մերձավորագույն զինակից ընկ. Մոլոտովին ուղղված ողջույնի տեքստը, որի փառապանձ անունը կրում է Հորելյար համալսարանը:

Ժողովը նաև ողջույնի հեռագիր է ընդունում ուղղված ՍՍՌՄ Բարձրագույն կրթության մինիստր ընկ. Կաֆտանովին:

Հանդիսավոր՝ նիստը փակլում է Հայկական ՍՍՌ պետական հիմնի հնչյունների տակ:

Նիստից հետո տեղի ունեցավ մեծ համերգ՝ մայրաքաղաքի արտիստական լավագույն ուժերի մասնակցությամբ:

(224)

## ԼԵԶՎԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՍՊԻ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մատու անվան Լեզվի ինստիտուտում օրերս տեղի ունեցավ ինստիտուտի գիտական խորհրդի նիստը: Խորհրդում ըստվեց ինստիտուտի գիտեկտոր պրոֆ.-դոկտոր Ա. Ղարիբյանի զեկուցումը և լեզվի ինստիտուտի գիտական պրոբլեմները շորորդ հնդամյակումը թեմայի մասին:

Գիտական խորհրդը մշակեց ինստիտուտի գիտական պրոբլեմների հնդամյալինի նախագիծը: Համաձայն այդ նախագիծի, ինստիտուտի առանձին սեկտորները կատարելու են մի շարք գիտական ուսումնասիրություններ: Այսպես օրինակ՝ հայոց լեզվի պատմության սեկտորը պատրաստելու և հրատարակելու է միջին հայերենը և նրա պատմությունը, մոտ քառասուն մամուլ ծավալով աշխատություն, որի նյութերի հավաքումը սկսվելու է այս տարվանից: Գրվելու է հայ-վրացական լեզվական ընդհանրացումներ ուսումնասիրությունը:

Նույն սեկտորի գծով հնդամյակում կատարվելու է գրաբարի լեզվական դպրոցների, Ուրարտական թեսուագիր արձանագրությունների սւսումնասիրությունը և հրատարակումը: Առաջիկայում շարունակ-

վելու է հայ բառավաների ուսումնասիրությունը, այս տարի կատարվելու է Վանի, Ակնի, Սեբաստիայի, Արաբկիրի, Մալաթիայի, Սուշավայի բարբառների ուսումնասիրությունը: Կազմվելու է հայ բառավաների հայությունը և հայերեն, ուսւա-հայությունը:

Մտալինյան շրորորք հնդամյակի ընթացքում մեծ աշխատանք է կատարվելու ինստիտուտում բառարանագիտական սեկտորի գծով: Կազմվելու են երկեղվան բառարաններ հայ—ուսւահայությունը, ուսւահայությունը հայերեն, ուսւահայությունը հայությունը շրորք հատորյակով: Կազմվելու է գրաբարից—ուսւահայությունը բառարան, հատկապես հին հայերենի ուսումնասիրության համար, այն հաշվով, որպեսզի Սովետական Միության եղբայրական ժողովրդների այն գիտնականները, որոնք զբաղվում են հայոց հին գրականության և պատմության հարցերով, օգտվեն բնագրից և ոչ թե ընդուղյա թարգմանություններից: Նույն սեկտորի գծով կազմվելու է նաև վրացերեն—հայերեն, անգլերեն—հայերեն և այլ բառարաններ:

Այս հնդամյակում նախատեսվում է կազմել արդի հայերեն լեզվի դպրոցական բառարան, արդի հայերենի բացատրական և հայ բառարանների մեծ բառարան:

Հեղվի ինստիտուտի ժամանակակից հայերենի սեկտորի գծով նախատեսվում է շարունակել արդի հայերենի ուսումնասիրության աշխատանքները։ Ուսումնասիրվելու է Հովկ. Հովկանիսայանի, Հովկ. Թումանյանի, Վ. Տերյանի, Բաֆփու, Նար-Դոսի և սովորացաց շրջանի գողողներից՝ Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ն. Զարյանի գեղարվեստական ստեղծագործությունների լեզուն։

Այս սեկտորի գծով կազմվելու է Հայոց

լեզվի ընդարձակ քերականությունը, կատարվելու է ե. Սկրյուգերի քերականության հայերեն թարգմանությունը։

Նախատեսվում է հրատարակել ակադեմիկոս Մարի ընտիր եղիկերի երկատորդակը, Անիկին վերաբերող նյութերի ժողովածուն, Մարի հայ մատենագրության պատմությունը։

(«Սովետական Հայաստան» № 116, 1946 թ.)

## ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Տնտեսագիտական սեկտորն այս տարի գիտա-հետազոտական լայն աշխատանք է ծավալում։ Սեկտորը գիտական ըզրագվում է Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության պլանավորման, արտադրական ուժեղության մասնակիման, ժողովրդական տնտեսության պատմության և հայ տնտեսական մտքի զարգացման խնդիրներով։

Հայկական ՍՍՌ տնտեսության պլանավորման ուղղությամբ սեկտորի գիտա-հետազոտական աշխատանքների հիմնական նպատակն է ուսումնասիրել Շևանց-Զանդու-Արաքս էներգետիկ իրորիցացիոն խորշորագույն պրոբլեմը։

Տեսապուրիկայի արտադրական ուժեղությամբ աշխատանքների համար առանձին շրջանների ֆիզիկական և տնտեսական աշխարհագրական կարևոր խնդիրները, ինչպես նաև տնտեսությունը՝ կապված արդյունաբերական և գյուղատնտեսական շոշանների և տրանսպորտային հանգույցների հետ։

Սեկտորը նախատեսել է պատրաստել 1 կարևոր աշխատություններ, որոնց թվում Հայկական ՍՍՌ տնտեսական և ֆիզիկական աշխարհագրության դասագրքերը և այն։ Այդ աշխատանքներին մասնակցում են ոչ միայն սեկտորի ամբողջ գիտական կոլեկտիվը, այլև Հայկական ՍՍՌ Գիտություն-

ների Ակադեմիայի գիտա-հետազոտական խորհրդառությունը։

Ժողովրդական տնտեսության պատմության գծով այս տարվա առաջին կիսամյակում սեկտորն ավարտելու է «Հայկական ՍՍՌ արդյունաբերության զարգացման պատմությունը», «Հայկական ՕՍՌ գյուղատնտեսության զարգացման պատմությունը» և «Շեսպուրլիկայի կոլիսոզները Հայրենական պատերազմի նախօրյակին» աշխատությունները և այնուհետև սկսելու է երկու նոր խոշոր աշխատություն՝ «Կապիտալիզմի զարգացման պատմությունը Հայստանում» և «Հայկական ՍՍՌ կուեկտիվացման պատմությունը»։

Հայ տնտեսական մտքի զարգացման պատմության ուղղությամբ սեկտորը ձեռնարկել է «Հայ տնտեսական միտքը 19-րդ դարի 2-րդ կեսին» աշխատանքը։

Տնտեսական սեկտորի գիտա-հետազուտական այս աշխատանքներին մասնակցում են գալիքի թվով գիտական աշխատանքներ, որոնց թվում պրոֆեսորներ՝ Գ. Քոչարյանը, Ս. Լիսիցյանը, Զ. Թումանյանը, գիտությունների թեկնածուներ և ավագ գիտական աշխատանքներ Ս. Խրիմյանը, Գ. Ալավերդյանը, Ա. Գարամյանը, Ս. Զորաբյանը, Մ. Շահրապյանը, Ստեփանյանը և ուրիշներ։

(«Սովետական Հայաստան» № 80, 1946 թ.)

## ԵՂԻՇԵՒ „ՎԱՐԴԱՆԱՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ“

Պրոֆեսոր — դոկտոր Ե. Տեր-Մինասյանը պատրաստում է 5-րդ դարի հայ նշանավոր պատմիչ Եղիշեի ռէմարդանանց պատմության» գիտական համեմատական բնագիրը։ Այս նպատակով Հայկական ՍՍՌ Մինիստրությունների Սովետին կից Պետական Գեղադրատանը (Մատենադարան) եղած մոտ 20

## ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ

Ճեղագիրը մանրամասն կերպով համեմատվում են, որոնց մեջ պահպանված են Եղիշեի ռէմարդանանց պատմության բնագրերը։ Բացի դրանից՝ այդ ճեղագրերում կան բազմաթիվ ճեղագիրներ ժողովածուներ, որոնց մեջ կան որոշ գլուխներ Եղիշեի պատմությունից։

Այս աշխատությունն ունի այն արժեքը, որ բնագրում եղած որոշ պղճատված տեղեր ու հատվածներ, նույնպես և սխալ բառներ կծառացնեն և մեր բանասրական գիտությունը կունենա նվազական համեմատարար անազարտ բնագիր:

Այժմ հրպարակի վրա եղած հայ պատմիչներ՝ Մ. Խորենացու, Դ. Փարպեցու, Սե-

բնոսի, Հովհան Մամիկոնյանի, Ասողիկի «Հայոց պատմություն» գրքերի գիտական համեմատական բնագրերին ե. Տեր—Մինասյանի այս աշխատության ավելանում է նվազական «Վարդանանց պատմության» գիտական համեմատական բնագիրը:

(«Սովետ. Հայաստան» № 81, 1946 թ.)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահությունը որոշում ընդունեց սթ անդամներին հրավիրել Հայաստանի Սովետական Գրողների Միության երկրորդ համագումարը: Համագումարում կլավեն զեկուցումներ հետեւալ թեմաներով՝ Սովետահայ գրականությունը և նրա հետագա զարգացման խնդիրները, Հայ գրականությունը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում, Սովետահայ գեղարվեստական արձակի զարգացման ուղիները և նրա հեռանկարները, Սովետահայ պոեզիան, Սովետահայ գրամատուրգիայի զարգացման պրոբլեմները, մանկա-պատանեկան գրականության հարցերը, գրական

բննագատության վիճակն ու ինդիրները:

Համագումարում դրվում է նաև զեկուցում ժամանակակից արտասահմանյան հայ գրականության մասին:

Հայաստանի Սովետական Գրողների Միության նախագահությունը որոշեց համագումարին մասնակցելու համար հրավիրել արտասահմանյան հայ գրականության ականավոր ներկայացուցիչներին:

Համագումարին որպես հյուրեր մասնակցելու համար կհրավիրվեն նաև Մոսկվայի, Լենինգրադի, Ռուգանայի, Վրաստանի, Ադրբեյջանի և եղբայրական մյուս ուսազուրկաների մի շարք խոշոր գրողներ:

(ՀՀԳ)

## ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՄԻՏԱՍԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 26-ին Հայաստանի Սովետական կերպարվեստագետների տան դահլիճում տեղի ունեցավ հուշերի երեկո, նվիրված Կոմիտասին:

Երեկոյին մասնակցում էին գեղանկարիչները, գրաֆիկները, քանդակագործները, ուրոնք նուանդուն կերպով պատրաստվում են մասնակցելու Կոմիտասի ծննդյան 75-ամյակի առթիվ հայութաբարված Կոմիտասի լավագույն պրարեի մրցանակաբաշխությանը:

Մեծանուն կոմպոզիտոր—երաժշտագետի մասին հետաքրքիր հուշեր պատմեց Կոմիտասի կյանքին ծանոթ դաշնակահարուհի Աղավնի Մեսրոբյանը: Նա բերեց մի շարք կարևոր փաստեր, օրինակներ այն մասին, թե ինչպես էր աշխատում Կոմիտասը, ինչպիսի ոգևորությամբ էր հավաքում ժողովրդական երգերը, և թե որքան շատ էր կապված նա ժողովով հետ:

(«Սովետական Հայաստան» № 101, 1946 թ.)

## ,, Ի Մ Հ Ո Ւ Շ Ե Ր Ի Ց “

Հայպետհրատի հրատարակությամբ լույս տեսավ մեծանուն բանաստեղծ Ալ. Խաչակիանի «Փառ հուշերից» վերնագրով աշխատությունը: Այս աշխատության մեջ բանաստեղծը հետաքրքիր հուշեր է պատմում

Հովհ. Թումանյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Նար-Պոսի, Պերճ Պոռշյանի և հայ գրականության ու արվեստի մյուս ականավոր գործիչների կյանքի մասին:

## ԼԵՈՒ „ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ“ - Ը

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պատմագրության ականավոր ներկայացուցակարարական կությունը լույս ընծայեց հայ ցիշներից մեկի՝ կեսի «Հայոց պատմություն»

երրորդ հատորը, բաղկացած 1119 էջից: Այս հատորն ընդգրկում է հայ ժողովրդի քա-


ղաքական, սոցիալ-տնտեսական և կուլտուրական կյանքը 16—18 դարերում:

## ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Քասախ գետի անդնդախոր կիրճի գեղադիր ձորափին կանգնած է միջնադարյան վանքերից Հովհաննավանքը, որը կարծես լրացնում է շրջապատի բնության գեղեցկությունը: Դա տարբեր ժամանակներում կառուցված, բայց մի ընդհանուր ներդաշնակություն ներկայացնող ճարտարապետական հուշարձանների խումբ է: Միանեֆային բազիկայի տիպի հուշարձաններից մեկն ունի հնության ակնհայտ նշաններ: Նրա պայտաձև կամարները և մի շարք դետալներ անկանած վկայում են այն մասին, որ նա

1918 թվին, մի փոթորկութ անձրևալին գիշեր փլվել է այդ սքանչելի շինության գմբեթը: Ներկայումս դրանք ավերակներ են, բայց այդ ավերակներն էլ վկայում են շենքի ունեցած գեղեցկության և մոնումենտալության մասին:

Հովհաննավանքի հուշարձանների խմբի մեջ ամենահետաքրքիրը ժամատունն է, որը իր օրիգինալությամբ զանազան վում է հայկական այդ տիպի կառուցումներից: Կառուցված է 1250 թվին Վաշի որդի Բուրդիշիանի կողմից:



Հովհաննավանք. արեմայան ժամատունը (ԺԳ դար) նորոգելուց առաջ

կառուցվել է Ն դարուց ոչ ուշ, բայց նրա տարբեր մասերը հաճախակի վերանորոգվել են:

Բազիկայի կողքին երբեմն կանգնած է եղել Վաշի իշխանի 1217 թվին կառուցած տաճարի մոնումենտալ շինքը: Սա համեմատաբար փոքր տաճար է, հետաքրքիր, սքանչելի քանդակակիր դետալներով: բոլոր չորս անկյուններում ունի երկհարկանի խորաններ: Դեպի երկրորդ հարկը ուղարկում տեղավորված խորանները տանող միանգամայն օրիգինալ սանդուղքները հանդիսանում են նեագույն հայ ճարտարապետների կառուցողական արվեստի փայլուն նմուշը:

Պատմական Հուշարձանների պահպանության Կոմիտեն, դեռ մինչ հայրենական պատերազմը, Հովհաննավանքում կատարել էր վերականգնման նշանակալից աշխատանքներ: Ամրացված են ժամատան սյուների հիմքերը, վերականգնված է արևմտյան պատի մի մասը, տանիքն ամբողջապես ծածկված է կղմինդրով, գլխավոր տաճարի արևմտյան պատի մի մասը ամրացված է:

Ներկայումս Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեն կատարում է գլխավոր տաճարի և բազիկայի արևմտյան պատերի ամրացումն ու վերականգնումը:

# ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿՅԱՆՔ

ԱՄԵՐԻԿԱՅԱՅԵՐԻ ՄԻՏԻՆԳԸ ՆՅՈՒՅՈՒՆԻՒՄ

ՆՅՈՒՅՈՒՆԻՒՄ, 29 ապրիլի (ՏԱՍՍ).—Հանդես գալով «Հայերի իրավունքների համար պայքարող ամերիկյան կոմիտե»-ի և Ամերիկայում «Հայկական Ազգային Խորհրդի կողմից Կարնեգի Հոլլում կազմակերպված մասսայական միտինգում, ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի անդամ Սելիրը (դմոկրատ, Նյու-Յորք նահանգից) հայտարարել է, որ Թյուրքիայի հայկական նահանգները պետք է վերամիավորվեն Սովետական Հայաստանին:

«Միայն հայկական պրոբլեմի արդարացի կարգավորումը,— ասել է Սելիրը, — կարող է ստիպել Թյուրքիային հրաժարի Հայաստանի այն մասից, որտեղ Թյուրքիան ներկայումս տիրապետում է և որտեղ մեկ ու կես միլիոն հայեր անտուն, անպաշտպան վտարանդիների գոյություն են վարում: Թյուրքիայի հայկական նահանգները պետք է միավորվեն Սովետական Հայաստանի ազատ, անկախ ռեսպոբլիկայի հետ, արտասահմանում գտնվողներին պետք է հնարավորություն տրվի վերադառնալ իրենց հայրենիքը: Այդ են պահանջում մարդարության սկզբունքները և մենք չպետք է մոռանանք, որ մենք պարտ ենք հայ ժողովրդին համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ դեմոկրատիային, Միավորված Ազգերի գործին նրա նվիրվածության համար: Երանք խիզախուրեն մարտը են Միացյալ նահանգների և Միավորված մյուս Ազգերի բանակներում: Հիսուն գեներացիներ, ավելի քան մեկ քառորդ միլիոն հայ սպաներ և զինվորներ մարտնել են Կարմիր Բանակի շարքերում:»

Թվիկով Սովետական Հայաստանի նվաճումները, Սելիրը նշել է, որ այնտեղ ապահովված է մայրենին լեզվով դպրոցների ստեղծումը, տաղանդների զարգացումը, տեղական դեկավարների դաստիարակումը: Նա հայտարարել է, որ հայերը երախտապարտ են Սովետական Միությանը իրենց

անվտանգությունը պաշտպանելու համար, որը հնարավոր է դարձել այդ առաջադիմությունը: Այդպիսի քաղաքականությունը միանգամայն հակառակ է եվրոպական մաս տերությունների անտարերությանը, որոնք գեր առաջին համաշխարհային պատերազմից ի վեր չեն կարողացել լուծել հայկական Հարցը:

Հանդես եկած սենատոր Տորին հայտարարել է, թե արդարությունը պահանջում է, որ Հայաստանը ազատագրվի Թյուրքիայի տիրապետությունից, ինչպես որ ազատագրվել են Սելրիան, Հոնաստանը, Բուլղարիան և այլ երկրներ: Համեմատելով թուրքերի վերաբերմունքը հայերին՝ հրեաների նկատմամբ Հիտլերի վերաբերմունքի հետ, Տորին հայտարարել է, թե անհրաժեշտ է, որ Միավորված Ազգերի կազմակերպությունը իր համար պարզի, որ Թյուրքիան պատերազմի ժամանակ չեղոք էր մնացել սպառնալով պատերազմի մեջ մտնել Գերմանիայի կողմում, եթե զիջումներ շտանա, մինչդեռ հայերը լույալ դաշնակիցներ են եղել, ինչպես առաջին, այնպես և երկրորդ համաշխարհային պատերազմում:

Այնուհետև հանդես է եկել Նյու-Յորքի բաղադրյան խորհրդի անդամ Խսահեր, որը հայտարարել է, թե չի կարելի թուլ տալ, որպեսզի Միավորված Ազգերի կազմակերպությունը դառնա նոր սարբազան դաշինք, որը նպատակ ունի պահպանել գոյություն ունեցող ստատուս քիոն: Այդ պատճառով Միավորված Ազգերի կազմակերպությունը պետք է ուղղի հայ ժողովրդի նկատմամբ եղած անարդարությունը, Թյուրքիայի հայկական տերիտորիան պետք է հանձնի Սովետական Հայաստանին: Խսահեր հայտարարել է, թե Սովետական Հայաստանը վրկայություն է հանդիսանում, որ Սովետական Միությունը պատրաստ է իր մեջ ապրող զանազան ժողովրդներին լիակատար հնարավորություն տալ զարգացնելու իրենց

տնաեսությունը, կովտուզան, քաղաքակրթությունը: Խսակը կոչ է արել ԱՄՆ-ի պետական գեղարտամենտին պաշտպանել հայ ժողովրդի պահանջները:

«Հայերի իրավունքների համար պայքարող ամերիկացիների կոմիտե»-ի նախագահ Միթարտը բարձր գեահատական է տվել Սովետական Հայաստանի նվաճումներին, որը ինչպես նշել է Միթարտը, զգալի շափով աշակցել է հայկական հարցի լուծմանը, առաջարկելով ընդունել հայ գաղթականներին: Պատասխանելով այն հայտարարությանը, թե թյուրքական նահանգների հանձնումը կնշշանակեր տնտեսական և ստրատեգիական օգնություն ցույց տալ Սովետական Միթարտը հայտարարել է, թե Սովետական Միթությունը չէ, որ ստեղծել է հայկական պրոբլեմը և որ «Հայերի իրավունքների համար պայքարող ամերիկյան կոմիտեն» կշարումնակի պնդել: Որպեսզի հայկական հարցը «մնա դեմոկրատիայի օրակարգում մինչև որ արդարացի լուծում ըստնա»:

Ճառերով հանդես են եկել նաև ներկայացուցիչների պալատի անդամ Սեյը, բողո-

քական եկեղեցիների նյութ-Յորբի ֆեդերացիայի քարտուզար Միրին, հայտնի բնելուախուզ Ստեֆանսոնը: Միտինում նախագահում էր «Հայերի իրավունքների համար պայքարող ամերիկյան կոմիտե»-ի ղեկավար Միթարտը: Պատվավոր նախագահների թվում էին միտրոպոլիտ Վանիամինը, հայեպիսկոպոս Ներսոյանը:

Միտինում ներկա էր ավելի քան 2700 մարդ, այդ թվում Մասսաչուսեթ, Նյու-Ջերսի և Պենսիլվանիա նահանգների հայկական ղեկավացիաները: Նրանք խանդավառությամբ էին ղեկավորում այն ելույթները, որոնցով պահանջվում էր, որպեսզի Միթարտը Ազգերի կազմակերպության Անվտանգության Խորհուրդը, ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը պաշտպանեն թյուրքիայի հայկական նահանգները Սովետական Հայաստանին հանձնելը:

Այդ միտինում ավարտվեցին Միացյալ Նահանգներում անցկացված մի շարք մասսայական ժողովներ, որոնք դիմել են Միթություրված Ազգերին, Հիշեցնելով, թե ավելի քան մեկ միլիոն հայեր թյուրքական ճընշման հետևանքով դեռևս հայրենիք չունեն:

## ԱՄԵՐԻԿԱՅԱՅԵՐԻ ՄԻՏԻՆԳԸ ՆՅՈՒ-ՅՈՐՔՈՒՄ

**ՆՅՈՒ-ՅՈՐՔ, 30 ապրիլի (ՏԱՍՏ).**— Ալորիի 28-ին նյութ-Յորքում տեղի ունեց ավմասսայական միտինգ, որ կազմակերպել էին «Հայերի իրավունքների համար պայքարող ամերիկյան կոմիտե»-ն և «Ամերիկահայերի ազգային խորհուրդ»-ը: Միտինում մասնակիցները միաձայն ընդունելու հետևալ բանաձեռքը.

Ծնկատի ունենալով, որ հարյուր հազարվոր հայեր՝ թյուրքական ճնշման դոժեր՝ ներկայում խիստ կարիքի մեջ ապրում են օտարերկրյա պետությունների տերիտորիաներում, մասնավորապես Մերձավոր Արևելքի և Միջերկրական ծովի երկրներում, որ զգալի թվով հայեր արդեն ցանկություն են հայտնել վերադառնալու հայրենիք, որ գաղթած հայերի հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձը հնարավոր է միայն այն բանից հետո, եթե Սովետական Հայաստանին վերամիավորվեն հայկական նահանգները, որ թյուրքերը բռնի կերպով լիրել են Հայաստանից և որ թյուրքական կառավարությունը սերունդների ընթացքում դաժանութեան ճնշել ու կոտորել է հայերին և վարկաբեկել նրանց:

Հիշելով, որ ամերիկյան կառավարության քաղաքականությունը Վիլսոնի ժամանակնե-

րից ի վեր եղել է բարեկամության քաղաքականություն հայ ժողովրդի նկատմամբ, որ Վիլսոնը 1920 թվին իր արքիտրամաքին որոշման մեջ նախատեսում էր Հայաստանին վերամիավորել թյուրքիայի ղավթած հայկական նահանգները՝ Ղարսը, Արգահանը, Երզրումը, Տրավիդոնը, Վանը և Բիթլիսը, որ հայ ժողովուրդը Հայկական ՍՍՌ-ում 25 տարվա ընթացքում մեծ առաջադիմության է հասել տնտեսական ու կուտարական տեսակետից և որ հայ զինվորները Սովետական Միթության բանակների շարքերում արիարար պայքարել են հիտլերյան ֆաշիստների դեմ, իսկ ամերիկահայերը ԱՄՆ-ի ղենված ուժերի շարքերում.

Հաշվի առնելով, որ Միթարտված Ազգերի կազմակերպության վրա, հանուն միջազգային խաղաղության ու անվտանգության շահերի պարտականություն է զրված՝ ուղղել միջազգային անարդարությունը, — մենք ամերիկահայերս Միթարտված Ազգերի կազմակերպությանը միահամուռ կերպով կոչ ենք անուռ համակրական վերաբերմունք ուցուց տալ և հայկական հարցը արագ լուծել համապատասխան այս բանաձեռք առաջ շարքություններից:

Բանաձեռքի պատճենները ուղարկված են

Միավորված Ազգերի կազմակերպության սոլոր անդամներին, ինչպես նաև ԱՄՆ-ի պետական քարտուղար Թիրնսին և ԱՄՆ-ի սըրեգիդենտ Տրումենին:

## ԱՄՆ-Ի ՀԱՅԿԱԿԱՆ 16 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԴԻՄՈՒՄԸ ՏՐՅՈՒԳՎԵ ԼԻՆ

ՆՅՈՒ-ՅՈՒԹ, 6 մայիսի (ՏԱՍՍ).—ԱՄՆ-Ի Հայկական 16 կազմակերպությունների կողմանը դիմում է ուղարկել Միավորված Ազգերի կազմակերպության գլխավոր բարտուղար Տրյուգվե լիին, կոչ անելով հայկական հարցը մտցնել Անվտանգության Խորհրդի օրակարգի մեջ՝ հայ ժողովրդի վաղիմի պահանջների կարգավորմանը նըպատելու, նրա համար հայրենիքը վերաբանալու, ազատության և անվտանգության պայմաններում լավագույն կյանք կնքելու հարավորություն ստեղծելու նըպատակով: Դիմումի մեջ ասված է, որ ամբողջ աշխարհում 4 միլիոն հայեր պահանջում են, որ Սովետական Հայաստանն ըստանա Դարսը, Արքահանը, երգրումը, Տրապիզոնը, Բիթլիսը և Վանը, որոնք պրեդուկտոնի որոշմամբ պետք է արվեին Հայաստանին:

«Պատմության ընթացքում Հայաստանին պատկանող տերիտորիայի <sup>9/10</sup> մասը գետես մնում է Թյուրքիայի սահմաններում,— ասված է դիմումի մեջ:— Սովետական Հայաստանի ժողովուրդը անհամբեր սպասում է իր հայրենակիցների վերադարձին արտասահմանից, իսկ Հայկական ռեսպուբլիկայի կառավարությունը պատրաստ է բոլոր միջոցներով նպաստելու նրանց հայրենիք վերաբանալուն... Թյուրքիայի կատարած սպանությունները և արտաքսումները շասան իրենց նպատակին՝ հայկական հարցի ոլուծմանը հայ ժողովրդին ամբողջովին ուշնչացնելու միջոցով: Պատմական Հայաստանը մաքրված է հայերից, սակայն այն չի դարձել թյուրքական հողը Թյուրքա-Հայաստանը ներկայումս սակավ է բնակչությունը վերադարձի հայերին, ապա կերպնվի վերջին 25 տարիների ընթացքում Սովետական Հայաստանի ծաղկման ապշեցուցիչ պատմությունը և համաշխարհային քաղաքակրթությունը կշահի այդ հանձնումցու:

Կալիֆորնիայի հայ արքեպիսկոպոս Գալֆայանը նույնպես դիմել է Անվտանգության Խորհրդին, ինդրելով վերականգնել հայկա-

կան նահանգները՝ դրանք Սովետական Հայաստանի կազմի մեջ մտցնելու միջոցով: «Անազին և երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում միավորի լողուրքը եղել է փոքր ազգությունների ազատագրությունը, — նշում է Գալֆայանը:— Եթե Հայաստանը նորից զո՞հ դառնա մեծ տեսությունների պահությանը ու մրցակցությանը, ապա մարդկությունը կհամարձակի վի՞ արդյոք այլևս խոսելու արդարության մասին»:

«Նյու-Յորք թայմս» թերթում հրապարակվել է «Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտե»-ի նախագահ Սմիտոնի ընդարձակ նախակը, որը հայութարում է, թե թյուրքերի կողմից հայերի գեմ ուղղված հալածանքները արդեն վաղոց վրդովմունք են պատճառել գեմոկրատական և քրիստոնեական աշխարհին: Նամակի մեջ ասված է, որ այն ժամանակ, երբ «Սովետական Հայաստանի հայերը արագ անցնում են կանքի է՛լ ավելի բարձր մակարդակի, Սիրիայում, Լիբանանում, եղիպատում և Հունաստանում ընշագուրկ հայերը ապրում են ամենաողբավի պայմաններում»:

Նշելով, որ ամենուրեք հայերը պահանջում են հայկական տերիտորիան վերցնել Թյուրքիայից, Սմիտոնը գրում է, «Դժբախտաբար, Ամերիկայի որոշ ազգեցիկ շրջաններ առարկում են այդ պահանջին, այն հիման վրա, թե դա կծառայի Սովետական Միության ստրատեգիական ու սնտեսական շահերին: Այս փաստարկումը նշանակում է մարդկայնության և արդարության պահանջները անտես առնել միայն այն բանի համար, որ դրա հետևանքով պատահաբար օգնություն ցուց կտրվի վերջին պատերազմում մեծագնակիցներից մեկին: Նման դիրքը մի համապատասխանում այն գաղափարներին, որոնց համար պայքարում են մեռնում էին ամերիկացիները, ուսաները, անգիտությունները և հայերը: Հայկական հարցը ստեղծվել է Թյուրքիայի անցյալ պատմության սև էջեռով և ոչ թե Սովետական Միության կողմից»:

## ՀԱՅԵՐԻ ԺՈՂՈՎԸ

## ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ

թեզրուիթ, 25 ապրիլի (ՏԱՄՄ).— Դամասկոսում ապրիլի 23-ին տեղի է ունեցել հայերի ժողով, որտեղ Սովետական Հայաստանի մասին զեկուցումով հանդես է եկել Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Նազարյանը։ Զեկուցումը լսվել է մեծ ուշադրությամբ և հետաքրքրությամբ։ Այդ ժողովից հետո շատեւ ցումը լսվել է մեծ ուշադրությամբ և հետաքրքրությամբ։ Այդ ժողովից հետո շատեւ

ըս հայտարարել են, որ մինչև այժմ նրանց քիչ բան է հայտնի եղել Սովետական Հայաստանի կյանքի մասին և միայն այժմ նրանք միանգամայն պարզ պատկեր են ըստացել։ Թողորը հայտնել են իրենց բուռնակությունը, որքան կարելի է շուտ վերադառնալ Սովետական Հայաստան։

ՀԱԼԵՊԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՇՈՒՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻՈ  
ՎԵԼԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Մի քանի օրերեւ ի վեր ժողովրդի խռովակցության նյութին է Վեհափառին ալցելությունը։ Սովետական բարեխնամ կառավարությունն և Ազգային իշխանությունը գործի վրա են արժանի ընդունելություն ընելու համար։

21 մարտ հինգշաբթի կեսօրին դիմավորելու գացողներու օթոները կմեկնին քաղաքներն էին բոլոր թափանցիները նախորդ օրն իսկ վարձված են։ Մի քանի Զեյթունցի հայրենակիցներով կեսօրեւ ետք, ժամը 1:30-ին կմեկնինք քաղաքնեն։ Կհասնինք Ուրում—էլ—Զուղրա, կարգադիր հանձնախումբի կողմեւ ազգային մարմիններու համար որոշված վայրու Առոտուան առատ անձրևներեն վերջ, արևու ճառագայթներն նոր փայլ ու գեղեցկություն տուած են նորափթիթ արտերուն։ Ամեն կողմ զումրուիստ կանալ է։ Գարնան այս հրապույրը կմղեմ մեզ ճամբան զարուակելու կհասնինք 50 քմ։ Հեռու թեֆքոյեզի մոտ Օթոյեն վարկիցներ ավելի վայելելու համար բնությունը։ Հին հուշեր շարժապատեկերի պես կուտան ու կանցնին։ Կրաղղատենք այսօրը երեկվա հետ։ Սրտերնիս կուռի ապագայի պայծառ հեռանկարներով։ Ի տես կանաչ արտերուն ծրագիրներ կշինենք Հայաստանի մեջ մեզի տրամադրվելիք հողերու մշակության համար։ Երեսուն տարիներ առաջ մեղմեւ ոմանք ճիշտ այս օրերուն հետիոտն ու անտիթ թուրք զորաց անարդանք ու սարսափին տակ տարագրության ճամբաներն էին բռնած։ Այսօր մենք արդիական օթոյով մեր Վեհափառը դիմավորելու ենք եկած։ Այս բոլորը որքան հայու աննկուն նկարագրին, նույնքան և ավելի պարտինք Սովետական Հայաստանի միջազգային դիրքին։ Մինչ այդ հեռուն կերպին երեք օթաներ, առաջինը բաց գեղին, Վեհափառին

օթոն է, Հալեպին հատկապես ուղարկված Տիար երգանդ Տեմիրյանի կողմեւ, որը իր անձնական օթոյով եկած է ընտանյութ բարեգալուստ մաղթելու։ Վեհափառին օթոն կանք կառնե։ Ազահամբուլբն վերջ ճամբան կելլենք։ Մասրայի, Թեփեր Հալեպի արար գլուզացիությունը ճամբուն եղերքը հավալած հարգանք կմատուցանք մեծ հյուրին։ Վեհափառը կօրհնե զաննիք։

Ուրում—էլ—Զուղրայի խաչաձև ճամբան անցնիլ անկարելի է, ժողովուրդ և օթո խնդղված են ճամբուն վրա։ Թեմիրին առաջնորդ Գեր, Զարեհ վարդապետ իր հոտին կողմեւ բարեգալուստ կմաղթե։ ոստիկան զորաց ջոկատ մը զինվորական պատիվներ կընծայեն։ Վեհափառը կիոխսադրվի մեծահարդ Զիքի պեկ Սովետական կառավարությունն ու ժողովուրդը իրենց վայել ազնվությամբ գիտեն գնահատել Հայրապետն ու ժողովուրդներու բարեկամության, հատկապես արար և հայ եղբայրության առաքյալը։

Սոտորսիքեթներու ու ոստիկան զորաց առաջնորդությամբ կազմվի թափորը կարգադիր հանձնախումբի ծրագրով։ 400-500 օթոներ, խիս առ խիտ 4-5 քլմ։ Երկարությամբ շղթա մը կազմած ճամբան կելլեն։ Ամերիկյան գոլեճի հայ ոստոցությունը քաղաքի մուտքին, դպրոցի շենքին առջև բարեգալուստ կմաղթե և կարժանանա Վեհափառին օրհնության։ Տավուտին թաղին առջև, մասնավորապես կանգնած կամարի տակ, Վեհափառը կօրհնե նաև ժողովուրդը, որ մեծով պատիկով ճամբարներն են թափված։ Հ. Մ.-ի սկառուները բարեկ կենան։ Մայրամասի հայ բնակչությունը շուզեր բաժնիվ իր սիրելի հովուապետեն։ Հետիոտն կառաջանան մինչև նոր գյուղ, գանդաղեցնելով թափորին գնացքը։ Նոր

գլուղի ասֆալտ ճամբում վրա էլեքտրական լամպարներով և զարնանային առաջին կանաչներով զարդարված հոկա կամրջին տակ ճերմակներու մեջ շղարշված անմեղ աղջնակ մը ծաղկեփոնչ մը նվիրելով բարեգալուստ կմազթե Սպիտակ աղավնիներ բարեգալուստի ավելիսը եթերները կփոխադրեն, Հ. Մ. Ը. -ի նվազափումը ը կհնչե ուժգին, մինչ փողոցն ու տանիքները լեցուած 40.000 ժողովուրդ մը կծափահարե անդադար:

Բարձրախոսին առջև Հայրապետը կօրհնե ժողովուրդը, շնորհակալություն հայտնե անոնց զգացումներուն համար և բարեմաղթություններ կընե արար աղջին: Մարտի հարափոփոխ երկինքը ավելի շուգեր համրերել ու հուզումով գերազուգուած ժողովուրդը կողողին անձրկի կաթիներով: թափորը Համբարիկեն, նեալեն, թիւելեն, Պատիլքարաչեն ու Խանտիկեն անձրկի տակ սպասող տեղացի հազարավոր ժողովուրդներու ծափահարությանց ու բարեգա-

լուսափի մարդանքներով կհասնի Սալիդե: Վեհափառը հրաշափառով կառաջնորդվի եկեղեցի: Աղոթքեն վերջ գոհություն կուտա Աստծո, որ այս երկար ճամբային ապահով առաջնորդեց զինք իր սիրելի հոտին ի տես: Շնորհակալություն կհայտնե ամբողջ ճամբու ընթացքին իրեն հանդեպ ցույց տրված հարգանքին համար: Կհորդորի հավատարիմ մնալ հայաստանյան եկեղեցվու ու արժանավոր զավակները ըլլալ անոր և հայրենիթին, որպեսզի նահատակաց հոգիներն ուրախանն: Հարանուանությանց և հոգևոր պետերուն հետ տեսակցելի վերջ, «Տեր կեցո զու զհայս»-ով կուղվի առաջնորդարան:

Ժողովուրդն իմանալով, որ Հայրապետը տասը օր պիտի մնա Հաւեպ, կմեկնի անհուն բերկությամբ, ձգնով որ Վեհափառը հանդի երկար ճամբու հոգնութենեն վերջ:

Ա. ՎԱՀԱՆՆԵՍՅ  
(«Առաւօտ» մարտ 29 1946 թ.)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՑՈՒՑԱՆՇԱԽԵՍԸ ՀԱԼԵԹՈՒՄ

Մարտի 22, ուրբաթ օրը փակվեցավ Սուվետ Հայաստանի պատկերավոր ցուցահանդեսը, կազմակերպված Սովոր Հայաստանի հետ Մշակութային Կապի Հալեպահայ Բնիքության կողմեն:

Ցուցահանդեսը բացված էր մարտի 9-ին, բարձր հովանավորությամբ Հալեպի Սուհաբը ն. Վ. Խասան Պեյ Շերիֆի:

Ցուցահանդեսի 15 օրվան տևողության ընթացքին այցելումերի թիվը հասավ 80 հազարի:

Կրնանք ըսել, թե հայ շմնաց, որ շայցելիք ցուցահանդեսը: Մեծ թվով արարներ և այցելեցին զայն:

Ցուցահանդեսին ձգած տպավորությունը մեծ էր: Սուրբահայ գաղութը առաջին անգամ ըլլալով առիթը կունենար կենդանի

պատկերներով ճանչնալու իր սիրելի Հայրենիքին նվաճումները:

Ցուցահանդեսը նմանապես մեծ հիացմունք պատճառեց ալցելուներուն, որոնք տեսան, թե հայ ժողովուրդը իրեն համար ինչ բարձր քաղաքակրթություն կստիճեն և ինչպիսի հառաջաղիմություններ կարձանարեն, եթե իրեն կտրվին նպաստավոր պատմաներ:

Զոռանանք ըսելու թե՝ գրեթե բոլոր Հալեպահայ դպրոցներու աշակերտները ամեն առառու իրենց ուսուցչական կազմով կայցելին ցուցահանդեսը:

Փոքրիկներու խանդավառությունը շափ ու սահման շուներ, մանավանդ երբ կտեսնեին մայր Հայրենիքի իրենց եղբայրներուն ու քույրերուն նախանձելի վիճակը:

(«Առաւօտ» մարտ 28 1946 թ.)

## ՊԵԼՃԻՔԱՅԱՅ ԿՅԱՆՔ

Մեր Փարիզի պաշտոնակից «Ժողովուրդ»-ի մեջ կլարդաեմ.

Պելճիքայի հայ փոքրիկ գաղութը կրալկանա ավելի քան հազար անձերե՛ որոնցին մոտ յոթ հարյուրը կրնակին Պրյուսել, մը նացածը ցրված են Անվերս, Լիեժ, Շառլուպուայ նամյուր և այլ վայրեր՝ Քսանը

հինգ հոգիներե կազմված է, ընդհանուր թվեարկությամբ, գաղութային ժողով մը, ուր իր կարգին ընտրած է յոթ հոգինոց գործադիր վարչություն մը, տեղվույս ընթացիկ գործերը վարելու համար:

Գաղութիս մշակութային կյանքը հանձնը-ված էր նրիտասարդաց և ուսանողական

միություններուն, բայց պատերազմեն ի վեր ուսանողներու նվազումով, երիտասարդաց Միությունն է, որ ստանձնած է այդ գործը, որուն իրենց օժանդակությունը կրերեն մը նացած ուսանողները։ Հակառակ տիրող դժվարին պայմաններուն, Միության ներկա վարչությունը ամեն ճիգ կրաքե գաղութին մեջ ազգային մինողորտ մը ստեղծելու։ Ան մասնավորապես կաշխատի Հայաստանը ճանչցնել և սիրցնել հայ հասարակության և մշակութային կապ հաստատել Մայր Հայութինքին և գաղութին միջև։ Այդ նպատակին համելու համար ան կրազմակերպե տեղույն հայ ակումբին մեջ պարբերաբար դասախոսություններ՝ հայ դրականության,

## ՃԱՎԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Մինհավուրեն մեջի դրկված մասնավոր համակե մը կբազենք հետևյալը։

Չորս տարի է, որ Ճավայի մեջ (Սուլարայա) գուրսեն ուեւ լուր չունեինք Փոստ և հեռուստի գոյություն չունեին ճարոնական կոփվներու և գրավման ընթացքին։ Հազիվ ճարոնները պարտուցան, ճավայի բնիկներու գեմ սկսվեց պատերազմ, որու ընթացքին հոկտեմբերի 29-ին ունեցանք երեք հայ զոհեր։

Մինք 300 հոգի էինք Սուլարայայի մեջ։ Մինչև նոյեմբեր 7 մոտավորապես 150 հոգի

պատմության, գեղարվեստին և ազգային արժեքներուն շուրջ, գրական երեկությներ և թատերական ներկայացումներ Միությունը ունի իրեն սեփական գրադարանը, որուն կը ված է նաև հանգուցյալ պրոֆ. Ն. Աղոնցի մատենադարանը, սեփականություն գաղութային վարչության։ Միությունը հաստատած է նաև դիշերային դասընթացք հայ լեզվի, գրականության և աշխարհագրության շափառաններու համար։ Իսկ փոքրիկու ազգային դաստիարակությամբ կզքաղի աարիներե ի վեր, այնքան նվիրումով ու ձեռնհասությամբ, ծանոթ ուսուցչունի օր. Բ. Գովանճյան։

(«Միություն» հունվ. 6 1946 թ.)

## ՀԱՅԵՐԸ

ազատվեցանք Սուլարայայի պատերազմական շրջանն և ներկայիս կուսնիքն Մինհավուր, գաղթականի կյանքով, ամեն ինչ գիրնիս ձգած Սուլարայա և իրարու հանգեց կարոտը սրտերնուու։

Եվ նամակագիրը խնդրելով որ պատեղազմի պատճառակ քանի մը տարիների ի վեր առաքումը դադրած «Արաքս»-ը վերսկսինք դրկել իրեն, կխոստանա պարբերաբար նորություններ հաղորդել մեզի։

(«Արաքս» հունվար 12 1946 թ.

Աղեքսանդրիա)

## ՎԵՆԵՏԻԿԻ Ս. ՂԱԶԱՐ ԿՂՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Ս. Ղազար վանքը բնակ - չէ փոխված Կարծես պատերազմեն լուր չունի. Կարմիր տաներով փոքրիկ կղզին է միշտ՝ օտարին թե հայուն համար։ Հայաստանին փրցված բուռ մը հող, ուր կհանգչին Միութաբներ, Բագրատինիներ ու Ալիշաններ Վանքին վարիչներն ալ ամենուն պես դժվարությանց հանդիպեցին, մանավանդ տնտեսական գետնի վրա։

Վարժարանին հետ անոնք. ալ գյուղը փոխադրվեցան, իրենց հետ տանելով երկու հազարի շափ հայկական ձեռագիրներն ու գեղարվեստական գանձերը, որոնք հետո ետ բերվեցին կղզին։

«Բազմավիճակ»-ը, որուն 1944-ի հարյուրամյակը հետաձգվեցավ, տարին երկու ան-

դրագրուու։ Դամ միայն կհրատարակին Տպարանը նոր ընթերցարան մը սկսավ հրատարակել «Ահան» անունով։ Առաջին հատորը արդեն լույս տեսած է և քիչ ատենեն ուրիշ հինգ հատորներ ալ երեսն կուգան, պատրաստ միշտակարգ ու բարձրագույն ընթացքներու ծրագրուու։

Ավելի կարեռը գործ մը. — տպարանը սկսավ հրատարակել ծաղկաբաղներ ծանոթ հեղինակներեն, բանաստեղծ, թե արձակագիրը Արդեն լույս տեսած են Վարդեման՝ երկու հատորներով, Թումանյան՝ նույնպես երկու հատորներով։ Մոտերս լույս կտեսնեն Մեծարենց և ապա Ալիշան՝ աշխարհաբար թարգմանություններու։

(«Ալիշ» 17 վերավ. 1946 թ. Թեհրան)

## ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ՔԱՐՏԵՍԸ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

Զանազան լեզուներով միիսնավոր քարտեսներ հրատարակված են Գոլոմպոսի Ամերիկան գտնելն մինչև այսօր Բայց ասոնց մեջ գեղարվեստական զլուխ գործոց մըն է Հայերեն ամենագեղեցիկ գիրիբով պատրաստված քարտես մը, որ տըպագրված է 1695-ին Հովանոսի Ամսթերդամի քաղաքը և որմե մեկ օրինակ կդառնընի այսօր Փարիզի Արքայական Մատենադարանը (Պիպլիոթիք Ռուայալ), որ փունսական հեղափոխութենին վերջ կոշլած է Ազգային Մատենադարան (Պիպլիոթիք Նայոնալ)։

Ոճի 1.50 մետր քարձրություն և 1.30 մետր լայնություն մատենադարանին մեջ մաս կկազմե հոլանտական հին քարտեսներու հավաքածուին ու կկրե 253-րդ թիվը։ Անորտակի արձանագրութենին կերեկ հետեւալ նախադասությունը։

«Սեթ մանեհիֆիք բիես կուպի ըսումինը տը լա քոլեքսիոն Քլափութի (Այս փորագրությունը շրեղ կտորը կուգա Քլափութի հավաքածույն)։

Այս քարտեսին փորագրիները եղած ան Սրբութիք եղարքը, որոնք դժբախտաբար անձանոթ մնացած են քարտիսագիրներու ցանկին մեջ, և սակայն պատրաստած են զայն Ամսթերդամ հաստատված խումբ մը Հայերու Հովանավորությամբ և ապագրված է երևանցի Ռուկան վարդապետի տնտեսնության տակ եկեղեցական, պատմական և աշխարհագրական բազմաթիվ գիրքից հրատարակող հայ տպարանին մեջ։ Այս քաղաքին մեջ է, որ 1660-ին Մատթեոս Դպիք Շաբեցին հիմնած է տպարան մը, ուր տրպագրուած է Ներսես Շնորհալիի (ԺԲ դար) օժիտուա Որդիք տարաշափական գործը։

Անբաղդատելի գեղեցկությամբ օժաւած սուլին կարենոր քարտեսը նախորդ համաշխարհային պատերազմի հայտարարության նախօրյալիին ցուցադրված է Փարիզի Աղքային Մատենադարանի Աշխարհագրական բաժանմունքի վարչության կողմէ։ Անորտակ անկյուններն յուրաքանչյուր հատկացված է տարվուն չորս եղանակներին միայն։ Չորս եղանակները ցուց տրված են դիցաբանական և պալարանական բազմաթիվ անձեռու խմբաներով, որոնց հունին մարմիններուն և գեմքերուն արտակարգ գեղեցկությունը կարծել կուտա թիվ մարմինները եղած են Ռաֆայելի մը կամ կենարտու տակ Վինչենչի մը վրձիննեն։

Քարտեսը ցուց տրված է երկու հարթաբառ՝ ցամաքներու վը Քարտեսը ցուց տրված է երկու հարթաբառ՝ ցամաքներու վը

գունդերով (բլանիսֆեր), որոնց աջ կողմինը Արևելյան կիսագունդը (Եվրոպա, Ասիա, Աֆրիկե), իսկ ձախինը՝ Արևմտյան կիսագունդը (Ամերիկա) կներկայացնեն։

Վերի աջ անկյունը դրառած է Ամրան խմբանկարով, ձախի Զմբան խմբանկարով։ Աշխան խմբանկարը կախումի վարը՝ ձախ անկյունը, իսկ Գարնան խմբանկարը՝ անոր հակառակ անկյունը։ Հարթագունդերուն վերի լայն միջացին մեջ կդառնվին Հյուսիսափն և Հարավային կիսագունդերը, ուր կերպին համաստեղությունները՝ իրենց այլարանական պատկերներով։

Սույն կիսագունդերուն տակը կդառնվի արեգակնային դրությունը՝ հիներու ենթադրությամբ երկիրը իրեն կեղուն՝ անոր շուրջը կարգով կուանը, Փալլածուն, Լուարը, Արեգակը, Հրատը, Լուանիթագը, և երևակի Մինչ տրաօրվան ծանոթ Արեգակնային դրություն կեղունն է Արևը, որուն շուրջը կուանան Փալլածուն, Արտակակ, երեկո, Հրատ, Լուանիթագ, երևակ, Ռուան և նեղոտուն։

Գալով հարթագունդերուն տակի անկյան, հուն զետեղված է գեղեցիկ շրջանակի մը մեջ հետեւալ հիշատակարանը։

Շնորդ քանդակ գեղեցկավալեալ հանրանշան

Փոխարերեաց Թօսմա յետնորտ Ռոտ Վահանդեան

Քիլ վարը՝

Փորագրութիւն յուժ ցանկալի,

Ի ձին Եղարք Հարավատի,

Արքիանու Քակօնրէկի

Եւ Պետրոսի Քաջավարժի

Հնտ Դուկասու Հրմտագունի

Երկամբը բազմօք յայտածուի

Եղբօրորդի իմ Անդրանիկի

Պահնացէ էն մերում ծոցի

Այսինքն Ասրիանու և Պետրոս Գամբանու Սրբափիք Եղարք, շինեցին կամ ըրին, Ամստերդամ, 1695։

Սույն հիշատակարանին անմիջապես տակ կա փոքրիկ շրջանակի մը մեջ պարսկատած Ֆիհանափին (պարսկ. աշխարհացուց) բառը, որու տակը կդառնվին երկու փոքր հարթագունդեր, հար և նման վերի գունդերուն։ Այս երկու հարթագունդերուն մեկը ցուց կուտա Մովաշին կամ Հարավալին կիսագունդը, իսկ մյուսը՝ Հյուսիսափն կամ Յամագարային կիսագունդը, առաջինին վրա տարածված են ծովերը, իսկ երկրորդին վը Քարտեսը ցուց տրված է երկու հարթաբառ՝ ցամաքներու վը

Վերջացնելի առաջ ավելցնեմ թե Գոլոմպսոսի Ամերիկան գտնելին մինչև Միացյալ Նահանգներու անկախության թվականը (1492—1776) Մարթիմ Պեհայիմի 1492-ին, Խուան տե լա Գուայի 1500-ին, Տիեկո Միպեուի 1529-ին, Մյունսթերի 1540-ին և աշխարհանոշակ քարտիսագիր Օրոթելիուսի 1570-ին հրատարակած քարտեսներուն ամենակատարյալն ու ամենագեղեցիկն է վերջիշյալ հայ քարտեսը, որուն մեկ նմանանությունը տեսա Փարիզ, Սեն գետին երկայնքին հին գիրքեր ու հին պատկեր ծախողներն Վերեր անուն ֆրանսացիկն թալ (որուն հին պատկերներ կծախեի) ֆրանսերն իշղով տպագրված Գոլոմպոսի խոկան պատմությունը անուն գրին ըստիդրը:

Չկրցի հասկնալ, թե ֆրանսերնեն գրքի մը սկիզբը ինչո՞ւ հայատառ քարտես մը կը դրսեր: Երկար մտածումների վերջ այն եղակացության եկանք, որ Գոլոմպոսի գյուտեն մինչև Միացյալ Նահանգներու անկախության թվականը, այսինքն 284 տարվան տպագրված վերոհիշյալ քարտեսներուն մեջ ամենաճշգրիտը Ամերիկաներու մասին և իրը գեղարվեստական գույս գործոց, անոր հավասարը ունեցած շրջալուն պատճառով նախապատլություն տրված է անոր, որուն տպագրության շրջանին ալ արդեն տպագրվածները որևէ կերպով չեն հավասարիր իրեն:

(«Առաջատար» Բունվար 18 1946 թ.)

## ՀԱՅՈՑ ՓԱՅԼՈՒՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Փետր. 9 փայլուն հաղթանակի օր մը եղավ Ֆիլատելիքի հայերուն համար:

Փետր. 8-ին և 9-ին, ուրբաթ և շաբաթ իրիկուները, նախաձեռնությամբ Փենսիլվանիա Համալսարանի Մշակույթային Ողոմականի վարիչ հմուտ գիտնական տոք. Կրյուպրի, ավելի քան քսան ազգեր ցուցադրեցին իրենց ազգ. մշակույթը — երգն ու պարը:

Այս տարի ևս հայերը մասնակցեցին, նախաձեռնությամբ ԿԾՈՒԽԿի:

Ցուցադրության հայոց բաժնի ղեկավար Տիկ. Հ. Գևորգյան, որ անդամ է նաև Փենսիլվանիա Համալսարանի Մշակույթային Ողոմականի Հանձնաժողովին և ասկե առաջ միշտ Համալսարանի Ողոմականին ցուցադրած է փր հազմած ՀԱՅ ՊԱՐԱՆԻ Հայկական շնորհալի պարերը ու ապահոված հաղթանակ Հայոց համար, այս տարի հրավիրած էր Սյունի երգչախոմբը, որ, գովեստով պետք է նշել, արդարացուց իր վրա դրված հույսերը և ՀԱՅ ԵՐԳԸ արժանապես ներկայացուց:

Ֆիլ. ԱՅՈՒԽԻ նրգչախմբի կարող խմբավարն է ողբացյալ երաժշտագետի տաղանդավոր որդին՝ ԳՈՒՐԴԵՆ, որ իր շափատվորյան մեջ կդնե իր ամբողջ հոգին ու կապի ՀԱՅ ԵՐԳԸ, իսկ դաշնակահարուհին է՝ ԱՅՈՒԽԻ ամենափալլուն աշակերտներն օր. Արաքսի Հովսեփյան և 40-ի մոտ

երկուու անդամներուն մեջ են ԱՅՈՒԽԻ մյուս երկու զավակները՝ Միրան Սյունի Գաղանցյան և Արմեն, ինչպես նաև եղբորորդին՝ Միրզա: Այսպես երաժշտագետը ոչ միայն մեզի կտակած է ՀԱՅ ԵՐԳԸ, այլ նաև այդ երգը պանծացնող երգչախմբի վարիչ ու անդամներ:

Խումբը երգեց Գ. Սյունիի «Արիք Հայկազունք»-ը, «Ալայցազ»-ը, «Զինչ» ու Զինչ»-ը, «Գացեք ամպեր»-ը, «Հորովել»-ը և «Հունձք»-ը:

Խոմբի հոգին էր և անոր փայլը բազմապատկեց մեր երիսասարդ երփշը՝ ձորձ Մազմանցյան, որ երգեց մեներգները՝ «Գացեք ամպեր»-ուն և «Հորովել»-ին: Ձորձն ու իր երգունի տիկինը ԱՅՈՒԽԻ երգչախմբի մեջ իրապես արժեքավոր ուժեր են և պետք է գնահատին որպես այդպիսին:

Ողոմականի վերջավորության, Տոք. Կրյուպրը և Տոք. Փորթնով շնորհավորեցին Հայ երգի հաջողությունն ու զայն պատճենվող խմբավարն ու երգիչը: Այս երկու արվեստագետները իրենց հիացումն հայտնած են նաև իրենց գողտը նամակներով:

Այսպես, Ֆիլատելիքի հայերը փետր. 9-ին հաղթանակ մը ևս արձանագրեցին Հայ Մշակույթին համար, Փենսիլվանիա Համալսարանի Ծրվայն Օտիթորյուումին մեջ: («Կոունկ» փետր. 15, 1946 թ. Ֆիլատելիքիա)

## ՀԱՅ ԵՐԳՉՈՒՅԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՕՓԵՐԱՅԻ ՄԵՋ

Ամերիկան թերթերն կիմանանք թե ընդունված է տրամաթիկ սովորանո օր. Այսու-Յորի Մեթրուփուլիտեն օփերայի մեջ բույակ Տերմեններան, որ ասկե քանի մը

ամիս առաջ իր երգով առաջինը հանդիսացած էր 75 երգչուհիներու մեջ, Այս հաջողութենան ետք է, որ անիկա ավելի ժարգած է իր ձայնը: Վերջերս Արթուրո Թուքանինի

լսելի ետք անոր երգերը՝ ձայնագրի վրա: Հրավիրած է զինքը և քանի մը կտոր երգել տված, որոնց մեջ նաև հայ երգեր: («Միուրիւն» հունվ. 13 1946 թ.)

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԺԵՍՏ ՄԸ

Կիմանանք, որ վերջերս Բարիզի մեջ վախճանած ողբացյալ Հովհանն Զավրիկի այրին, տիկ. նունե Ջավրին, ողբացյալին հարուստ մատենադարանը Խորհրդային Հայաստան զրկելու հայրենասիրական գեղեցիկ մտածումն է ոնեցած: Այս օրիուն երբ մեր հայրենիքը մշակութային եռուն կյանք մը կապրի և գաղութահայության

առջև կրացվի լայն ներգաղթի հեռապատկեր մը, ցանկալի պիտի ըլլար որ որիշներ ալ հետևեին տիկ. Զավրիկի օրինակին: Մանավանդ որ մատենադարան մը լավագույնս կրնա օգտագործվի հայրենիքի մեջ և համերժացնել նվիրատուին հիշատակը:

(«Միուրիւն» հունվ. 6 1946 թ.)

## „ԱՐՄԻՆԵԸՆ ԹՐԻՊՅՈՒՆ“

«Արմինեըն թրիպյուն»— անգլերեն էկվով Ամերիկահայ շաբաթաթերթ մըն է, որոն առաջին թիվը լույս տեսավ:

Իր առաջին խմբագրականին մեջ, ընթերցողներուն ներկայացնելով իր նպատակներու ուղեգիծը, «Արմինեըն թրիպյուն» ի, միշտ ալլոց կրու:

«Մենք հետեւքար պիտի մերկացնենք և պայքարինք ճնշման ու հետափմության գեմամենուրեք աշխարհի մեջ, և մասնավորապես ուր որ ան կապանա Հայ ժողովուրդի խաղաղությանը, ապահովությանն ու բարօրությանը:

«Որպես թերթ մը՝ որ հատկապես Ամերիկայի մեջ անգլերեն կարդացող հայերուն համար կհրատարակիվ, մենք պիտի քանանք այս երկրին՝ մեջ և արտասահման գտնվող հայոց ընկերակին, մշակութային և քաղաքական գործունեությանց պատկերը ներկայացնել լիովին և ճշմարտորեն: Մենք պիտի շանանք նաև մեր դեռատի ընթերցողները հետաքրքրել և զաստիարակել մեր ժողովրդի պատմությամբ և մշակութով. որպեսզի անոնք կարենան հանգամանորեն դիտակցել իրենց ազգային ժառանգությունը: («Արքեր» հունվ. 8 1946 թ.)

## ՇՆՈՐՀԱԼԻՆ

Ներսիս Շնորհալիի «Ճիսուա Որդի»-ն անգլերեն թարգմանած է շափական արվեստով ձեն Ս. Վինկելիթ, նախկին միսիոնարուհի մը, հայոց մեջ ծնած ու մեծացած, հայ լեզուն սիրող և հետևող դպրության: Այս թարգմանությունը, որ արդյունք է տարիներու աշխատանքի, շուտով լույս պիտի տեսնե և պիտի ըլլա գեղատիպ ու լաթակապմ:

Ի գնահատություն ձեն Ս. Վինկելիթի երկար տարիներու ծառայության, իբր գասահարակ հայ պատանիներու և կարող

## ԱՆԳԼԵՐԵՆ

թարգմանիչ մը հայ գրական գործերու ու ժողովրդական պատմվածքներու, որոնցմեծ մեկ մասը լույս տեսած է ամերիկայն պարբերաթերթերու մեջ, հանձնախոսումը մը կազմված է այդ թարգմանության ծախքերը հոգալու համար:

Ձեն, Ս. Վինկելիթի ամուսինը, հանգույցյալ Հենրի Ք. Վինկելիթ, ծանոթ է Կեսարիո հայոց իր քաջարի կեցվածքով 1895-ի Կեսարիո կոտորածին ու տարագրության շրջանին:

(«Ալիք», մարտ 29, 1946 թ. Թեհրան)

## ՍԱՐՈՅԱՆ ԱՐԱԲԵՐԵՆՈՎ

Ժողովրդական «Ռիուայիսթ էլ Կելպ» Մատենաջարը լույս ընծայած է Ուիլերմ Մարոյանի «Մարդկային կատակերգու-

թյուն» գրքի արաբերեն թարգմանությունը, կատարված Խամայիլ Քամելի կողմին:

(«Ալիք», մարտ 29, 1946 թ.)

## Կ Ի Պ Ր Ա Հ Ա Յ Ք Ր Ո Ն Ի Կ

Մեծն թրիտանիո պատկանյալ Կիպրոս կղզին մեջ կապրին շուրջ 4000 հայր, ուրունք իրենց հայրենասիրությամբ ու եկեղեցափառությամբ ծանոթ են բոլոր հայ դպրություն։

Միջին դարերում, երբ դրացի Կիլիկիո մեջ գոյություն ուներ Հայկական թագավորություն մը, ամբողջ 295 տարիներ (1080-1375), ստեղ Կիպրոս կայցելելին կաթողիկոսներ, եպիսկոպոսներ, վարդապետներ ու քահանաներ, Զանազան առիթներով Կիպրոս այցելած էին նույնիսկ հայ թագավորություն ու իշխաններ, որովհետև Կիլիկիո վերջին 4 հայ թագավորները խնամիական կապ հաստատած էին Կիպրոսի Գրանսիսացի արքայական «Առաստինյան» տան հետ, նույնիսկ Կիպրոս կղզին հայկական թագավորության տվավ արքաներ, որոնց վերջինն էր Առողջ. Լուուինյան (1374-1375), որ եղավ Հայ Ազգին վերջին թագավորը, Անոր վախճանումն վերջ, որ տեղի ունեցավ 1393 թվականին, Բարիզի մեջ, Կիպրոսի թագավորները մինչև 1489 թվականը անվանապես կոչվեցան «Հայաստանի քաջավորներ»։ Հասկանալի է, անշուշտ, որ «Հայաստան» այստեղ կնշանակե «Կիլիկիա»։

Մինչև 15-րդ դարը Կիպրոսը ուներ եղիութիսկոպոսական թեմ ու մի քանի հայագյուղեր։ Եկեղեցական առաջին կազմակերպության կենտրոնն էր, Ֆամակուտա քաղաքին հայոց «Կանչուոր Սուրբ Աստվածածին» վանքը, ուր Ներսես Լամբրոնացի այցելած էր Հոնարեն լեզուն սորվելու համար։ Այս վանքին կիսավեր եկեղեցին այժմ հայոց տրվեցավ ու մոտ ատենին պիտի բարեկարգվի։

Այժմ Կիպրոսի թեմը չունի իր առաջնորդը, Գլխավոր եկեղեցին նիկոսիո «Սուրբ Աստվածածին» եկեղեցին է, որ նախապես լատինական տաճար մըն էր, ու կկոչվեր „Notre dame de Tige“։ Կիպրոսի մյուս գլխավոր քաղաքներեն՝ Լարնաքայի ու Լիմասոլի մեջ գոյություն ունեն եկեղեցիներ։ Խաշակիր երկու քահանա հայեր, այժմ կ պաշտոնավարեն Կիպրոսի մեջ։ Մին նիկոսիա, որուն հոգևոր հովիվն է Արժ. Տեր Խորեն Ա. քահանա Գուպիլյան, իսկ երկրորդը լարնաքա, որուն հոգևոր Հովիվն է, Արժ. Տեր Գրիգոր Պետրոսյան, Երկու քահանաները բարեկարատ քարոզիչներ են «Հայ եկեղեցվոր սկզբնավորությունը և հայ վանականությունը», «Հայաստանի քաղաքական և եկեղեցական պատմությունը Աշոտ Ա.-ի և Սմբատ Ա.-ի օրոք»։

Կպատկանի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության) անհրաժեշտորեն պետք ունի եպիսկոպոս առաջնորդի մը, շատ մը պատճառներով։ Թեմին վերջին առաջնորդը եղած էր Պետրոս Սարացյան Սրբազնար, որ վերջին եղած էր կաթողիկոս Տանն Կիլիկիո։

Նիկոսիային քիչ մը հեռու կպտնվին «Մելքոնյան կրթական հաստատության» հոյակապ շենքերը։ Այս կարևոր հաստատության վերջին ընդհանուր տնորենը եղած է Տոքտ. Հակոբ Թոփճյան, որ սեպտեմբեր 15-ին (1945) Կիբանան մեկնեցավ, ինչպես որ կիմանանք Ն. Ս. Օ. Կիլիկիո վեհափառ Գարեգին Ա. կաթողիկոսին հրավերին վրա։

Տոքտ. Հ. Թոփճյան, ջրչանավարտ եղած էր էջմիածնի Գեւազյան ձեմարաննեն, ուր Խրիմյան Հայրիկը ու ուսուցիչները մեծապես գնահատած էին զինք, իբր մին այն բազմաթիվ ուսումնատիպ երիտասարդներն, որոնք գիտության ծարավի ըլլալով փութացած էին եվրոպական քաղաքակրթության ուստանները։ Իր մասնադիտական բարձրագույն ուսումը շարունակելու համար գնաց Գերմանիա (1899-1904) ու Հալեի հոչակավոր համալսարանին մեջ ուսանեցավ փիլիսոփայություն, պատմություն, մանկավարժական գիտություն, լեզվաբանություն ու նույնիսկ աստվածաբանություն։ նույն համալսարաննեն ստացավ, «Տոքտոր փիլիսոփայության» ու «Մագիստրոս Գեղեցիկ դպրությանց» տիտղոսները։ Տոքտ. Հ. Թոփճյան աշխատակցած է բազում հայերեն պարբերաթերթերու, սկսելով էջմիածնա «Արարատ»-են ու Թիֆլիսի «Արձագանք» հռուր դարձ թերթերն, Աշխատակցած է նաև գերմանական թերթերուն ու միշտ լույս ընծայած է պատմագիտական հրաշալիքներ։ Ունի գերմաններեն լեզվով գրված մասնավոր ուսումնասիրություններ ու գրքեր։ Ասոնցմեն կարևորներն են «Հայ եկեղեցվոր սկզբնավորությունը և հայ վանականությունը», «Հայաստանի քաղաքական և եկեղեցական պատմությունը Աշոտ Ա.-ի և Սմբատ Ա.-ի օրոք»։

Տոքտ. Հ. Թոփճյան, Կիպրոսի «Մելքոնյան կրթական հաստատություն» ծառայած է ուժը տարիներ, ու իր օրերուն, հաստատությունը բարձրացած է երկրորդական վարժարանի։

## Ա. ԷՇՄԻԱՇՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Հոգևոր Ճեմարանը հայտարարում է ընդունելություն 1-ին և 2-րդ կուրսերի 1946—47 ուս. տարվա համար:

Առաջին կուրս կարող են ընդունվել 7-րդ, 8-րդ դասարանի կրթություն ունեցող տղաները, իսկ երկրորդ կուրս՝ 9-րդ և 10-րդ դասարանի կրթություն ունեցողները: Առաջին կուրս ընդունվողները ենթարկվում են քննությամբ հետևյալ առարկաներից: —

Հայոց լեզու (բանավոր և գրավոր), ուսուաց լեզու (բանավոր և գրավոր) և մաթեմատիկա:

Երկրորդ կուրս ընդունվողները՝ (բացի վերոհիշյալներից) նաև Հայ ժողովրդի պատմությունները, ՍՍՌՄ-ի Կոնստիտուցիա և անգլերեն:

Իսկ լրիվ տասնամյա ավարտածները՝ միայն Հայ եկեղեցու պատմությունից:

Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է, ուսանողներին արվում է ձրի կրթություն և ամեն հարմարություն (հագուստ, սննդ, գրենական պիտույք, անկողին):

Դիմումներն ընդունվում են մինչև օգոստոսի 21-ը ամեն օր ժամը 9—14-ը: Դիմումի հետ պետք է ներկայացնել 1) ինքնակենսագրություն, 2) ուսման վկայական, 3) ծննդյան վկայական, 4) 3 լուսանկար (3×4), 5) առողջության և ծաղկեցածության պատվաստման վկայական:

Քննությունները սկսվելու են օգոստոսի 26-ին:

Դիմումները արվում են Հոգևոր Ճեմարանի վերատեսվությունում (անձամբ կամ փոստով):  
Հասցեն՝ Էջմիածին, Հոգևոր Ճեմարան:

## Խ Մ Բ Ա Գ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԲԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ  
ԵՎ ԲԵ ԱՐՏԱՍԱՀԱՆԻՑ

Խ Մ Բ Ա Գ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Ա Յ Ե Ն

ՀԱՅԱԿԱՆ ՍՍՌ

Էջմիածն, „Էջմիածն“ ԱՍՍԳԴԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմանական ԽՍՀ, Էջմիածն, Ռեդակցիա աշխատանքական հայոց պատմությունների համար

Redaction of the magazine „Echmiadzin“, Armenia, USSR

Պատվիր 990

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. վարչության  
№ 2 տպարան, Երևան

Ա Բ Ի Պ Ե

Էջ 53-ի ձախ սյունի ներքեմից Հաշ-  
պած 10-րդ տողում տպված է.—  
Քը և ազգի դավաճանների սև անունը  
(տես

Պետք է լինի.  
բր, ժառանդելով Համիլտոնս Համիլ-  
տոնից Հալրենիքի և ազգի դավաճան-  
ների սև անունը (տես